№ 4 (222) XXII ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Armeniénne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԵՓՐԵՄ *EFREM*

ԵՓՐԵՄ

Ամենավառ ճրագն էր, որ մարեց Իրանի գորշ հորիզոններում, և գիշերն իջաւ երկրի վրայ — մռայլ, անաստղ, գերեզմանային գիշերը։

Մահւան զօղանջն անցաւ, ռումբի աղէտաւոր որոտի պէս, Պարսկաստանից դէպի հայկական ամենահեռաւոր վայրերը, և բոլոր սրտերը ճմլուեցին, բոլոր աչքերը շշմոլոր, ապշահար հայեցին իրենց շուրջը, որպէս մի վատ, անողորմ երազի մէջ, մի անհաւատալի և սոսկալի անակնկալի հանդէպ։ Որովհետև Եփրեմը թեւում էր անմահ, որովհետև ազատ, մարտնչող Պարսկաստանը աներևակայելի է առանց Եփրեմի...

Բօթը կանգ չ'առաւ Արևելքի սահմաններում։ Նա գնաց դէպի լուսաւոր աշխարհի բոլոր կողմերը՝ ծանուցանելու ազատասէր և ռամկավար մարդկութեան, որ մի անսովոր մարդ է գերեզման իջնում, մէկը կլասսիկ և տիպար-հրամանատարներից, որոնց նմանները խիստ սակաւ են ծնունդ առնում ժողովուրդների ծոցից...

„Արևելքի Դանտօնը" — ասացին ոմանք։ Հայկական Գարիբալդի, Կրոմվէլ, Բօնապարտ — ասացին ուրիշները։

„Իրանի ճակատագիրը անդարմանելի հարուած կրեց" — ասացին ոմանք։

„Իրանը կորցրեց իր ամենամեծ մարդուն, նրա միջազգային կացութիւնը վտանգի մատնուեց" — ասացին ուրիշները։

Եւ բազմաթիւ յօդուածներ, և խանդավառ ներբողներ, և ցաւագին ափսոսանք... Ամբողջ համաշխարհային մամուլը։

Պարսկաստանը, այո՛, կորցրեց իր մեծագոյն ռահվիրային և նրա առջև մէկէն ի մէկ բացուեց անայտութեան մութ անդունդը։ Քանի՞ անգամ նրա մանուկ ազատութիւնը տագնապի ու կորստեան վիհն էր հասել — և ամեն անգամ Եփրեմը հանդէս է եկել, իբրև փրկութեան խարիսխ, իբր ազատարար հրեշտակ։ Քանի՞ անգամ ռէակցիայի վայրենի խոժոռուժը նեղն է գցել սահմանադրական կառավարութիւնը — և ամեն անգամ նա կոչ է արել հայ ռազմավարի բազուկին և ուղեղին...

Ոչ ոք, սակայն, չի կարող այնքան ուժով զգալ, ապրել այդ սխալուոր կորուստը, ինչպէս հերոսին ծնունդ տուող ժողովուրդը և կուսակցութիւնը։

Մի ահագին ստուեր իջաւ հայկական կեանքի վրայ, մի ահագին ճեղք բացուեց „Դաշնակցութեան" պատնէշի մէջ։

Ամենից շատ մենք էինք թերահաւատ... Ընդամենը մէկ շաբաթ էր, ինչ ստացել էինք իր լակոնիկ հեռագիրը։

„Սալար Դօվլէի դէմ ղրկուած կառավարական առաջին բանակը ջախջախուել է, Սալար Դօվլէն սպառնում է Համադանին, այսօր գնում եմ նրա դէմ"...

Գնում էր պատերազմի դաշտ։ Յոռետեսութեան մի շեշտ կար մեր թանկագին ընկերոջ այդ վերջին հեռագրի մէջ. ասես արդէն գուշակում էր գալիքը։

Գնաց, յաղթեց և յաղթուեց... Զոհ գնաց իր յաղթանակին, իր դանտօնեան յանդգնութեան։

„Եփրեմը անհամբեր առաջ է նետւում և իսկոյն զարնուում" — այսպէս է հեռագրում մեզ Հ. Յ. Դաշնակցութեան թեհրանի մարմինը։

Ինչպէ՞ս հաւատայինք հեռագրական գործակալութեան։ Առաջին անգամը չէր, որ լսում էր այդ մահագոյժը։ Մի քանի անգամ տարածուել էր նա — և հերքուել։ Ինչպէ՞ս հաւատայինք... Իրանի ռազմադաշտերը այնքա՞ն անգամ հիւրընկալել էին անզուգական ռազմիկին, այնքա՞ն գոռ ու վտանգալի արկածների էր հանդիպել նա — և ամեն անգամ ճողոպրել էր յաղթանակի շքեղ դափնիներով... „Կը ճողոպրի և այս անգամ — մխիթարում էինք ինքզինքնիս — Եփրեմը չի սպանուի, Եփրեմը անխոցելի է"...

Վաղուց ժողովրդական հիպերբոլիկ լեղուն ուել է նրան այդ ածականը։ Վաղուց, դեռ առաջին իր յաղթական քայլերից, նա հոչակուել էր դիւցազնական, առասպելական գծերով։ Եւ ժողովուրդը չի խաբուում, նա զուր տեղը չի „դիւցազնացնում"։ Նրա բնազդը չափազանցնում է, բայց խպառ չի մոլորուում և չի կեղծում։ Նա սիրով հնարում է, բայց հնարում է ոչ բոլորը։ Վառուած երևակայութիւնը մէկէն ի մէկ — մի մարդու կամ մի անցքի ուժգին տպաւորութեան տակ — ստեղծում է „հրաշքներ", որոնց նա առաջինն է հաւատում անկեղծօրէն և որոնք վաղ թէ ուշ դառնում են մասամբ իրողութիւն։

Եւ հաւատը վարակիչ է։ Եւ միմիայն ժողովուրդը չէ, որ յափշտակուում է, լեգենդացնում։ Բոլոր նրանք — հայ և օտար — որ տեսել են հերոսին կուռ ատեն կամ խաղաղ կենցաղի մէջ, ընտանեկան, ընկերական օճախում, տրամադիր են օժտել նրան արտակարգ յատկանիշներով։ Բոլորն էլ — ինտելիգենտ և անուս — վկայում են, որ նա ոչ միայն կոչուած, տաղանդաւոր հրամանատար էր, ոչ միայն աներկիւղ, հերոսական մարտընչող, որ գիտէ կանգնել միշտ առաջին շարքերի մէջ, որ գիտէ անայլայլ վճռականութեամբ նետուել միշտ կուռ ամենաեռուն կենտրոնը, այլ որ նա միաժամանակ և աննման ռազմագէտ էր, օժտուած գործնական մի անվրէպ բնազդով, յօրինող պատերազմի լաւագոյն ծրագիրների, ժողովներում սակաւախօս, բայց խոհուն և ներհուն, նրա ճառերը հակիրճ, նրա խօսքը կտրուկ հեղինակաւոր և համոզիչ, ամենաբարդ խնդիրները

արագօրէն լուծող, ամենաբուռն վէճերը արագօրէն հարթող...

Գործի մ՚ըրդն էր, որ չէր սիրում երկարաբարակ վիճաբանել. ռազմի անյագ և անհանգիստ ոգին էր, որ շարունակ փնտրում էր նոր արկածներ ու վտանգներ. նա կեանքը վայելում էր այդ մահացու վտանգներում, գնդակների տարափի տակ, նա բախտը որոնում էր կռի ուրագանի և զէնքի ժխորի մէջ... Նա պէտք ունի անդադրում յոյզերի ու շարժումների, նրան պէտք են ազատ օդ, լայնածաւալ կրկէսներ՝ ըստ կարելոյն մեծ, ահեղ, նապոլէոնեան ճակատամարտներ մղելու համար։ Պատերազմի դաշտի վրայ նա դիւթական ուժ ունի. կրկէսը շնչում է նրանով, գետերն ու դաշտերը ժպտում են նրան՝ յաղթանակի յոյսերով, բանակը վառւում է, եղեքտրանում նրա ներկայութեամբ, տարածւում է խինդ ու բերկրանք, յաղթանակի վստահութիւն — և թշնամին յաճախ նրա անունը լսելուն, նրա հայեացքը տեսնելուն պէս՝ դեռ կռիւը չսկսուած, փախչում է սարսափահար...

Ահա թէ ում կորցրինք։ Այդ լայն ճակատը և այդ վսեմ, փայլատակող նայուածքը չունին ոչինչ լանկթամուրեան։ Գոռող, այո՛, և դժնդակ՝ ազատութեան թշնամու հանդէպ—այդ հայեացքի մէջ ցոլում է սակայն գաղափարային, ասպետական վեհանձնութիւնը. մոլեգին և ահարկու ռազմիկը մի մեղմ, բարի և հաշտարար ոգի էր, տոգորուած իր վսեմ պարտքի գիտակցութեամբ, ներշնչուած բացառապէս աշխատաւոր և տառապող ժողովրդի շահերով, որոնց և նուիրաբերել էր իր թանկագին կեանքը, պատանեկութեան օրերից ի վեր։

Հաշտարար ոգի... Քանի՞ անգամ կատարել էր այդ նուիրական պաշտօնը ազատութեան բանակում իսկ, պարսիկ, բախտիար հրամանատարների վերաբերմամբ... մի բիրտ ու ապերախտ միջավայրում՝ ուր գաղափարական, անշահախնդիր գործիչներին պէտք է փնտրել դիոգենեսեան լապտերով։

Դաշնակցական հրամանատարը իր մի բուռն կտրիճներով անշահախնդիր գաղափարայնութեան կրողն եղաւ մի քանի տարի շարունակ, այդ բարոյական ամայութեան մէջ։ Ազատագրել մի մեծ երկիր, որ հինաւուրց քաղաքակրթութեան որրաններից է, փրկել բազմամիլիոն մի ժողովուրդ ասիական վայրենի և սանձարձակ բռնապետութիւնից և շաղկապել երկու դարաւոր դրացիներին — հայ և պարսիկ, քրիստոնեայ և մահմեդական—համերաշխութեան, համաքաղաքացիութեան սերտ կապերով, կենդանի օրինակ տալ ամբողջ իսլամ աշխարհին, մասնաւորապէս Թիւրքիային,—ահա նրա մեծ նպատակակէտը և նրա տիրական բաղձանքը։

Գաղափարի ռահվիրայ — և համեստ ռահվիրայ։ Նա հեռու մնաց այլասերող գայթակղութիւնից, նրան երբէք չշլացրին դիրքը, պատիւը, տիտղոսը և այն ընդհանուր գինովութիւնը, այն խանդավառ ու մեծադղորդ ովսաննաներն ու յաղթական կամարները, որով ամբողջ մայրաքաղաքը դիմաւորում էր հերոսին՝ պատերազմի դաշտերից վերադառնալիս։

Պատի՛ւ մեր ֆէդայիներին։ Քիչ չեն նրանց շարքերում այդօրինակ տիպարներ մարդկային համեստութեան ու ազնուութեան, որ կրկնապատկում է նրանց արժէքն ու թովքը։

Եթէ Հ. Յ. Դաշնակցութեանը պատմականօրէն վիճակուած էր դուրս հանել բազմաչարչար ժողովրդի արգանդից բոլոր ռազմական կորովները ու հիւթերը և պատրաստել նրա ուրվանշ - ազատագրումը, ապա միւս կողմից, նրան վիճակուած էր այդ ռազմական տաղանդների հետ միասին հասունացնել ու հրապարակ կոչել ցեղի խորունկ ծալքերի մէջ մրափող ամենավեհ քաղաքացիական առաքինութիւնները, որոնք զարգարում և գեղեցկացնում են կեանքը։

Պատի՛ւ մեր ֆէդայիներին։ Ահա մի շքեղ պլէադ, մի փառահեղ բոլլք ուրիշ քաջերի, որ հանգուցեալ զօրավարի հետ երկար տարիներ վարել են ազատութեան դժուարին կռիւը և որ այսօր, նրա մահից յետոյ, շարունակում են նոյն կռիւը մեր անվեհեր քեռիի հրամանատարութեան տակ։ Շարունակում են, անգամ այնպիսի մի քաղաքական մթնոլորտում, ուր երկինքը բնաւ չի ժպտում, մասնաւորապէս հայոց դատին, ուր յոյսերը դեռ նոր փթթուած դալկանում են, թառամում, ուր արտաքին միջամտութեան խարազանը ցցւել է անողորմ ու սպառնական.. Ցեղերը շարունակում են իրենց կռիւը, ոգևորուած, անշուշտ, այն տարտամ յոյսով, թէ վաղ թէ ուշ իրենց ճիգերը կը պսակւին աջողութեամբ, թէ կը հասնի, վերջապէս, այն օրը, երբ ազատ ու անկախ Իրանը, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, կը տօնէ իր ներքին խաղաղ վերանորոգութեան տօնը։ Եփրեմը մեռաւ... գուցէ նոյն յոյսով։

Ցուզիչ մի բան կայ—և խորհրդաւոր, նշանակալի բան —այդ յամառ, երկարատև ու առաջապահ կռիւի մէջ, որ ստանձնել են մի բուռն հայերը տասնեակ միլիոնաւոր ազգաբնակութիւն ունեցող մի երկրում, ուր հայութիւնը մի փոքրաթիւ գաղութ է միայն...

Այդ գաղութ-ազգի շահերի անունով բեմ նետուեց հինգ տարի առաջ մեր անփոխարինելի ընկերը և անցքերի գոռ ու յարաճուն ալիքների վրայ աստիճանաբար բարձրանալով, դարձաւ մի ճշմարիտ, հոյատիպար ինտերնացիոնալիստ, հայ և պարսիկ ցեղերի մի զօրաւոր շաղկապ և նորագոյն Պարսկաստանի ամենամեծ գործիչ։

Ցեղի աւանդական կոսմոպոլիտիզմը —համաշխարհաքաղաքացիական բնազդը — միանգամ ևս երկնեց, ընծայելով մարդկութեանը իր փարթամ ծնունդներից մինը, ստուարացնելով շարանը մեծ, հոյատիպ գործիչների,

որոնք այլ և այլ երկրներում, այլ և այլ ասպարէզներում վաստակել են համաշխարհային հռչակ...

Եգիպտոս, Թուրքաստան, Պարսկաստան։

Նուբար փաշա, Լորիս-Մէլիքով, Եփրեմ...

***

Լռեց։ Զէնքի յաղթական շաչիւնը մարեց դառնութեան արցունքների մէջ, որոտընդոստ ծափերը տեղի տուին հանդիսաւոր ու պատկառոտ լռութեան։ Անողոք մահապատանը խլացրեց ամեն ինչ իր ցոչիտ կապանքներում...

Գնա՞ց անզուգական ռազմիկը, իր երիտասարդ փառքի դափնիներով ծանրաբեռնուած, իր երկու հայրենիքի գուրգուրանքով շրջապատուած։ Եւ այսուհետև, իբրև մի մեծ սուեր, մի հզօր ուրուական, կը շարունակէ գերեզմանից իսկ հսկել ազատութեան բանակի վրայ, քաջալերել, ոգևորել...

Եփրեմը մեռաւ. Պարսկաստանը պիտի ապրի՞...

ԵՓՐԵՄԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂԻԱԾ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



ԵՓՐԵՄԻ ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ, ՈՒՂՂԻԱԾ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ (ՄԱՀԻՑ 8 ՕՐ ԱՌԱՋ)

„Սալար-Դօվլէի դէմ ուղարկուած կառավարական բանակը ջարդուեց. Սալար-Դօվլէն սպառնում է Համադանին. այսօր գնում եմ նրա դէմ“։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՎԵՐՋԻՆ ՑԱՐԻԱՅ ԺԱԿԱՑԱՄԱՐՏՆԵՐԸ ԵՒ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ *)

(ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ)

Մինչև սեպտեմբեր 13-ը Սալար Դօվլէն որոշած է եղել իր բանակի մի մասը Ղում ուղարկել, Թեհրան արշաւելու համար։ Այդ իմանալուն պէս՝ կառավարութիւնը հրահանգում է Սարդար Ջաֆար բախտիարցուն՝ Սալար Դօվլէի դէպի Ղում շարժուող բանակի առաջն առնել։ Սարդար Ջաֆարը թշնամուն հանդիպում է Սավէհում, ջարդում է նրան և սեպտեմբերի 13-ին շարժւում է դէպի Շէմսաբատ։ Այդ լուրն առնելուն պէս՝ Սալար Դօվլէն իր զօրքը յետ է քաշում Նուբարանից դէպի Շահսէվան Սէնդի և սկսում է այնտեղ ամրանալ։

Մեծ բանակն էլ Եփրեմի հրամանատարութեամբ նոյն գիշերը ճանապարհւում է դէպի Շէմսէպատ՝ Սարդար Ջաֆարի հետ միանալու։

Սեպտեմբերի 14-ին վերջինը մի նոր ընդհարում է ունենում Սալար Դօվլէի բանակի մի մասի հետ և ջարդելով յետ է մղում նրան։

Սեպտեմբերի 14-ին Եփրեմի բանակը հասնում է Խանապատ։ Հանդիպում է Սալար Դօվլէի 600 հոգուց բաղկացած առաջապահ գնդին, որը առանց կռուի յետ է նահանջում դէպի Բաղը Շահ։

Նոյն այդ օրը Եփրեմի բանակին միանում է Սարդար Ջաֆարի բանակը։

*) Տես «Դրօշակ», № 2։

Մինչ մի կողմում կառավարչականները Նա-Ալի խանին Զարդում, փախցնում են, մի ուրիշ կողմի վրայ էլ Եփրեմի, Սարդար Բհատուրի և Սարդար Մոհթալեմի բանակը միացած կու

Թալանը դեռ բոլորը չէ։ Ամենաողբալին այն է՝ որ բախդիար ղեկավարների սահմանադրական լինելը ոմանց համար մեծ հարց է... Այսպէս օրինակ. կռիւների ժամանակ բախդիարցիներ՝ Սարդար Զանգի և Սարդար Ջաֆարի բռնած ընթացքը ցոյց է տալիս, որ նրանք աւելի շուտ միապետականներ են, որ նրանք իրօք Սալար Դօվլէի նպաստողներ են եղել և ոչ թէ նրա դէմ կռուողներ։ Վերը յիշած սարդարների և նոյնպէս բախդիարցի, սահմանադրութեան ջերմ պաշտպաններ՝ Սարդար Բհատուր և Սարդար Մօհթաշէմի միջև յարաբերութիւնները այնպէս էին լարուել, որ միայն Եփրեմի ներկայութիւնն է զսպել նրանց և արգելք եղել ընդհարումին։ Սարդարների այս յարաբերութիւնների մէջ մեծ դեր է խաղում, անշուշտ, և ա ն ձ ն ա կ ա ն ը։ Բախդիարցոց մէջ այդ լարած դրութիւնը ստիպել է Եփրեմին՝ միջոցներ ձեռք առնել՝ ընդհարումի առաջն առնելու։ Նա դիմել է կառավարութեան, որ Սարդարներ՝ Ջաֆարին և Զանգին ուղարկեն Քիրմանշահի կողմերը, իսկ Սարդար Բհատուրին և Սարդար Մօհթաշէմին ուղարկեն Ատրպատականի կողմերը։

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ա Ր Շ Ա Ւ Ը

Թաւրիզ, 1 մարտ

Մի քանի խօսք այդ արշաւանքի և նրա յարուցած տագնապի մասին։

Ցարական կառավարութեան երկրորդ 48 ժամեայ ուլտիմատումը և տարածուած այն լուրը, որ իբր թէ պարսիկ կառավարութիւնը մերժել է ուլտիմատումի բոլոր կէտերը՝ ելեքտրականացրել էր ամբողջ մթնոլորտը։ Երկրում գործող յեղափոխական տարրերը կառավարութեան այդ մերժումը ընդունեցին մեծ յափշտակութեամբ, դրա մէջ տեսնելով Իրանի ոտնահարուած իրաւունքների և արժանապատուութեան վերականգնումը։

Այսպիսի վայրկեանում բաւական էր մի կայծ միայն հրդեհը բորբոքելու համար, մի փոքրիկ առիթ, որպէս զի ներքուստ ամբարուած դժգոհութիւնը դուրս պոռթկար։ Եւ ռուս կառավարութիւնը չ՝ուշացաւ այդ առիթը ներկայացնել՝ նոր զօրքեր լցնելով Պարսկաստանի ծովափնեայ քաղաքներից Ռաշտ և Էնզէլի և այնտեղից առաջանալով Ղազուին և սպառնալով մայրաքաղաքին։

Այդպիսի մի կարևոր վայրկեանում, երբ երկրի անկախութեանն է վտանգ սպառնում, կենտրօնական կառավարութիւնը խիստ ողբալի պատկեր էր ներկայացնում։ — Մինիստրութիւն գոյութիւն չունէր, ռէգէնտը իր հրաժարականի վրայ էր պնդում, Մէջլիսը խօսելու, քննադատելու և հրաժարեցնելու մէջ միայն վարպետ, իսկ թագաւորը՝ մանուկ։ Էլ ո՞վ պիտի դիմագրաւէ վերահաս վտանգը։ Այսպէս կոչուած դիպլօմատիական մարմնի այս տխուր պատկերին, եթէ աւելացնելու լինինք և այն, որ երկրի փոքրաթիւ զինուորական ուժն էլ ex-շահի դէմ մղած կռիւների ընթացքում ջլատուած էր և ասպարէզի վրայ մնացել էր միայն Եփրեմը իր փոքրաթիւ և հաւատարիմ մնացած բախդիար ղեկավար ընկերներով, միւս կողմից էլ յեղափոխական տարրերի բաժան-բաժան վիճակը, ապա պարզ կը լինի ձեզ համար մեր երկրի մօտաւոր կացութիւնը այդ ծանր օրերին։

Ծրագրուած և յարատև պայքար պարսիկների կողմից անհնարին է յուսալ, որովհետև ոչ ոք ոչ ոքից տեղեակ չէր և միւս քաղաքներում մինչև իսկ յայտնի չէր թէ ինչ է կատարուում կենտրօնում և ինչ դրութեան մէջ էր այն։ Մի կերպ այս ցաւը գարմանելու համար, Եփրեմը միւս զինուորական ղեկավարներով մի 4 ժամեայ ուլտիմատում է ներկայացնում Մէջլիսին, որպէս զի սա անմիջապէս վերակազմէ մինիստրական կազմը քիչ աւելի լայն իրաւունքներով, նշանակէ նոր ընտրութիւն և մինչև նոր Մէջլիսի գումարումը, ազգու միջոցներ մտածէ ռուսական ուլտիմատումը հարթելու և փոխառութեան խնդրին վերջ տալու։

Այս անակնկալ հարուածը կարծես մի քիչ սթափեցնում է Մէջլիսին և նա սկսում է արուած պահանջներին բաւարարութիւն տալ. ի միջի այլոց նա ընտրում է նաև մի կօմիսսիա ռուսական ուլտիմատումը քննելու և ներկայ դրութեանը մի կերպ վերջ տալու։

Այս բոլորի հետ միաժամանակ ոկսում է նաև կռիւը։ Ռաշտում թիւրքերը հայ մարտիկների հետ մի փոքրիկ ընդդիմադրութիւն են կազմակերպում ռուսների դէմ։ Վիժում է, ի հարկէ, և ռուսները ամենայն բարբարոսութեամբ խեղդում են այն։

Հէնց նոյն օրը երեկոյեան (7-ի), Թաւրիզի ոստիկանատանը տեղի է ունենում մի փոքրիկ ընդհարում ռուս զինուորների և թիւրք ոստիկանների միջև, որովհետև ռուս զինուորները ինչ որ հեռախօսի լար ամրացնելու պատրուակով ուզել են ոստիկանատան կտուրը բարձրանալ, իսկ ոստիկանները կարծել են, թէ այդ պատրուակով ուզում են շէնքը գրաւել և չեն թոյլ տուել։ Այդտեղ սպանուում են երկու ոստիկան և մի ռուս տասնապետ։ 8-ի առաւօտեան ռուս զինուորներով շրջապատուած էին ոստիկանատունը և նրան մօտիկ գտնուող կառավարչական հաստատութիւնները, որպիսիք են նահանգապետարան, Անջուման և այլն։ Թիւրք ոստիկաններն ու կամաւորները աշխատում են զինու զօրութեամբ մաքրել փողոցները. դրանցից մի փոքրիկ խումբ էլ ամրանալով քաղաքի միջնաբերդում սկսում է այնտեղից ռմբակոծել ռուսաց բանակատեղին։ Ռուսները, որ երբէք չէին սպասում այդպիսի յանդուգն դիմադրութեան՝ գլուխները կորցնում են թիւրքերի ուժեղ գրոհից և ամբողջ օրը հազիւ են կարողանում այս ու այն կողմերում իրենց ցրած ուժերի խղճուկ մնացորդները հաւաքել։ Այդ օրը թիւրքերի յաջողութիւնը բացարձակ էր և ռուսները ահագին կորուստներ տալով յետ են մղուում ու կենտրօնանում իրենց բանակատեղին, որը գտնուում էր քաղաքիս ծայրի մի այգու մէջ։

Կռիւը նոյն յաջողութեամբ շարունակուեց մինչև ամսոյ 13-ը, որից յետոյ թիւրք կռուողները ընկճուած կենտրօնից տեղացող յորդորների՝ այն է թողնել կռիւը, որ կառավարութիւնը արդէն ընդունել է ուլտիմատումը իր ամբողջութեամբ, թողնում են միջնաբերդը և գրաւած դիրքերը ամբիճանաբար։ Սրանց ընկճելուց ռուսները իրենց ուժեղ զգալով՝ մի վայրագ կոտորած են սկսում բանակի շուրջը գտնուող թաղերում, որի անցնելով ձեռքները ընկած թիւրքին, առանց տարիքն ու սեռը նայելու։ Ռուսական նոր զօրքերի խուժման լուրը կատարեալ լքումն է առաջ բերում կռուողների մէջ...

Տգէտ խուժանը ռուսական այդ խստութեանց միակ պատճառը համարելով Անջուման և սահմանադրութիւնը՝ յարձակուում է Անջուման վրայ, ցրում այն, անդամներից Շէյխ Սալիմին ծեծի ենթարկում և ապա դիմում քաղաքը պաշարող Սամադ խանին (Սուլթան Դօվլէի), որ գայ և տէրութիւն անէ իրենց։ Նահանգապետը վախից ապաստանում է անգլիական հիւպատոսարանը։

14-ին արդէն նոր եկած զօրքերը մօտենում են քաղաքին, որը ղրկւել էր դիմադրող ուժերից և ռմբակոծելով ներս է մտնում։

Սկսւում է ռուսական զօրքի յատուկ վայրագութիւնների շարքը—ծեծ, ջարդ, կողոպուտ, բռնաբարութիւններ։ Չէ՞ որ քաղաքի բացարձակ տէրերն են, մարդիկ տէրութիւն են անում իրենց հասկացած ձևով։ Մինչև 17-ը այսպէս շարունակելուց յետոյ, 18-ից սկսւում են ձերբակալութիւնները և 19-ին քաղաքի կենտրօնում կախաղան են բարձրացնում 8 հոգու, քաղաքի ականաւոր հոգևորականներից, Անջումանի անդամներից և յեղափոխական գործիչներից։ Ինչպէս ռուսներն են վկայում, բոլորն էլ հերոսաբար են կախւել։ դրանցից մէկը մի 18 ամեայ պատանի, երեք անգամ կեցցէ սահմանադրութիւնը գոռալուց յետոյ իր ձեռքովն է անցկացնում իր վիզը, գահիճներից միայն մի բան խնդրելով, որ թոյլ տան իր հետ կախւող եղբօրը իր կողքին կախելու։ 19-ից մինչև 23-ը կախաղան բարձրացրին 20 հոգու, նախապէս կողոպտելով և գետնին հաւասարեցնելով դրանց տները և ամբողջ ընտանիքները թողնելով բաց երկնքի տակ։

Սամադ խանը, որ առաջին անգամ մերժել էր քաղաք գալ և միայն իր ֆարրաշներին էր ուղարկել, որոնք ռուսական դրօշակը թևերին կապած գահճի պաշտօն էին վարում, ամսի 20-ին իր շքախմբով, ռուսական դրօշակ պարզած մտաւ քաղաք և բազմեց նահանգապետական աթոռին։ Այն, ինչ չէր յաջողւել Նրան երկար ամիսների ընթացքում, այժմ յաջողւեց շնորհիւ ռուսական ուժի։ Սակայն ռուսները շարունակում են մնալ քաղաքի իսկական տէրերը և Սամադ խանն ու իր ֆարրաշները լոկ գործիքներ են նրանց ձեռքում։

Թեհրան, 3 մարտ

Դամղանի կռւում նահատակւել են չորս մարտիկներ և վիրաւորւել է մէկը։ Նահատակւածներն են՝ տաճկաստանցի Մկրտիչը (մի շատ քաջ տղայ) և պարսկաստանցիներ՝ Աստուր, Մաթէոս և Խանլար։ Նոյն կռւում վիրաւորւած են 8 պարսիկ մօջահիտ և մեռած մի տասնեակ։ Երկրորդ կռւի մէջ հայերից ոչ զոհ և ոչ վիրաւոր. պարսիկներից մի մօջահիտ, իմ բժիշկ օգնականը, որին ուղարկել էի բանակի հետ։

Դամղանի կատաղի կռւում վիրաւորւածը մեր Գիգոն է (Գրիգոր Սաղեանը), որ այսպէս ասած հրամանատարն էր կառավարական բանակի։ Գնդակը կպել է քթի վերի կողմից և աչքի տակով ոսկորների միջից անցնելով, դուրս է եկել ոչ ականջի տակից։ Վէրքը շատ վտանգաւոր լինելով, ինքս անձամբ ուղևորւեցի Դամղան։ Կռւին արդէն վերջացել էր. մի շաբաթ խնամեցի և կարելի է բացարձակ ասել, որ մահից ազատւեց։ Այժմ Թեհրան է և բաւական լաւ է։ Այդ սոսկալի կռիւը տևել է 22 ժամ և ամբողջ ժամանակ քաղաքի միջում։ Թշնամու դիրքը խիստ անառիկ էր։ Դամղանի կռւից մի շաբաթ յետոյ, բանակը շարժւեց դէպի Շահրուդ. ճանապարհին դարձեալ կռւի բռնւեց Դամղանից փախած և օտար թշնամիների հետ. 12 ժամ կռւելուց յետոյ, թշնամին անձնատուր եղաւ։ Այժմ բանակը Շահրուդ է և ես 4 օրից նորէն պիտի գնամ այնտեղ, խնամելու բազմաթիւ վիրաւորեալներին։

Թաւրիզ, 5 մարտ

Ես տեսել եմ ծանր ու վտանգաւոր օրեր ժողովրդի կեանքի ապահովութեան տեսակէտից, բայց այսպիսին չէի տեսած։ Պետրոս Մելիք Անդրէասեանի ձերբակալումը և կախաղան հանւիլը այնպիսի սոսկումն առաջ բերեց, որ նկարագրելը դժւար է։ Կարծես մարդիկ խելագարւել էին։ Ծնողը որդու առջև փակում էր դուռը, վտանգւածները քար չունէին գլուխ դնելու։ Այս դրութիւնը առաջ բերելուն գլխաւորապէս և մեծապէս նպաստեց ռուսական հիւպատոսարանում պատրաստւած պրովոկասիոնը... Որոշած էին հայկական ջարդ սարքել, դա կասկածից դուրս է... Բաժանն անցաւ... առ այժմ։

Սակայն, ո՞վ գիտէ, թէ ի՞նչ է կատարւում վարագոյրի ետև, ո՞վ գիտէ, թէ ինչեր են նիւթում այդ փոքրիկ ռուս պաշտօնեաների ուղեղները։ Պարսկաստանի վերջին դէպքերը բոլորն էլ ռուսական հիւպատոսարանի սարքած գործերն են։ Նրանք շարունակ „միջադէպեր" են հնարում՝ թոյլ չտալու, որ ռուս զօրքը քաշւի Պարսկաստանից։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԵՐՑԵՆ

(ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Նիցցայի շքեղ հանգստարանում, *Château*-ի տիրական և գեղանկար բարձունքների վրայ, Գամբետտայի գերեզմանից ոչ հեռու, մի համեստ, բրօնզէ արձան է



Հերցեն

կանգնած—մի կարճահասակ ծերունի, ռուսական դիմագծերով, որ ձեռքերը կրծքին ծալած, տխուր, վշտատանջ աչքերը գետնին է յառել և խորասուզւել ծով մտքերի մէջ... Ասես այդ չքնաղ երկնքի տակ համաշխարհային վիշտն է մարմնացնում ու որոճում. ասես այդ մշտածիծաղ դրախտի մէջ դեռ ողբում է իր սգաւոր հայրենիքի ողբը, դեռ տանջւում է նրա ազատութեան հսկայ և անմեկնելի առեղծւածով...

Առեղծւած — արդարև։ 100 տարի է անցել Հերցենի ծննդեան օրից, 60 տարի է անցել նրա քա-

բոզչական գործունէութեան առաջին օրերից—և այսօր տակաւին նրա խօսքը պահպանում է իր տխուր այժմեութիւնը, նրա ազատաշունչ քարոզը պահպանում է իր եղերական թարմութիւնը, նրա բազմաթիւ յօդուածները, նրա սրտայոյզ կոչ ու յորդորները դեռ ունին, տարաբախտաբար, իրենց գոյութեան իրաւունքը... Այսօր դեռ հարկ է զանգահարել մեծ աքսորականի բարձրաձայն „Կոլոկոլը", զանգահարել դեռ երկար, անդուլ, յարատև, որովհետև սլավոնական վիթխարի Համբը դեռ քնած է լեթարգիական մրափով, որովհետև 60 տարուայ ազատագրական քարոզը դեռ չի խռովել նրա մահաշունչ, ստրկական անգործութիւնը և բռնութեան խարազանը դեռ գործում է նրա անզգայ, համբերատար մէջքի վրայ՝ այն ժամանակ, երբ ամբողջ մարդկութիւնը, անգամ ասիական ճահիճ-աշխարհը, համակուել է սահմանադրական ու հանրապետական վերիվայրումների, յեղափոխութիւնների տենդով...

„Այժմ ուղեկցեմ Ձեզ դէպի մեծ ռուս յեղափոխականը" — շշնջում է ինձ ֆրանսիացի գերեզմանապահը, Գամբետտայի շիրմի առջև ինձ հետ երկար սպասելուց յետոյ

„Մեծ յեղափոխական" — այդպէս էլ անուանում են Հերցենին, թէ իր հայրենիք-Ռուսաստանում, թէ Եւրոպայում։ Բառը, սակայն, շատ էլ տեղին չէ, եթէ ըմբռնենք այն իր դասական իմաստով։ Հերցեն չ'եղաւ յեղափոխական մի Ռուսսոյի, մի Դանտոնի, մի Մառաֆինիի, մի Կոշուտի եղանակով։ Միապետական կարգերի հանդէպ նա չը բռնեց այն ժխտական և ոչնչական դիրքն ու ուղղութիւնը, որ յատուկ է բոլոր ճշմարիտ յեղափոխականներին։ Նա յետ մնաց իր խօսքով ու գործով նոյնիսկ իր հայրենակից „դէկաբրիստներից", մի Պէստէլից, մի Ռիլէէվից, որոնք 1825-ին, Ֆրանսիական Յեղափոխութեան շունչով բոցավառուած՝ փորձում էին զինուորական ապստամբութեամբ վայր գլորել անիծակուռ միապետութիւնը և հիմնել նրա փլատակների վրայ ժողովրդավար հանրապետութիւն... Հերցեն և յետագայ ռուս կարող իդէոլոգներն ու գործիչները ապացուցին, տարաբախտաբար, որ Պէստէլի այդ խանդավառ ու „արմատական" հոգեբանութիւնը մի հազուադէպ, վաղանցուկ և գրեթէ պատահական երևոյթ էր Ռուսաստանի լայնածաւալ յեղափոխական անապատի մէջ։ Ատելութիւնը, անհաշտ ու թունոտ ատելութիւնը դէպի միապետն ու միապետական կարգերը և դրա հետ շաղկապուած ըմբոստութեան, ապստամբութեան կրակը այն հեռաւոր ու յիշատակելի օրերից ի վեր, երբէք այլ ևս ծայր չտուեց՝ ոչ բանակի ու ժողովրդի մէջ, ոչ էլ գործող, քարոզող մտաւորականութեան մէջ. հին, կլասիկ յեղափոխութեան այդ „հրեղէն հոգեբանութիւնը" պաշարեց միայն անհատներին և ցանցառ ու հազուագիւտ խմբումներին,—նա դուրս մնաց զանգուածներից...

Այդ մոլեգին ատելութիւնը և այդ հրեղէն խառնուածքը միանգամայն օտար մնաց և Հերցենին, ռուսական մեծագոյն, տաղանդաւոր հրապարակագրին։ Նա „յեղափոխական" քարոզիչ եղաւ զուտ ռուսական եղանակով. նա հարազատ նմուշն եղաւ այն ինքնատիպ ու տարապայման հոգեբանութեան, այն երազուն և լաւատես իդէալիզմի ու ուտոպիզմի (ցնորականութեան), այն մեղմ, հաշտարար, անդարմանելիօրէն կրաւորապաշտ քաղաքականութեան, որ մատնել է գրեթէ միշտ և մատնում է այսօր ևս այդ զարմանալի ժողովուրդը յանձին իր առաջադէմ, „արմատական" գործիչների, տաղանդաւոր գրողների ու քարոզիչների և հարիւր միլիոնաւոր զանգուածների։ Հերցեն հանդէս եկաւ խորապէս համակուած այդ ցնորական գաղափարայնութեամբ, այդ լաւատես և կրաւորապաշտ իդէալիզմով ու ուտոպիզմով։ Նա ըմբռնեց „յեղափոխութիւնը" լոկ խաղաղ վերանորոգման, բարոյական ներգործութեան, լոկ խօսքի ու յորդորի ճանապարհով... „ի վերուստ" թափելիք մանանայի, բռնապետական „վեհանձն պարգևի" կերպարանքով. Եւ նա ուղղեց իր տենդոտ յորդորները... Ռուսաստանի միապետներին։ Նա ուղղեց նոյն յորդորները անգամ ազնվականութեան — այն քստմնելի, ժողովրդակուլ դասակարգին, որ եղել է միշտ բռնապետութեան ամենամաւոր պատուանդանը և որի նմանը դժուար է գտնել համաշխարհային պատմութեան մէջ։ Կոչերով ու յորդորներով, խօսքով ու խրատով՝ Հերցեն ուզում էր համոզել բռնապետական կարգերի այդ տիպար-ներկայացուցիչներին՝ որ յօժարակամ թողնեն իրենց հարստահարութեան ու կեղեքման խարազանը, երջանկացնեն ժողովուրդը, ազատեն բազմամիլիոն գիւղացիութիւնը ճորտութեան պատուհասից և այլն։

Եւ երբ Ղրիմի ազէտաբեր պատերազմից յետոյ ճորտութեան ամօթալի սիստեմը վերացաւ կայսերական մի հրովարտակով (1861 թ.), իբրև մի հաստատութիւն, որ հիմնական պատճառներից մէկն էր կրած պարտութեան և որի գոյութիւնը մշտնջենաւոր արգելք էր երկրի արդիւնաբերութեան զարգացման, տնտեսական, դրամական բարգաւաճման և զինուորական վերակազմութեան համար,—գտնուեցին միամիտ մարդիկ, որ վերագրեցին այդ խոշոր ռէֆորմը Հերցենի քարոզներին, թագաւորի վրայ ունեցած նրա խօսքի ազդեցութեան։ Եւ Լեվ Տոլստոյ—որ դարձեալ մի նմուշ է նոյն ռուսական ինքնատիպ „յեղափոխականութեան" — հիացմունքով ու ափսոսանքով էր յիշում Հերցենին. „Ափսոս, ասում էր, որ երկար չ'ապրեց. եթէ ապրէր, Ռուսաստանի զարգացման ընթացքը այլ ուղղութիւն կըստանար"...

Եւ այսօր Հերցենի ծննդեան 100-ամեակին, կագէտ Բոդիչեվ, իր բազմաթիւ համախոհների հետ կրկնում է Տոլստոյի այդ խօսքը, ինքն ևս հաւատալով, որ եթէ

Հերցեն քիչ աւելի ապրէր, Ռուսաստանը այլ ընթացք կը բռնէր, այլ կերպարանք կունենար ներկայումս... Այսինքն չէր առաջ գայ „Նարոդնայա Վոլիա"-ի և յաջորդների բռնի յեղափոխութեան քարոզը, չէին յայտնուի քաղաքական հրապարակի վրայ ռումբարձակ Ժելեաբովները ու Սպիրիդոնովները, չէին լինի անգամ այն թոյլ ու դժգոյն զանգուածային բռնկումները, ապստամբական այն հազուադէպ թռիչքները, որոնք „միայն գրգռում են իշխողներին և ամրապնդում հալածանքի ռէժիմը".. Չէր լինի այդ բոլորը.. որովհետև Հերցեն սոսկ իր գրչով ու խօսքով կը կարողանար ազդել բռնապետութեան վրայ, կը կարողանար պատրաստել ռուսական ընդհանրութիւնը խաղաղ վերիվայրումի ու նուաճումների համար...

Ահա դարձեալ մի պերճախօս ապացոյց նոյն ցեղային, բացասական, անդարմանելի հոգեբանութեան... Եւ գուցէ սխալ չէր լինի բացականչել. „քերեցէ՛ք ռուս ազատականին, ամենակարմիր յեղափոխականին —և դուք կը գտնէք իւրաքանչիւրի մէջ մի խոշոր դօղ տոլստոյականութիւն"։ Այդ դժբախտ գիծը կարմիր ժապաւէնով անցնում է ամբողջ ռուս յեղափոխութեան պատմութեան միջից։

Այդ բնորոշ, ցեղային տոլստոյականութեան մի այլ գիծն է—համբերողութիւնը դէպի ժողովրդի թշնամիները։ „Դրօշակ"-ի նախորդ տարեայ էջերում պատմել ենք արդէն մի քանի դրուագներ Ռուսաստանի վերջին շարժումներից, երբ տագնապի ամենավճռական վայրկեաններին ռուս յեղափոխականները, սոցիալիստները իրենց կողմն ունենալով ժամանակաւոր յաղթանակը, մի անըմբռնելի „վեհանձնութեամբ" խնայել են ծուղակն ընկած թշնամուն և դրա շնորհիւ քիչ յետոյ վիժեցրել յեղափոխութեան աջողութիւնը... մի հանգամանք, որ այսօր դառնացած սրտով խոստովանում են նոյնիսկ իրենք ռուս սոցիալիստները։

Համբերողութեան ու „վեհանձնութեան" գիծը նոյնպէս մասամբ գալիս է Հերցենից։ Վեհանձնութի՞ւն թշնամու հանդէպ, անգամ արիւնռուշտ, երդւեալ թշնամու... Հերցեն չէր համակրում Ֆրանսիական Յեղափոխութեան հերոսներին, տերրորիստներին, որոնք չէին կամեցել բարոյապէս ազդել, „համոզել" բռնաւորներին։ Բռնի յեղաշրջումներ չէր սիրում Հերցեն։ Նա յորդորում էր և իր լեհ բարեկամներին, յեղափոխականներին—1863 թուականի նախօրեակին—չդիմել ապստամբութեան։ Նա գերադասում էր դիմումներ անել ցարին ու ազնուականութեան։ 1855 թ. մարտ 10-ին Նա գրում է զգացւած, սրտառուչ նամակ Ալէքսանդր II-ին, ուր նուաստօրէն մատնացոյց է լինում գիւղացիների ազատման անհրաժեշտութեան վրայ և յայտարարում է, որ եթէ ցարը յանձն առնէ իրագործելու այդ ռէֆորմը և դրա համար ցանկանայ, որ Հերցենը լռէ ժամանակաւորապէս, դադարեցնէ իր ազատագրական քարոզչութիւնը, — նա պատրաստ է համակերպել և լռել *)։ Նամակն, ի հարկէ, պատասխանի չ'արժանացաւ։

Մի ուրիշ գիծ ևս գտնում ենք ռուսական շարժման ռահվիրայի մէջ, մի գիծ, որ դարձեալ այդ շարժման հարազատ սեփականութիւնն է, նրա ուրոյն, բացասական յատկանիշը։

Դա քաղաքական անտարբերութիւնն է, աւելի ճիշտ՝ անտարբերութիւնը՝ պետական կազմի ձևերի նկատմամբ (apolitisme) — մի հանգամանք, որ այսօր ցոլում է նաև ռուսական խոշոր ու գործօն յեղափոխական կուսակցութիւնների դաւանանքի և մանաւանդ տակտիկի մէջ։

Կատարեալ անտարբերութիւն Հերցենի մէջ՝ դէպի կառավարական սիստեմները... Հանրապետութիւնը նրա աչքում աւելի հրապուրիչ չէ, քան միապետութիւնը։ Ֆրանսիայի նուաճած հանրապետական իրաւակարգը նրա կարծիքով բարձր չէ նախնի ֆէոդալ-միապետականից և նոյնիսկ շեշտում է, „որ այդ հանրապետութիւնը նուաճելու համար չ'արժէր իսկ թափել ոչ միայն արիւն, այլ նոյնիսկ մելան"։

Որովհետև... դա „բուրժուական հանրապետութիւն է"։ Եւ Հերցեն մի գերագոյն արհամարհանք էր տածում դէպի արևմտեան այդ բուրժուական կեանքի „մեշչանութիւնը", գռեհկութիւնը. և նա խանդավառւած իր հայրենի ժողովրդի բազմահոչակ „առաքինութիւններով", երազում էր, թէ այդ ժողովուրդը իր բնածին կոմմունիստական սովորութիւններով ու բարքերով, իր „միր"-ի, „արտելի", համայնական կազմակերպութիւնների սիստեմով կոչւած է մի օր „ուսուցանելու", առաջնորդելու մեշչանական, բուրժուական Եւրոպային։ Դա ռուս „նարոդնիկների", ժողովրդասէրների ծանօթ հաւատամքն է, որ քանի գնում խորտակւում է իրականութեան արհամարհոտ և տրորող հարւածների տակ։

Հերցեն սիրեցեալ նահապետն է այդ չնաշխարհիկ նարոդնիկների, որոնք ահագին դպրոց ստեղծեցին Ռուսաստանի մէջ և որոնք մշակւած են նոյն հերցենեան ապաքաղաքական (ապոլիտիկ) հրահանգներով, նոյն դժբախտ քաղաքական անտարբերութեամբ, որի շնորհիւ այսօր տակաւին զուրկ ենք մնում հսկայածաւալ Ռուսաստանի մէջ սահմանադրական իրաւակարգի ամենատարրական երաշխիքներից...

Միջին ռուս յեղափոխականը, սոցիալիստը, սոցիալ-դեմոկրատը արիւն ու մարմին է դարձրել իր մէջ այդ աղետաբեր տրամադրութիւնը և այդ յաւակնոտ արհամարհանքը դէպի արևմտեան սահմանադրութիւնները, դէպի արևմտեան բուրժուականութիւնն ու „մեշչանութիւնը"... և այդ այն ժամանակ՝ երբ սեփական

*) Բառացի թարգմանում ենք „Բէյ"-ից, № 83։

հայրենիքը իր բազմամիլիոն ժողովրդով լողում է աշխարհի ամենախեղդուկ ճահճի մէջ, անկարող լինելով մի առնական ժեստ անելու և դուրս նետելու դէպի ազատ ու թարմ մթնոլորտ. այդ այն ժամանակ՝ երբ ժողովրդի ազատութեան համար գործելու կոչուած սոցիալիստ կուսակցութիւնները բռնել են ամենամութալի իրարամբաստանութեան տենդով, երբ անգամ Սիբիրի 400 բանտորական դիակների հանդէպ նրանք շարունակում են սնուցանել իրենց ներքին երկպառակութիւնը, շարունակում են դրա հետ միասին իդէոլոգիական ամուլ ճոռոմաբանութիւնները՝ մի քայքայուած, աւեր ու փլատակ եղած բանակի մէջ։ Եւ ի՞նչ զարմանք՝ որ մի Լիբկնեխտ վրդովմունքի գագաթնակէտին բացականչում է պրուսական լանտագում. „Ռուսաստանը Եւրոպայի ամենաբարբարոս երկիրն է“. ի՞նչ զարմանք՝ որ մի ուրիշը նոյն ցասումով համակուած, յայտարարում է, թէ „Ռուսաստանը Եւրոպայի մէջ է՝ միմիայն իր աշխարհագրական դիրքով“... Զափազանցութիւն կայ, անշուշտ, այդ ցասկոտ յայտարարութիւնների մէջ, բայց կայ և որոշ ճշմարտութիւն, որ դրժբախտաբար շատ քիչ է ազդում Ռուսաստանի բախտը որոշող կուսակցութիւնների մտայնութեան ու գործելակերպի վրայ...

***

Այո, անցեալ դարու 50-ական թուականներին արդէն ծայր էին տալիս նորաբողբոջ ազատագրական շարժման մէջ՝ մեր յիշատակած այդ մի շարք ձախորդ, բացասական գծերը — քաղաքական անտարբերութիւն, ուտոպիզմ, կրաւորականութիւն, բուն յեղափոխական քարոզի բացակայութիւն, „բուրժուական կարգերի“ ու „մշչանութեան“ արհամարհում և սեփական ուժերի անտեղի չափազանցում — որ տակաւին այսօր ևս գերակշռող են ռուսական կուսակցութիւնների մէջ։ Սակայն Հերցեն լոկ այդ ձախորդ գծերով չէ, որ ներկայանում է քննադատող աչքերի առջև։ Նա իրաւամբ մեծարւում ու փառաբանւում է իր երախտագէտ յետնորդների կողմից, իբրև ռուսական ազատ խօսքի հիմնադիրը և իբրև ռուսական բողոքի ամենամեծ, ամենահուժկու շեփորող-հրապարակագիրը։ Նա վօլտէրեան գրիչ ունի, սուր, կծու, ծաղրող և խարանող։ Իր մասնաւոր կեանքը դեռ շատ վաղ մշակել էր իր մէջ բողոքողի ու խարանողի այդ գծերը։ Դեռ մատաղ հասակի մէջ՝ իջաւ Նրա վրայ բռնապետութեան հարուածը, Նա աքսորւեց դէպի Սիբիրի սահմանները։ Վերադարձին՝ արդէն գիտակից ըմբոստ է, Նրան սկսում է խեղդել հայրենի իրականութիւնը և Նա նետում է ինքզինքը Եւրոպա։ Գալիս է Պարիզ 40-ական թուականներին, ծանօթանում է Պրուդոնի ու այլ հռչակաւոր յեղափոխականների հետ, նետւում է խանդավառութեամբ պարիզեան փոթորկոտ կեանքի ալիքները, աշխատակցում է սոցիալիստական թերթերին։ Ցունիսեան ջարդերից և միապետութեան նոր յաղթանակից յետոյ *), Հերցեն դուրս է քշւում Պարիզից, դառն հիասթափութեան մէջ, փշրուած յոյսերով, գնում է դէպի մի աւելի ազատ կայան, դէպի Լօնդօն։ Այնտեղ հիմնում է տպարան և լոյս է ընծայում 1857-ից — Օգարեովի, աւելի ուշ, Բակունինի աշխատակցութեամբ — իր հռչակաւոր „Կոլոկոլը“ (Զանգ)։ Ծանօթանում է այդտեղ, Լօնդօնում, աշխարհահռչակ յեղափոխական աքսորեալների հետ, — Մաձզինիի, Գարիբալդիի, Կոշուտի և ուրիշների։

Ահագին աղմուկ յարուցեց Ռուսաստանում ազատ խօսքի այդ առաջին ազդարարը, ահագին զարկ տուեց նա — Հերցենի թեւաւոր ու կրակոտ գրչի շնորհիւ — մտքերի սթափման գործին, մի յայտնի իրարանցում ձգելով նոյնիսկ կառավարական շրջանների մէջ։ „Զանգ“-ի հրատարակութեան 1857 — 1862 ժամանակամիջոցը պատմական, անմոռանալի մի շրջան է ռուս ազատութեան տարեգրութեան մէջ. մեծ աքսորականը, սոցիալիստ Հերցեն, նոր խօսք էր հնչեցնում իր ստրկացած հայրենակիցների ականջներին, — ազատութեան ու վերանորոգութեան խօսքը։ Նա գնում էր դէպի Ռուսաստանի բոլոր անկիւնները, հազարաւոր արձագանքներով շրջան էր անում կրթուած, լուսամիտ հասարակութեան մէջ, գործում էր իր ազդեցութիւնը նաև իշխող տարրերի վրայ, յարուցանում էր երկիւղ ու պատկառանք...

Այդտեղ է Հերցենի մեծ, պատմական նշանակութիւնը, իբրև ազատութեան մեծատաղանդ առաքեալի ու հրապարակախօսի։

Հերցեն, սակայն, չգոհացաւ լոկ լրագրային հրապարակախօսութեամբ։ Օժտուած խոշոր ընդունակութիւններով, տէր ահագին զարգացման, էրուդիցիայի, ծանօթ համաշխարհային գիտական-փիլիսոփայական գրականութեան՝ Նա շօշափում էր իր բազմաթիւ գրուածքների մէջ նաև ընդհանուր, վերացական բնոյթ ունեցող, հասարակագիտական խնդիրներ և այդտեղ, այդ ընդհանուր մարզանքների աշխարհում Նա արծարծում էր ռուսական սուբ'եկտիվիզմի ծանօթ թեզիսները. Նա ինքը, կարելի է ասել, հիմք էր գնում հռչակաւոր սուբ'եկտիվ դպրոցին, որի հիմնական խորհուրդն ու նպատակն է՝ կռիւ յանուն անհատականութեան, կռիւ յանուն մարդ-անհատի լիակատար ազատութեան՝ ընդդէմ այն բոլոր խոչընդոտների ու կապանքների, որ դնում են պետութիւնը, հասարակութիւնը, և սխալ, մոլար, ծայրայեղօրէն օբ'եկտիվիստ վարդապետութիւնները, որոնք առանձնապէս բարգաւաճում էին այն ժամանակ և որոնք հակւած էին զոհաբերելու անհատին յօգուտ ու յանուն հաւաքականութեան, հասարակութեան, պետութեան...

*) 1848-ին նուաճւած ֆրանսիական երկրորդ հանրապետութիւնը 1851-ին „պետական հարուածով“ փոխարինուեց Նապոլէոն III-ի միապետութեամբ։

Անհատի և հասարակութեան փոխ-յարաբերութիւնը, իբրև մէկը և թերևս դժուարագոյնը ժամանակակից ընկերաբանութեան՝ ամբողջ կեանքի ընթացքում զբաղեցրին սոցիալիստ Հերցենին—սոցիալիստ՝ ոչ իր դոքտրինով, վարդապետութեամբ, այլ միայն կծու, անողոք իր քննադատութեամբ, ուղղուած ընդդէմ բուրժուազական կարգերի։ Անհատի երջանկութիւնը պէտք է լինի առանցքը և վերջնական նպատակը հասարակական էվոլիւցիայի. անհատը — այդ կոնկրետ, շօշափելի էութիւնը՝ իր այլազան պահանջներով ու տենչանքներով պէտք է ստանայ, պէտք է նուաճէ հնարաւորութիւն՝ լիակատար ու բազմակողմանի կերպով զարգացնելու իր մտաւոր, հոգեկան, ֆիզիկական կարողութիւնները... Ահա այն մեծ թեզիսը, որ յետագայում աւելի հանգամանօրէն պիտի արծարծեն Լավրով, Միխայլովսկի և ռուսական սուբ'եկտիվիզմի այլ ականաւոր ներկայացուցիչներ։ Դա Շարիրներեան կոպիտ անհատապաշտութիւնը չէր, դա անհատի սանձարձակ, էգոիստական պաշտամունքը չէր, որ մտածում է սոսկ ետի հաճոյամոլ խորժակների և անզուսպ վայելքների մասին, արհամարհելով ամէն իդէալ և ամէն մի հեղինակութիւն, ոտնահարելով ուրիշ մարդկանց նոյնքան սուրբ իրաւունքները, ծաղրելով ու նշաւակելով „հասարակութիւն“, „բարոյականութիւն“, „գաղափար“, „պարտականութիւն“ և այլ նման „կուռքերը“...

Ընդհակառակը, Հերցեն, Լավրով, Միխայլովսկի, Զերնով, ամբողջ ռուսական սուբ'եկտիվիստ դպրոցը չափազանց բարձր է դնում իդէալները և նրանց հետ կապուած պարտաւորութիւնները, քարոզում է անդադար զրկանք ու զոհողութիւն, քարոզում է գրեթէ միջնադարեան նահատակութիւն յանուն իդէալի, ժողովրդի, հասարակութեան... Նա չի զատում անհատը հասարակութիւնից, չի տեսնում անտիթեզ, թշնամութիւն, հակադրութիւն այդ երկու կատէգորիաների միջև, չի հակադրում էգոիզմը ալտրուիզմին, եսը հաւաքականութեան, այլ միացնում, ձուլում է նրանց կեանքի միևնոյն ամբողջական յորձանքի մէջ, իբրև այդ կեանքի երկու տարբեր, հարազատ և հիմնական տարրերքներ—փոխադարձաբար լրացնող—երկուսն էլ հաւասարապէս ծանրակշիռ և անհրաժեշտ... եթէ, հարկաւ, ըմբռնենք էգոիզմը իր ազնուագոյն իմաստով, իբրև շեշտումն մարդկային անհատականութեան իրաւունքների ու պահանջների և ոչ իբրև ջատագովումն հակաընկերային, անասնական կրքերի ու թռիչքների։

***

Մի հարուստ, շքեղ անհատականութիւն, մի սուր ու մարակող գրիչ, մի խորապէս ինքնատիպ ոճ, որ թերևս մեծագոյնն է հեղինակի բնատուր օժիտներից, որ առատօրէն փռում է ձեր առջև գեղարուեստագէտ-հրապարակագրի այնքան փայլուն և հրապուրիչ էջեր, տարածելով ամենուրեք խանդավառումն ու ելէքտրացում. վերջապէս, մի ազնիւ, հայրենաշունչ մարանչող, որ թէպէտև չ'ըմբռնեց սկզբից շիտակ ու բաղձալի ճանապարհը, թէպէտ և չձգտեց մարդել իր հայրենի երիտասարդութիւնը բուն, դասական յեղափոխութեան միակ փրկարար հնոցի մէջ, այնուամենայնիւ մեծ, ահագին, արդասաւոր գործ կատարեց այն մռայլ ժամանակներում — իսկ մեծ մարդկանց պէտք է դատել իրենց ապրած ժամանակի տեսակէտից—առաջ բերեց մի շարժում մտքերի ու հոգիների մէջ, որ գնաց այնուհետև յարատեւ կոհակներով, մերթ ընդ մերթ դաւաճանեց իր սկզբնական խաղաղասէր պատգամներին, մերթ ընդ մերթ որոտաց ռումբի, ուժանակի սասանեցուցիչ բոմբիւններով, յղացաւ դժոխային և խելական դաւադրութիւններ, շանթահարեց, գետին փռեց արքաներ ու մինիստրներ, սարսափեցրեց աշխարհը մի չնչին փոքրամասնութեան հերոսական թռիչքներով, իդէալիզմի ու անձնուրացութեան շնաշխարհիկ պոռթկումներով, ճաքակեց և ճարակեց անհաւասար բաղխումների մէջ, թուլացաւ, ուժասպառուեց և ամբողջ տասնեակ տարիներով չքացաւ հրապարակից, ապա վերստին բեմ նետուեց մի ազէտաւոր պատերազմից նպաստաւորուած, նուաճեց ազատութեան մի քանի փշրանք և նորէն խորտակուեց ու խորասուզուեց ժամանակաւոր մոռացութեան ալիքների տակ, ուսկից նորէն դուրս կը լողայ վաղ թէ ուշ, ցաւոտ կեանքի հրամայական պահանջների հանդէպ, աւելի կուռ, ներդաշնակ, կազմակերպուած, աւելի հզօր և յաղթական։

Մ. Ղ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՇԱՒԸ ԵՒ ԹՒՒՐՔԻՈՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Վերջ)

V

(ԱՆԴՐԱԴԱՐԶՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ)

„Had it been possible to continue the Bagdad Railway to Adana sooner, that populous town would most likely not become the scene of horrible massacres and would not now lie in ruins“.

A. v. Gwinner
(The Nineteenth Century, June 1909).

„Եթէ հնար լինէր աւելի վաղ շարունակել Բաղդադի երկաթուղին դէպի Ադանա, այդ բազմամարդ քաղաքը չէր դառնայ սարսափելի ջարդերի թատր և այսօր ընկած չէր լինի աւերակների մէջ“...

Այսպէս է յայտարարում Լոնդոնեան հանդէսի մէջ Արտուր Ֆօն Գվիններ, Deutsche Bank-ի հզօր, ազդեցիկ վարիչը, որ վերջերս Բերլինում ներկայութեամբ Կայզերի և բոլոր դիւանագիտական աստղերի՝ կարդաց դասախօսութիւն Բաղդադեան գծի մասին, պարզեց հանգամանօրէն նրա ընդհանուր և մասնաւոր արժէքները։

Գուցէ չի սխալւում Ֆօն Գվիններ։ Արդարև, եթէ կամենանք վեր հանել երկաթուղային հսկայ ձեռնարկի գալոց հաւանական բարիքները, պիտի ասենք ամենից առաջ, որ նա էապէս խաղաղարար մի գործօն է Թիւրքիոյ այլատարազ և հակամարտ ցեղերի շրջավայրում։

Թո՛ղ նա լինի ստրատեժիկ, ռազմագիտական մի ուղի։ Թո՛ղ խաղաղութեան ձիթենիի մէջ թագնուած լինի ապագայ խօլ բաղխումների ու աշխարհակալութեան սպառնալիք... Յամենայն դէպս, դա հեռաւոր, աննախատեսելի ապագան է։ Իսկ առ այժմ՝ այդ վիթխարի ձեռնարկը իր անհաշիւ տնտեսական ու կուլտուրական հետևանքներով, անտարակոյս, պիտի նպաստէ նախ և առաջ խաղաղ ու հաշտ դրացիութեան ազգերի միջև, պիտի մեղմէ գոյութեան կռիւի բիրտ ու դաժան, անասնական ձևերը, պիտի ուղղէ միջցեղային հակամարտութիւնը դէպի աւելի մարդավայել, քաղաքակիրթ հանդիպումներ, պիտի փոխէ հետզհետէ թափառական բբրդերի, չէրքէզների, բեդուինների բնազդները, պիտի աջողէ աստիճանաբար ընտելացնել այդ սոսկալի խաժամուժը՝ նստակեաց, կուլտուրական մարզանքների, պիտի միացնէ նոյն ընդհանուր, արդիւնաւոր աշխատանքի մէջ երէկուայ և այժմեան մոլեգին հակոտնեաներին և անգամ ամենաբիրտ, մարդակեր նօմադներին, որոնք ի վերջոյ կըմբռնեն, որ այդ ազնիւ, ստեղծագործ աշխատանքը աւելի լաւ է, աւելի բանական, նպատակայարմար, քան թէ անվերջ, յաւիտենական իրարաջնջումը։

Շոգեշարժը, որ գիտէ հրահրել, կենդանացնել նստակեացին և որ տալիս է հնարաւորութիւն՝ ամեն վայրկեան կենտրոնացնելու ոստիկան զօրքերը—մի անդիմադրելի զէնք է նօմադի, թափառականի դէմ *)։

Ճիշտ է ասում Վիկտոր Բերարը... Ընդունելով, ի հարկէ, որ այդ ոստիկան զօրքը կը լինի միշտ համապատասխան իր կոչման, կ՚երթայ միշտ ճնշելու... ապօրինութիւնն ու անարդարութիւնը։

Ճիշտ է և Բերարի հետևեալ դիտողութիւնը.

Առևտուրը, որ ուղեկցում է շոգեկառքին, կրկնապատկում է ամեն բանի գինը և տալիս է աշխատանքին մի այնպիսի վարձատրութիւն, որպիսին երբէք չեն կարող տալ թալանը և խաշնարած կեանքը, առանց մեծ ռիսկի ու վտանգների... Մի քանի քրդական խմբեր, որ կառավարութիւնը բնակեցրել է լեռներում, Եփրատի և Կիլիկիոյ մէջև՝ դարձել են այսօր շատ լաւ ֆելլահներ։

Ալէքսանդր Ուլար, Թիւրքիոյ մէջ ճանապարհորդած և կացութեան իրազեկ նշանաւոր ֆրանսիացիներից մէկը, հետևեալն է գրում Բաղդադեան երկաթուղու առթիւ.

Ամենամեծ ձեռնարկը, որ ողնայարն է վերանորոգուող Թիւրքիայի և գալոց գերմանական ազդեցութեան շրջանի,—դա Բաղդադի երկաթուղին է... Այդ գծի բարեբար ներգործութիւնը այժմ իսկ արդէն երևան է գալիս անժխտելի կերպով։ Թէև գործառնութեան տնօրէնը, պ. Հիւգնէն գերմանացի չէ, այլ շվեյցարացի, ակներև է սակայն, որ ձեռնարկի կազմակերպութիւնը մասնում է զուտ գերմանական ոգի։ Թիւրք կառավարութիւնն արդէն ընաւ իրաւունք չունի խառնուելու երկաթուղային գծի գործերի մէջ։ Նա մէկ իրաւունք միայն ունի—պահպանել կայարաններում ժանդարմներ։ Ծառայողները և պաշտօնեաները աշխատում են բոլորովին գերմանական ձևով, թէև նրանց ահագին մեծամասնութիւնը բաղկացած է տեղացիներից — այլ և այլ ցեղերի ու կրօնների պատկանող — Թիւրք, յոյն, հայ և այլն, որոնք կարծես բոլորովին մոռացել են իրենց անհամաձայնութիւններն ու դժտութիւնները՝ այն գրեթէ զինուորական կարգապահութեան հանդէպ, որ պատաստել են գերմանացիք և որ նրանք հրապուրիչ են դարձրել՝ կանոնաւորապէս վճարուող լաւ ռոճիկներով։ Մարդիկ և համազգեստները մաքուր են. ծառայողների դիրքը վայելուչ, պաղարիւն ու համարձակ. ճշտապահութիւնը՝ կատարեալ։ Մաքսաւորներն իսկ զինուորական ձևով ողջունում են գնացքները...

Ընկերութիւնը հիմնել է ծառայողների համար մի յատուկ թօշակարկղ, որ մասամբ նա ինքն է ռնուցանում առատաձեռն նէրներով։ Ուրիշ միջոցներ ևս ի գործ են դնում՝ պահելու համար ծառայողներին իրենց պաշտօնում։ Այդպէս օրինակ, երբ որևէ ծառայողի, պաշտօնեայի աղջիկ ամուսնանում է մի այլ ծառայողի հետ, նա ստանում է բաւական չաղ մի օժիտ... Այդ միջոցը նպատակ ունի դրդել ծառայողներին՝ ամուսնանալու հենց տեղացի կանանց հետ, որոնք սովոր են կայարանական կեանքին, որոնց չի տագնապեցնում այդ կղզիացած վիճակը, հեռու մեծ քաղաքներից։ Կայարանների մօտ ձրիաբար դրուում է ծառայողների տրամադրութեան տակ մի որոշ հողաբաժին, բանջարեղէն ու ծաղիկ մշակելու համար... Ընկերութիւնը բաշխում է նոյնիսկ ծաղիկներ ու սերմեր և անգամ տալիս է սիրողներին փոքրիկ թռչուններ, սքանչելի քանարեակներ *)...

Ոմանք կը հարցնեն—շարունակում է Ուլարը—ինչո՞վ արդեօք կարող են օգտակար լինել գերմանական Weltpolitik-ին այդ ծաղիկները, քանարեակները, այդ պարտէզներն ու զինուորական ողջոյնները։ Բայց նրանք, որոնք պատել են համաշխարհային քաղաքականութեան մեծ ճամբաների վրայ, լինի Եգիպտոս կամ փոքր Ասիա, Տուրկեստան կամ Սիբիր, — նրանք գիտեն թէ ինչ աներևակայելի բարոյական ազդեցութիւն է գործում ազգաբնակութիւնների վրայ՝ հ ա կ ա պ ա տ կ ե ր ը այդ փոքրիկ, յստակ դրախտների, ուր կայ կարգ ու բարեկեցութիւն և այն մեղկ, անփոյթ, ազատ ու թշուառ գոյութեան, որի մէջ խորասուզուած են նրանք։

Այդ երկրներում, որ իրենց վաղեմի բարբարոս վիճակից ինչնելով՝ ընկել են մի անկարող վարչութեան շնորհիւ այդ լքաւեր վիճակի մէջ, մասնակցել են տնտեսական հիւծման և ընդհանուր մեղկութեան պատուհասին —այդպիսի երկիրներում շոգեկառքի բարերար, կազդուրիչ ազդեցութիւնը անհամեմատ աւելի ուժեղ է, քան թէ, օրինակ, Հնդկաստանում կամ Չինաստանում, ուր երկաթուղին ոչինչ չի կարող աւելացնել

*) Victor Bérard. Vers Bagdad. Revue de Paris, 1 Juillet 1907.

*) La Weltpolitik Allemande... La Revue, 1 Juin 1905.

ազգաբնակութեան անմիջական բարգաւաճումին։ Եւ այդ տպաւորութիւնը եւս առաւել ուժեղանում է, երբ—ինչպէս այդ տեսնում ենք Բաղդադի դծի վրայ—օրինակը տալիս են իրենք տեղացիք իսկ, որոնք դեռ երէկ գտնւում էին կիսաբարբարոս վիճակի մէջ, իսկ այսօր հանդիսանում են, որպէս համոզուած առաքեալներ կարգի և խղճամիտ աշխատանքի։ Այդ երկիրներում՝ երկաթուղային կայարանները ճշմարիտ օվազիսներ են, որ շահագրգռում են ոչ միայն եւրոպացիներին, այլ և—էականն էլ այդ է — տեղացիներին։ Քաղաքակրթիչ հոսանքը անուղղակի է, դանդաղ, հաղիւ նշմարելի, բայց նա բռնում է չարիքը արմատից։ Հարկ է ապացուցանել այդ ազգաբնակութեան, որ նրա դժբախտութիւնները բղխում են անկարգ, քաոսային աշխատանքի սովորութիւններից և որ իր վիճակի բարելաւման միակ միջոցը՝ իր կարողութիւնների խելացի շահագործման մէջ է...

Գերմանական երկաթագիծը յարութիւն կը տայ Փոքր Ասիային, ասում է միւս ֆրանսիացի հետազօտողը — Դելէզի.

Հայաստանը, Ասորեստանը, Բաբելոնը դուրս կը գան շուտով իրենց երկարատև քնից... Որպէս զի արիւնաբբու քիւրդը դադարէ քաղաքներն ու կարաւանները թալանելուց, որպէս զի թափառական արաբը այլ և հրացանի չբռնէ լաստափայտերը, որոնք իջեցնում են ապրանքները Տիգրիսի և Եփրատի ջրերով, որպէս զի թէ քիւրդը և թէ արաբը ազատ թողնեն ապարէզը մշակողի և առևտրի համար, բաւական է, որ երկաթուղին բերէ այնտեղ կանոնաւոր զօրք, որ նա միացնէ հսկողութեան բերդակները, յետ մղէ թափառականներին, պահէ նրանց մշտապէս անապատի աւազներում կամ լեռնային արօտներում։ Լոկօմոտիվի առաջին սուլոցի վրայ՝ դաշտերը պիտի ծածկուին հունձքով և բազարը պիտի լցուի առուտուրի ժիտորով։

Որովհետև այդ երկիրները արգաւանդ են։ Ամբողջ տարածութիւնը Հալէպից մինչև Մօսուլ եղել է դերազանցապէս բամբակի երկիր։ Մօսուլից է, որ երբեմն ստանում էինք մարմաշը։ Հայերը գործում՝ են Ուրֆայում (գերմանացի գործարանատէրերի ղեկավարութեամբ) այդ սքանչելի արևելեան գորգերը, որ գեղեցկացնում են մեր ցուցահանդէսները *)։

Ցայտնի է այդ դժբախտ քաղաքի արիւնոտ անցեալը.. 1500 հայերի ճարակումը հայոց վառուած եկեղեցու հրդեհի ու ծխի մէջ։ Հազարաւոր որբերին մեծ մասամբ ապաստանեցին գերմանացիք, սկսեց օգնութեան մի ընդարձակ գործ, որի հոգին էր Եօհաննէս Լեպցիուս։ Հենց որ խաղաղութիւնը վերահաստատուեց, այդ հարիւրաւոր այրիների ու որբերի զանգուածը գերմանական արհեստանոցներում համախմբուած, դարձաւ շուտով խթանը Արևելեան Ճարտարեստի մի կարևոր ճիւղի, գորգային արդիւնագործութեան, որին դեռ վերապահուած է մեծ ապագայ, շնորհիւ նորակառոյց երկաթուղու։

Տնտեսական կեանքը ամբողջ երկրում հսկայական թռիչք կ'առնէ։ Հայ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը դուրս է մնում այդ մեծ զարկերակի սահմաններից, այնուամենայնիւ, նա ևս կը կրէ անխուսափելի կերպով ընդհանուր յեղաշրջման անդրադարձումները։ Կենտրոնական գիծը հետզհետէ կ'արձակէ իր ճիւղերը այլ և այլ ուղղութիւններով, կը կապէ լքուած, կղզիացած կենտրոնները։ Առևտրի և արդիւնաբերութեան զարգացման հետ՝ կըսկսուին ազգաբնակչական շարժումներ. աւելի աշխուժ ու ձեռնարկու տարրերը կը տեղափոխուին կամաց-կամաց, կը կենտրոնանան խոշոր, եռուն գործառնութիւնների շուրջը և հայ տարրը, որ յայտնի է Արևելքում իր ձեռնարկու ոգով, իր գործնական ուժեղ բնազդով, որ գրեթէ միակ կուլտուրակիր (Kulturträger) տարրն է իր վայրերի, խայտաբղետ միջավայրում, մարսող արևմտեան քաղաքակրթութեան արգասիքների, օտար լեզուների ու սովորութիւնների — հայ տարրը, անտարակոյս, մեծապէս կը նպաստաւորուի տնտեսական գալոց հսկայ վերիվայրումով։ Նա կարող էր երկիւղ ունենալ գերման տարրի մրցակցութիւնից, բայց առ այժմ — և երկար ժամանակ—գերմանական գաղթականութիւնը չպիտի հաստատուի Փոքր Ասիոյ մէջ. Բերլինը Բ. Դրան պահանջումով, հրաժարուել է այդօրինակ ծրագիրներից։

Տաւրոսի լանջերից մինչև ծովի եզերքները — ասում է Բերար—երկաթուղին մի քանի օր շարունակ պիտի ճեղքէ բամբակի գրեթէ անընդհատ մի դաշտ... Եւ ձեռագործը շատ մօտ է, հմուտ, տոկուն, հմբերատար ձեռագործ, որ պէտք ունի միայն ապահովութեան, որպէս զի նորէն մաքրէ, մշակէ հայկական թագաւորութեան այդ հինաւուրց հողերը, ուր Տիգրան Մեծը կառուցել էր իր մայրաքաղաք Տիգրանակերտը...

Կիլիկեան — երկրագնդի ամենաարգաւանդ վայրերից մինը — լիառատ կը վայելէ երկաթուղու բարիքները. տնտեսութիւնը կը զարգանայ, կը բարգաւաճի։ Կոնիայից՝ գիծը պիտի ուղղուի դէպի Ադանայի դաշտը, ուր լեռնային հեղեղները ստեղծել են ամենաբերրի հողերի լայնածաւալ մի դաշտավայր, մի երկրորդ Եգիպտոս, ուր ցորենը և բամբակը գտնում են մի սքանչելի գետին։

Երբ կը փորուին Տաւրոսի տունելները, կը ձգուին կամուրջները և կը յաղթուին հարիւրաւոր այլ արգելքներ, երբ Տաւրոսից գահավիժելով՝ շոգեկառքը կը սլանայ դէպի Ադանա՝ այնտեղ նա կը միանայ Մերսինի երկաթուղուն, որ նոյնպէս այսօր գերմանացոց ձեռքումն է. այն ժամանակ լեռնադաշտից ցորենը, բուրդը, մետաղները առատութեամբ և դիւրութեամբ կը հեղհեղուեն դէպի Մերսին, դէպի ծով, և այնտեղից կը բարձրանան, հակառակ ուղղութեամբ, դէպի վեր՝ Եւրոպայից նաւերով բերուած ապրանքները։

Թիւրքիոյ հանրային աշխատանքների մինիստրութիւնը 1909-ին հրատարակած իր մի յիշատակագրի մէջ հետևեալն էր ասում Կիլիկիոյ մասին *).

Ադանայի և Մերսինի դաշտավայրը մինչև Սիս՝ ունի

*) Թէ ինչ կարող է դառնալ այդ երկիրը՝ վկայում է Թուրքեստանի օրինակը։ Վերջինը ոչինչ չէր արտահանում։ Ռուսները շինեցին անդրկասպեան երկաթուղին և այսօր ստանում են այդ երկրից 180 միլիոնի բամբակ։

Fr. Delaisi, L'Axe de la Politique Européenne, La Rexue, 1 Nov. 1907.

*) Քաղում ենք դօքտոր Թօրբախի գրուածքից՝ „Die Bagdadbahn.

առասպելական բեղմնաւորութիւն։ Նա յարմար է ամենայլազան մշակոյթների համար և մանաւանդ հացահատիկների ու բամբակի համար։ Այդ վերջինը կարևորագոյն է։ Երեք նշանաւոր դետեր ոռոգում են այդ դաշտը. Թարսուս-Չայ, Սեյհան և Ջէհան։ Չոր ամիսների մէջ—սեպտեմբեր, հոկտեմբեր—այդ դետերը այնքան ջրառատ են, որ կարող են գոհացնել դաշտի ոռոգման կարիքները։ Իսկ գարնան նրանք այնքան վարար են, որ հունձքի համար վնասակար ողողումներ են առաջանում։ Հարկ է, ուրեմն, մի կողմից ոռոգումի աշխատանքներ կատարել, միւս կողմից՝ ճահճային վայրերը ցամաքեցնել։

Անգամ իր այժմեան վիճակի մէջ—ասում է Ռոօրբախ—Կիլիկիոյ դաշտը բամբակի արդիւնագործութեան կարևորագոյն վայրն է ամբողջ արևմտեան Ասիոյ մէջ։ Բամբակի հունձքը Կիլիկիոյ մէջ հասնում էր՝

1904/05	 45,500	հակ
1907/08	 60,400	„
1908/09	 76,400	„
1909/10	 59,400	„
1910/11	 85,000	„

Ընթերցողը տեսնում է 1909/10 թուականի մէջ հունձքի խոշոր նուազումը։ Պատճառը Ադանայի կոտորածն էր, ասում է Ռոօրբախ. դաշտի հայ ազգաբնակութիւնը յօշոտուեց, հնձող, աշխատաւոր ձեռքերը պակսեցին և բամբակի արդիւնաբերութիւնը, որ աւելի ևս պիտի աճէր, բարձրանար—նուազեց պատկառելի տոկոսով։

Կիլիկիոյ դաշտն իջնելուց յետոյ՝ երկաթուղին նորէն պիտի մագլցէ լեռն ի վեր, յանգելու համար Եփրատին։ Ահագին աշխատանք կը թափի և այդտեղ, մեծամեծ ծախքեր կ'արուին խոչընդոտները հարթելու համար։ Այդտեղ՝ նոր տեսարան, նոր, աւելի բազմազան արդիւնավայր։ Երկաթուղու մի ճիւղ կ'երթայ դէպի Մարաշ, Փոքր Հայքի բազմամարդ կենտրոնը։ Այդտեղ ևս, ապահովութիւնը հաստատելով՝ վայրենի հրոսակների մշանջենաւոր սպառնալիքն ու երկիւղը փարատելով, ազգաբնակութիւնը, մասնաւորապէս հայ տարրը, կը նետուի բոլոր թափով տնտեսական յեղաշրջման հոսանքի մէջ և կարճ ժամանակամիջոցում կը վերակենդանացնէ այդ թշուառ, լքուած, թալանուած վայրերը։

Մի այլ ճիւղ կ'երթայ դէպի Այնթափ, ուրիշ կարևոր մի կենտրոն, ընկած ցորենի, գարիի, եգիպտացորենի, խաղողի, պիստակի ու թուզի դաշտերի մէջ։

Մի երրորդ ճիւղ կ'երթայ դէպի Բիրեջիկ, ուր դիմում են հայկական կարաւանները՝ Եփրատն անցնելու համար։

Ապա և—Հալէպը։ Գերմանական արշաւի մի այլ կարևոր նպատակակէտն է այդ ծանօթ շահաստանը, որ մի քանի տարի առաջ վերապահուած էր համաբուում Ֆրանսիային։ Ֆրանսիացիք ուզում էին Բէյրութ-Դամասկոսեան իրենց գծից մի ճիւղ տանել դէպի Հալէպ, ապա և շարունակել մինչև Եփրատ։ Բայց Բերլինն էր, որ սիրաշահեց Նըլդըզի մենաւորին և այդտեղ ևս վստակեց առաջնութեան արժանին։ Այդպիսով Հալէպն ևս այսօր գերմանական ազդեցութեան շրջանում է։ Եւ Թիւրքիոյ ամենահարուստ շահաստաններից մէկն է դա։ Այդտեղ են հանդիպում բոլոր ճամբաները, որոնք իջնում են հիւսիսում՝ հայկական Ցաւրոսից, արևելքում՝ Միջագետքից, հարաւում՝ Սիրիայից և այն ճամբաները, որ բարձրանում են Միջերկրականից, տանելով եւրոպական արդիւնագործութեան ապրանքները։ Այդտեղ, Հալէպ է, որ համախմբուում են տասնեակ հազարաւոր ուխտաւորները, որ ամեն տարի Պոլսից, Մօսուլից և Բաղդադից գալիս են, դիմելու համար դէպի Մեկկա։ Հալէպը իր 140,000 ազգաբնակութեամբ գերմանական գծի ամենահարուստ շահաստանն է, այդ գծի ամբողջ 2800 կիլոմետրի տարածութեան վրայ *)։

Այդտեղ ևս, այդ եզակի շահաստանում, հայ տարրը պիտի լինի տնտեսական և կուլտուրական շարժման աւանգարդի, առաջապահի մէջ։ Նա եղել է այդ պատաւաւոր դերի մէջ—մինչև օրս էլ։ Ինչպէս Մեծ Հայքի բարձրագագաթ լեռներում ու խորանդունդ կիրճերի մէջ—այդտեղ ևս իր մռայլ պատմութեան ամենահին օրերից ի վեր, այդ դարմանալի տարրը սնուցել է շարունակ փոխադրութեան ու փոխանակութեան երկայնաձիգ զարկերակները, եղել է միշտ առևտրի ամենագլխաւոր ազդակը, կարաւանային կեանքի ոգին... անգամ իր ամենամռայլ, ամենաարհաւրոտ շրջաններում, երբ ամեն մի քայլափոխում հանդիպել է բարբարոս և գիշատիչ նոմադներին, երբ ամեն մի քայլափոխում այդ կենսաբեր, կուլտուրատար կարաւաններին սպառնացել է յարձակման, թալանի ու կոտորածի վտանգը...

Իջնելով իրենց Ցաւրոսից—գրում է Վիկտոր Բերար—հայերը մշակել են լեռան վերջին գառիվայրերը, ինչպէս նաև դաշտի ծայրեզերը. ապա և, առևտուրը կանոնաւորելու համար, զարգարել են Միջագետքի ճանապարհը օթևաններով։

Նրանց (հայերի) շնորհիւ է, որ Հալէպը, իբրև Արևմուտքի մթերանոց (*entrepôt de l'Occident*) հաղորդակցում էր Մօսուլի հետ. իսկ վերջինը բազարն էր Հնդկաստանի և Պարսկաստանի...

Լեռնային ծերպերից անցնելով, հայկական կարաւանները մեծ շրջան էին անում Քիլիսի, Այնթափի, Ուրֆայի, Սեվերեկի, Դիարբեկիրի, Մարդինի, Ճեզրէի վրայով... Հանգրուանների, օթևանների մէջ հաստատուած էին հայ բազարներ, հայ վաճառականները հարստանում էին, ձեռք էին բերում շրջակայ այգիներն ու դաշտերը, ուր նրանք տեղաւորում էին վարձակալների պաշտօնով լեռից կանչուած իրենց ազգակիցներին։ Կոտորածներից առաջ պաշտօնական աշխարհագրութիւնը **) հաշուում էր՝ 10,000 հայ Հալէպի շուրջը, 2800 Քիլիսի, 4000 Այնթափի, 4500 Ուրֆայի, 3800 Սեվրեկի, 10,000 Դիարբեկիրի, 15,000 Մարդինի, 5000 Ճեզրէի շուրջը։ Դա հաստատուն հայ ազգաբնակութիւնն էր։ Այդ թուերը կրկնապատկուում, թերևս եռապատկուում էին հայ երկրագործ աշխատաւորների հոսանքով, որ ամեն տարի իջնում էր լեռից մշակութեան կամ հունձքի աշխատանքների համար. բացի այդ՝ կային և բազմաթիւ

*) *Delaisi, L'Axe de la Politique Européenne.*

**) Տես *Vital Cuinet, Turquie d'Asie.*

հայ ատանդական ուղևորները, որոնք անդադար շրջանառում էին բազարից բազար։ Պէտք է հաշուել մի 100,000 այդ „Կղզի"ի հայ ազգաբնակութիւնը, որ ապրում էր բուն Հայաստանի եզրներին։ Նրանց քանակը աճելով իրենց հարբասութեան հետ՝ թւում է թէ նրանք կոչուած էին մեծ դեր խաղալու Ասիայ խաղաղ զարգացման մէջ, քանի որ Մոսուլից անդին՝ նրանց յարաբերութիւնները կամ գաղութները, շարունակելով մինչև Բօմբէյ և Բուխարա, հանդիսանում էին իբրև առաջին սիւները այն բարեկամութեան կամուրջի (les premiéres piles du pont d'amitié), որ եւրոպական քաղաքակրթութիւնը մի օր պիտի ձգէ թիւրքական, քրդական և բեդուինեան վայրենութեան վրայից՝ դէպի արուեստագէտների ու բանաստեղծների երկիր Պարսկաստանը, կամ աւելի հեռուն՝ դէպի Հնդկաստանի ու Չինաստանի քաղաքակրթութիւնը։

.... Այդպիսով, „Կղզի"ի հայերը հաղորդակցութիւն էին հաստատել Փոքր Հայքի մեծ շուկաների (emporium) և Թաւրիզի, Թեհրանի ու Սպահանի հայկական մեծ բազարների միջև։ Պարսկաստանից դէպը՝ անգլիական հովանաւորութեան տակ նրանց կարաւանները գնում էին դէպի Աֆղանիստանի անցքերը և Ինդուսի դաշտավայրը, մինչ նրանց ազգակից ռուսահպատակ հայերը փոխանակում էին նրանց Կասպից ծովի նաւահանգիստներում ու Խորասանի ճամբաների վրայ... Նրանք հասնում էին չինական Թուրքեստանի դռներին, ուսկից մի ժամանակ հեղեղել է Թուրքական ու մոնղոլական բարբարոսութիւնը, ուր այսօր եւրոպական քաղաքակրթութիւնը գալիս է բաղխելու և գտնում է տասնուհինգ դարերի աւազների տակ Ալէքսանդրեան շրջանի յունաց կոթողներն ու յուշարձանները... Կիպրոսի ծոցից մինչև Պէչլիի ծոցը աշխատասէր ու քաջարուեստ մրջիւնների այդ յամրընթաց հոսանքը գնում էր ծակելու, փորփորելու ամբողջ Ասիան։ Այդ ցեղի տոկունութիւնը և ճկուն հնարագիտութիւնը, միացած օրինակելի սակաւապետութեան, ժուժկալութեան հետ՝ ենթադրածէն շատ աւելի շուտ կը կատարէին այդ տիտանեան գործը (Ասիայի փորփորումը, „ներթափանցումը")։ և այդ նախակարապետների ետևից մեր քաղաքակրթութիւնը առաջ կ'ընթանար առանց բռնութիւնների և սպանութիւնների...

Որովհետև այդ հայերը արդէն իսկ մերոնցից էին։ Նրանք գնում էին իրենց վաստակի մի մասը դպրոցների մէջ և բարեպատեհ մի հանդիպումով կաթոլիկ ու բողոքական միսիոնարները մրցում էին՝ գրաւելու համար հայերին, մարդելու նրանց՝ եւրոպական գաղափարների ոգով... Այդպիսով, Եւրոպայի և Ասիայի մէջտեղ՝ ստեղծւում էր եւրոպականացած ասիացիների մի ժողովուրդ (un peuple d'Asiatiques européanisés), որ ի դէմս ազգութեան ստւար մասի պահպանում էր վաղեմի կեանքը և ի դէմս իւրաքանչիւր հատուածի մտաւորականութեան՝ իւրացնում էր արևմտեան նորոյթների ճաշակը *)...

Պարիզեան գիտնականի այդ սրտառուչ էջերից յետոյ՝ այլ ևս հարկ չկայ ծանրանալու հայ տարրի խաղալիք տնտեսական և ընդհանուր-քաղաքակրթական դերի վրայ։

Առաջ գնանք Բաղդադեան ապագայ երկաթուղու գծով և դիտենք ճանապարհի հարստութիւններն ու ազգաբնակութիւնը։

Դիարբեկիրի շրջանը դեռ շատ հնուց յայտնի է իր պղնձի հանքերով. և չնայած մշակութեան նահապետական ձևերին ու հաղորդակցութեան ճամբաների բացակայութեան՝ այդ հանքերից մեծաքանակ պղինձ է գալիս դէպի Ալէքսանդրեթ և Սամսօն։ Ահա թէ ինչ է գրում այդ հանքերի մասին Վիտալ Կինէ իր համբաւաւոր գրուածքի մէջ *).

Արղանա Մադանի հանքը, գտնուած է տակաւին 1096 թուին։ Մինչև օրս յայտնի եղած շերտը մօտ 12,000 քառակուսի մետրի տարածութիւն ունի։ Հանքը հարուստ է պղինձով և որքան աւելի էջ խոր թափանցում, այնքան աճում է նրա պարունակութիւնը։ Միջին հաշուով հանքը պարունակում է 30 տոկոս պղինձ, 30 տոկոս ծծումբ և 40 երկաթ։ Առի չգոյէ ջարդող ու ծակող մեքենաների՝ հանքը գետնի տակից դուրս բերելով, կտրատում են մուրճի օգնութեամբ... Ուղտապանները տանում են հանքային ձուլածքը Թոկատի գործարանը, Սրվազի վիլայէթի մէջ, վերջնականապէս մշակելու և նրբացնելու համար... Փոխադրութեան ճանապարհները ընդհանրապէս անպէտք են, տեղտեղ անանցանելի...

Հայոց կոտորածը այդտեղ ևս ունեցաւ իր անդրադարձումը։ Ձեռագործը պակասեց, հաղորդակցութեան ճանապարհները աւելի ևս դժուարացան, անպէտքացան։ Բաղդատի գիծը կը գայ և նոր թռիչք կը հաղորդէ հանքային արդիւնագործութեան և Դիարբեկիրի շրջանը նոր հոչակ ու հրապոյր կըստանայ։

Ապա—Միջագետքը... Տիգրիսի և Եփրատի հսկայական աւազանը և մարդկութեան ու քաղաքակրթութեան մեծահոչակ որրանը։ Որքա՜ն յուշեր և թագնուած հարստութիւններ։ Դեռ ճնում են այդ հինաւուրց քաղաքակրթութեան հետքերը, հին, հոյակապ ջրանցքների ու ճամբաների գծերը, թաղուած ու մոլորուած դարաւոր բարբարոսութեան մոխիրների տակ.. Որքա՜ն այլազան ցեղեր են անցել են այդ խորհրդաւոր երկրի վրայից. քանի՜ վիթխարի ցիկլոններ, հրդեհող ու բնաջնջող արշաւանքներ... Ի՜նչ փարթամ կեանք ու մշակութիւն Բաբելոնում, Ասորեստանում..

Այսօր—լքում և ամայութիւն։ Աւազը, չոր կիզիչ, համատարած աւազը ծածկում է իր թանձրամած շերտերի տակ՝ ամեն ինչ։ Մի անեզր անապատ՝ սիրուն ու հրապուրիչ օազիսներով։ Ազգաբնակութիւնը՝ ցանցառ, կիսավայրենի, նահապետական։ Բեդուին և քիւրդ... Իսլամի միահեծան տիրապետութիւնն է իր նախնական և քարացած ֆորմուլներով։ Թափառական կենցաղի երկիրն է — թատերաբեմը մշտնջենաւոր բաղխումների, հօրդայական աւարատենչ արշաւների...

Անհուն գանձեր—շահագործելու։ „Սավադը", սեւահողը, որ բռնում է հսկայական տարածութիւն—այժմեան Իտալիայի չափ—սպասում է մշակութեան նորագոյն մեթոդներին, սպասում է նոր ջրանցքներին ու շոգեկառքի սուլոցին, սպասում է հաստատուն օրէնքի ու ապահովութեան ռէժիմին, որպէս զի վերականգնէ հին պանծալի շեմարանը, ցորենի, բրինձի և այլն, որ կարող է կերակրել մի քանի տասնեակ միլիոնաւոր մարդկութիւն... Հարկ է միայն վերաքանալ ու կատարելագործել նախնի դարերի ջրանցքները։ Իսկ անդին՝

*) Victor Bérard, „Vers Bagdad", Revue de Paris, 1 յուլիս 1907 թ.։

*) La Turquie d'Asie II v.

Տիգրիսի ձախ ափունքներում, Իրանեան լեռնաշղթայի ստորոտներին նաւթն է առատօրէն դուրս ժայթքում գետնի տակից և հոսում է ժայռերի միջից, ամբարւում է փոսերում։ Երբ — ասում է Վիտալ Կինէ — տեղացի աշխատաւորները կամենում են զարձութիւն պատճառել անցորդներին, նրանք նետում են լուցկին այդ նաւթային հորերի մէջ—և անմիջապէս բարձրանում է մութ, կարմրագոյն բոցը, շրջապատւած սև ծուխի մառախուղով։ Երկաթուղին նոր Բագուներ կը հաստատէ այդ լայնարձակ հողերի վրայ։

Ի՞նչ անհերևակայելի թռիչք պիտի առնեն արդիւնաբերութիւնն ու առևտուրը այդ վայրերում, ընդամենը մի 15—20 տարի յետոյ.. Կարելի է գուշակել մօտաւորապէս, հիմնւելով մեր կովկասեան Բագուի օրինակի վրայ։ Եւ ի՞նչ անսպառ աղբիւրներ՝ օսմանեան պետութեան ֆինանսների, նրա տնտեսական և ընդհանուր-կուլտուրական բարգաւաճման համար...

Այդպէս — կը վերածնւի ասիական Ցաճկաստանը. փլատակների փոշու տակից, մոռացութեան ալիքներից դուրս կը լողայ հնագարեան, զառամեալ Անատօլուն, Փոքր Ասիան իր պատմական թանկագին յիշատակներով, իր եզակի աշխարհագրական դիրքով, տարածւած հին աշխարհի երեք մեծ ցամաքների միջև — Անատօլուն՝ որ ծովերի շնորհիւ հաղորդակցում է միանգամայն Հնդկական Ովկիանի և Միջերկրական աւազանի հետ, որ գտնւում է մարդկային հոծ համախմբումների, այլազան հարստութիւնների և այլազան քաղաքակրթութիւնների կենտրոնում. Անատօլուն՝ գաղափարների ու հասարակութիւնների, կրօնների և քաղաքական սիստեմների հսկայական խանձարուրը, Քաղդէի, Բաբելոնի, Ասորեստանի, պարսկական, արաբական, հայկական, յունական, հռոմէական, բիւզանդական թագաւորութեանց դաւերի և արշաւների մշտնջենաւոր թատերավայրը, որ օսմանեան բազմադարեայ անորակելի ռէժիմի տակ չորացել է, ցամաքել, դարձել է աւերածի ու բարբարոսութեան սրտաճմլիկ մի տեսարան...

Քրդերի ու բեդուինների թափառական հորդաները խաղաղւած, ընտելացած կուլտուրական աշխատանքին, արիւնարբու չէրքէզը (նաև քիւրդը), սանձահարւած և վարժեցւած աւելի օգտակար ծառայութեան մէջ, շահագործւած իր բնածին յատկութիւններով, իր ռազմական ձիրքերով, իբրև զինւոր հսկողութեան, իբրև ժանդարմ հանրային խաղաղութեան. արաբը հեռաւոր Միջագէտքում մկրտւած, աւելի ճիշտ, վերամկրտւած արևմտեան քաղաքակրթութեան աւազանում. Թիւրքը, օսմանցին՝ դուրս նետւած իր դարաւոր լէթարգիական մրափից, թօթափած անշարժութեան իր մահաբեր լուծը. Հայը՝ վերադարձած իր գութանին և արօրին, իր դաշտերին ու կարաւաններին, իր մտաւոր-քաղաքակրթական առաջապահիկ աշխատանքին.. Հրապուրի՞չ հեռապատկեր։ Թւում է, թէ շատ էլ հեռու չէ այդ վարդագոյն ապագան...

***

Բաղդադի գիծը կը յեղաշրջէ մի յայտնի չափով և համաշխարհային հաղորդակցութիւնը։ Եւ... կը յեղաշրջէ ի վնաս Անգլիայի։ Այդ գիծը ամենակարճ ուղին կը լինի Եւրոպայից դէպի Հնդկաստան։ Նա Հնդկաստան պիտի հասցնէ վեց օրով աւելի շուտ, քան Սուէզեան ջրանցքի ուղին։ Վերջինը այդպիսով կը կորցնէ մասամբ իր առևտրական և ռազմական կարևորութիւնը։ Հարիւր հազարաւոր ուղևորները, որ ամեն տարի Եւրոպայից գնում են դէպի հեռաւոր Արևելք, պիտի գերադասեն ցամաքային աւելի կարճ ճանապարհը, պիտի առնեն „Պոլիս-Բաղդադ-Պարսից Ծոց“ գնացքը։

500 միլիոնի արժէք ունեցող Բաղդադեան գիծը *) պիտի կառուցւի համաձայն նորագոյն տեխնիկի, այլ և... համաձայն նորագոյն միլիտարիզմի, զինւորական սիստեմի պահանջների... Ցնտեսական-առևտրական անուն կրելով Բաղդադի երկաթուղին, ինչպէս արդէն փաստեցինք նախորդ յօդւածներում, միանգամայն ռազմական մի գիծ է, ուստի և կը շինւի ամենալայն ու ամենամաքուր ձևով, նա պիտի կտրէ ժամը առնւազը 75 կիլոմետր։ Պոլսից Բաղդադ պիտի հասնեն ընդամենը 65 ժամում, մինչդեռ այսօր պէտք է լինում նոյն տարածութիւնը կտրելու համար՝ 50-ից մինչև 55 օր։ Օրերն այդպիսով կը վերածւին ժամերի... Եւ դա կը լինի այդ վիթխարի ձեռնարկի ամենախոշոր վաստակներից մինը։

Գիծը նաև ռազմական է։ Դա գերագոյն նպատակն է գերմանական քաղաքականութեան։ Դա նպատակն էր նաև Աբդիւլ Համիդի։ Դա մտնում է, վերջապէս և երիտասարդ Թիւրքիոյ հաշիւների մէջ։ Թիւրքիան ռազմական տեսակէտից մեծապէս կը զօրանայ։ Եւ նա պէտք ունի զօրանալու։ Նա պէտք ունի զսպելու

*) Ֆրանսիայի իրաւեկներ ենթադրում են, որ գծի, ճիւղերի, կայարանների, ոտոգման և այլ պէտքերի վրայ պիտի ծախսւի 450—500 միլիոն ֆրանկ։ Իսկ Deutsche Bank-ի տնօրէն Ֆօն Գվիններ, իր բերլինեան դասախօսութեան մէջ յայտնում էր, որ Անատօլուի երկաթուղային ամբողջ ցանցը պիտի նստէ 500 միլիոն մարկ, որից 200 միլիոնը (250 միլիոն ֆրանկ) Բաղդադի երկաթուղու ծախքերն են։

„Տեղեր կան — ասում է Ֆօն Գվիններ — ուր ամեն մի կիլոմետր տարածութիւնը մէկ միլիոն մարկ պիտի արժենայ (1 1/4 միլիոն ֆրանկ)։

Պէտք է կտրել մի շարք կիրճեր, ահագին կամուրջներ ձգել և մինչև Մոսուլ հասնելը պէտք է փորել մեծ տուներներ։ Բաղդադից դեռ պէտք կը լինի ճիւղեր կառուցանել („Freie Presse“ 12 դեկտ. 1911 թ.)։

անիշխանական և ապստամբ հօրդաները, որ այնտեղ, Քիւրդիստանի, Միջագետքի հեռաւոր խորշերի մէջ՝ չեն ուզում ճանաչել օրէնք ու դիսցիպլին և դառնում են պատուհաս խաղաղ ազգաբնակութեան համար։ Երբ այդ „խաղաղ ազգաբնակութիւնը“ հայն է, օսմանեան ռէժիմը — անգամ նորը — դիւրութեամբ չի հակւում դէպի „զսպելու“, խռովարարներին ու ասպատակողներին սանձահարելու քաղաքականութիւնը։ Բայց երբ այդ անսանձ խռովարարները — սովորաբար քիւրդ բէյեր, մեծանուն աւազակապետներ ու մարդասպաններ — կատարեալ անիշխանութեան են մատնում երկրի մի պատկառելի մասը, ըմբոստանալով նաև տիրող ռէժիմի դէմ, այդ դէպքում, բնականաբար Բ. Դուռը դառնում է խիստ զգայուն, կարգապահ ու օրինապահ։ Օսմանեան պետութիւնը մինչև օրս անունով է միայն եղել կենտրօնական։ Իրօք ծայրէծայր նա մշակած է եղել կենտրօնախոյս կամ ապակենտրօն ձգտումներով։ Ահա այդ էական վտանգն է, որ ուզում է յաղթահարել Թիւրք-գերման երկաթուղին։ Ուժերի կենտրօնացումը և կենտրօնախոյս ձգտումների խորտակումը նրա մերձաւոր ռազմագիտական (*stratégique*) նպատակն է։

Բաւական է յիշատակել երկու համբաւաւոր քիւրդ հրոսակապետներին — Իբրահիմ փաշան և Ջեզիրէի Մուստաֆա փաշան — որոնք դեռ մօտիկ անցեալի մէջ իշխում էին ամբողջ վերին Միջագետքում և աւազակային շարունակական արշաւներով պատուհաս էին դարձել թէ համիդեան ռէժիմի և թէ խաղաղ ազգաբնակութեան համար։ Կազմակերպւում էր մի տեսակ անկախ քրդական իշխանութիւն Եփրատի և վերին Տիգրիսի միջև։ Հալէպից մինչև Վան տարածւում էին Իբրահիմի սխրագործութիւնները։

Այսօր ևս տակաւին խաղաղութիւնը ապահոված չէ այն հեռաւոր ծայրերում։ Եւ գուցէ, ո՞վ գիտէ, քիւրդ դիշատիչ աշիրաթապետները, նախկին համիդիէ առաջնորդները գնդակի սուլոցներով պիտի դիմաւորեն շոգեկառքին։

Համիդիէները — ասում էր մեր ողբացեալ Պիէռ Կիյեառը *Pro Armenia*-ի մէջ, մի քանի տարի սրանից առաջ Իբրահիմ փաշայի քաջագործութիւնների առիթով — համիդիէները չեն կարող հաշտուել այն իրողութեան հետ, որ երկաթուղու շնորհիւ նորմալ ու կանոնաւոր կեանք կը հաստատուի այն վայրերում, որ նրանք շարունակ կողոպտում են։ Կամ նրանք կ'ընդդիմադրեն գծի աշխատանքներին... կամ թէ աշխատանքները վերջանալուց յետոյ այնպիսի մի անապահովութիւն պիտի տիրէ երկաթուղու մերձակայ վայրերի մէջ, որ ապրանքային տրանզիտը, փոխադրութիւնը անհնարին պիտի դառնայ։ Համիդիէների կամ արաբների վայրագութիւնները անհնարին կը դարձնեն մերթ ցանքը և մերթ հունձքը... Գուցէ նոյնիսկ փոքրիկ, կիսանկախ պետութիւնների հաստատումը և Թիւրքիոյ տարրալուծումը պիտի գան աւելի ևս բարդացնելու կացութիւնը...

Յամենայն դէպս, երկաթուղին հնարաւորութիւն կը տայ օսմանեան կառավարութեանը՝ արագօրէն, ընդամենը մի տասնեակ ժամերի ընթացքում կենտրօնացնել այն վտանգաւոր շրջանների մէջ բաւականաչափ զօրք և էջզոբացնել վայրենի հրոսակների շահատակութիւնները։

Երկաթուղին ահագնապէս կը դիւրացնէ զօրաշարժը՝ նաև Ռուսիոյ դէմ ունենալիք պատերազմի միջոցին։ Վերջին Թիւրք-ռուս պատերազմին — ասում է Ռընէ Հաների — Ասիայ զօրագնդերը հասան միայն ռազմական գործողութիւնների վերջում և այն՝ յոգնած, ուժասպառ։ Երկաթուղիով՝ 4-րդ (Էրզրում), 5-րդ (Դամասկոսի) և 6-րդ (Բաղդադի) զօրաբանակների փոխադրութիւնը կարելի կը լինի արագ ու դիւրութեամբ կատարել *)։

Իսկ ռազմական հեռաւո՞ր նպատակը...

Այդ մասին երկարօրէն խօսել ենք արդէն մեր նախընթաց յօդուածներում և այլ ևս չենք ծանրանայ։ Այնտեղ մենք ուրուագծեցինք անգլօ-գերման մրցակցութեան պատմութիւնը, մի մրցում՝ որ առանցքն է ժամանակակից, համաշխարհային քաղաքականութեան։ Ասացինք, թէ ինչո՞ւ և ինչպէս Գերմանիան ձգտում է ուժեղացնել Յաճկաստանը և նրա միջոցով, նրա աջակցութեամբ փորել բրիտանական տիրապետութեան հիմքերը Եգիպտոսում, Հնդկաստանում, ամբողջ Արևելքում։ Ասացինք, թէ ինչպէս միլիտարիզմի հզօր կուանը կամենում է անգլիական գերիշխանութեան փլատակների վրայ հիմնարկել իր սեփական հեգեմոնիան, թէ ինչպէս նա — այդ իսկ նպատակով — քաջալերում է անգամ համիսլամութիւնը, պանիսլամիզմը։ Ասացինք նաև, շեշտեցինք մի քանի անգամ, թէ ինչպէս խնամքով, հմտութեամբ տնտեսական ձեռնարկների վարագոյրի տակ թագնւում է ապագայ գերմանական նաւաճումների գաղափարը...

Թիւրքիան ուժեղացնելու սահմանած երկաթուղին պիտի յայտնի թերևս... էապէս հակաթիւրք մի ձեռնարկ — և ո՞վ գիտէ, գուցէ հեռու չէ այն օրը, երբ պիտի իրագործւի Սիմենսների, Շնայդերների, Ֆոն Պրեսսելների փայփայած երազը, երբ Բոսֆորի վրայից ձգւած մի կամուրջով կամ նրա տակից փորւած վիթխարի մի տունելով եւրոպական երկաթագիծը պիտի ձուլւի ասիականի հետ և երբ Պոլիսը պիտի լինի սոսկ գերմանական մի կայարան Բերլին-Բաղդադ ճամբու վրայ... „Օսմանեան ամբողջութեան“ (*Intégrité*) և անկախութեան ֆորմուլը, որ առերևոյթս դաւանում է նաև Վիլհելմ II-ի կառավարութիւնը — կը դառնայ լոկ դատարկ մի հնչիւն, երբ Գերմանիան իր հզօր ու բեղուն ձեռնարկներով կը ցանցապատէ երկրի մի ահագին մասը, երբ գերմանական հեգեմոնիան կը հաստատուի Էնկիւրիի, Կոնիայի, Ադանայի, Դիարբեկիրի, Մոսուլի, Բաղդադի և Բասրայի վիլայէթներում **)։

*) *Questions diplomat. et coloniales, 1 Janv. 1907.*

**) Ինչպէս յայտնի է, գերմանացիք մտադիր էին հասցնել Բաղդադի գիծը մինչև բրիտանական պրոտեկտորատի և ազ-

Երկաթուղու աւարտած մասը—ասում է Ուլար — ցոյց է տալիս արդէն, որ այդ քաղաքական գիծը այլապէս ուժեղ է, քան թէ, օրինակ, 6000 կիլոմետր երկարութիւն ունեցող Անդր-Սիբիրեանը։ Գերմանացի ճարտարապետ Մակենզէն իր միջազգային սպայակոյտով հաստատել է Բաղդադի գիծը, ըստ գերմանական սկզբունքների։ Գօտեփայտերը շատ մօտ են իրար և շինուած են նոյնպէս երկաթից։ Երկաթագծերը աւելի երկայն են և աւելի ծանր (երկայնութիւնը 12 մետր, և ամեն մի մետրի ծանրութիւնը $37^1/_4$ կիլոգրամ)։

Այս. ճիշտ է, այսօր Բերլինի կառավարութիւնը բացայայտ կերպով չի ցոյց տալիս որևէ „քաղաքական մտահոգութիւն“ Թուրքիոյ մէջ. ճիշտ է, նա „արշաւում“ ու „թափանցում է“ միմիայն իր ճարտարապետների ու վաճառականների թևերի վրայ, զարկ է տալիս բացառապէս տնտեսական առաջխաղացութեան. սակայն... երբ կը հասնէ „ընդհանուր տակնու

մեր առջև բոլորովին որոշ, զարգացման մի ակ ռեալ գործօնը՝ մարդ-անհատը, որը իր սեփական ուժերի չափը և նրանց մատչելի գործողութիւնները ինքն է որոշում" — ասում Լավրով բառացի։ Մի ռեալիստ մտածողի համար հասարակա-պատմական ընթացքում մէջ ամենից առաջ շօշափելի ռեալ մեծութիւններն են հաշուի գալիս. դրանք են նրա աշխարհահայեացքի հիմունքները խարսխում։ Իսկ „Պատմական նամակների" հեղինակը բացի մտածողութեան դրական, իրայատուկ ռեալիզմից, միաժամանակ զուսկն էր բազմաժողովուրդ այն երկրի և բազմակնճիռ այն ժամանակների, որտեղ և երբ մի հատիկ կամ մի քանի անհատական կամքեր տասնեակ միլիօնաւորների ճակատագրի համար ա՞ինքան մեծարժէք հետևանքներ են ունեցել. որտեղ ժողովրդային հսկայական մի զանգուած դարեր շարունակ „մեծ համրի" արատաւոր համակերպման լուծը շլինքին, լուռ մարտիրոսութեան մի զարմանալի օրինակ է տուել աշխարհին։

Սուբ'եկտիվ սոցիօլոգիայի (ընկերաբանութեան) հիմնաւորողը և պատմութեան մէջ սուբ'եկտիվ մեթոդի կիրարկողը պատմափիլիսոփայական խրթին պրոբլեմների վերլուծումների ժամանակ—որոնք նոյնքան գործնական արժէքի էին, որքան և տեսական մտայղացումների մի „սուբ'եկտիվ" աղբիւր—ունեցաւ իր աչքի առջև ռուսական իրականութիւնը։ Շատերը այս հանգամանքը մի պատմափիլիսոփայական սիստեմի համար կարող են խիստ ճակատագրական հաշուել և հաշուել են։ Բայց մեր կարծիքով, դա մեծ առաքինութիւն էր մի կարող գլխի համար, որի տեսական և գործնական որոնումների գերագոյն կանոնը երկու բառի մէջ է խտացուած. „Գիտակցական վերաբերում դէպի շրջապատը"։ Եթէ դա ցոյց է տալիս մի կողմից, թէ սուբ'եկտիվ մօմենտը որքան խոշոր դեր կարող էր կատարել Լավրովի պատմափիլիսոփայութեան մէջ, ապա միւս կողմից փաստում է, թէ այդ սուբ'եկտիվ մօմենտը պատմական որքան խոր ճշմարտութիւն, որքան ռեալիզմ է պարունակում իր մէջ. թէ կառուցող սիստեմը որքան մօտ է կանգնած կեանքին։

Անշուշտ, ռուսական իրականութիւնը միայնակ անկարող կը լինէր մատակարարել պատմափիլիսոփայական մի ընդարձակ սիստեմի հիմնական սկզբունքները. այդպիսի մի սիստեմ իր մարսողութեան շրջանի մէջ պիտի առնէ պատմական ամբողջական պրոցէսը ընդհանուր և պարփակուն արտայայտութիւններով։ Եւ Լավրով սկզբից և եթ մի միակողմանիութիւն փոխարինած կը լինէր միւսով, եթէ սահմանափակուէր Ռուսաստանի պատմափիլիսոփայական նեղ իրականութեամբ։ Բայց նա իր մտաշրջանի մէջ է առնում հին և նոր պատմութեան ամբողջ բովանդակութիւնը, հին և նոր պատմական ժողովուրդների հետ։ Ամեն տեղ և ամեն անգամ կենդանի անհատն է, որ պատմական բազմազան ճակատագիրների մէջ ծառանում է Լավրովի առաջ, պահանջում նրանից իր դերը որոշել, իր ուժերի սահմանները գծել, իր գործողութիւնների գնահատումը տալ։

Լավրով, ի հարկէ, անհատի պրոբլեմ չստեղծեց. բայց նա առաջիններից էր, որ պատմական անհատի ընդհանրապէս արհամարհուած պրոբլեմը գիտականօրէն և սիստեմատիկօրէն բարձրացրեց արժանաւոր պատուանդանի վրայ։ Մի կարգ կոլլեկտիվիստ (համայնապաշտ) պատմաբանների և պատմափիլիսոփաների կողմից գրեթէ խպառ նսեմացուած, բնազանցաբան և դոգմատիկ մտածողների կողմից վտարուած, „բացարձակ գաղափարների", իդէալների և հոգիների ու ոգիների մղձաւանջի տակ ճզմուած, նիւթապաշտ և ծայրայեղօրէն առարկայապաշտ սոցիօլոգների ձեռքով ընկերաբանութեան սահմաններից կամայականօրէն վռնդուած, հասարակական մարմնին ստրուկ դարձրած պատմական անհատը, այո՛, կարելի է ասել, առաջին անգամ էր այնքան խնամքոտ և խորիմաստ հոգատարութեան արժանանում Ռուսաստանի մէջ՝ Լավրովի կողմից։

Եւ խօսքը միայն մեծ մարդկանց, հերոսանհատների և հրամանատարների մասին չէր, որոնց ժեստերով ոմանք հակուած են մեկնաբանելու պատմութեան ամբողջ ընթացքը։

Աշխատանքը փոքր չէր։ Եւ ոչ էլ ընդդիմադրական ուժը նախկին մտածելակերպի՝ չնչին։ Հարկաւոր էր գաղափարի գերին՝ գաղափարի տէրը դարձնել։ „Հասարակական մարմնի հրամանատարութեան ենթակայ" անհատը պէտք էր դարձնել հրամանատար, կամ գէթ նա և հրամանատար այդ հասարակական մարմնի։ Ընկերաբանութեան (սոցիօլոգիայի) քննութեան նիւթ պէտք է դառնայ նա՝ որ „հեղինակաւոր" խարազաններով դուրս էր քշել այդ գիտութեան սահմաններից։

Որքան և դժուարին էր խնդիրը, որքան և նրա լուծման մէկ կամ միւս մանրամասնութիւնը խուսափող՝ գրչի ծայրի մէջ սեղմելուց, բայց և այնպէս Լավրովը մօտենում է նիւթին գիտական-մարտական տրամադրութեամբ, — *kampflustig!* — խոչընդոտները յաղթահարելու անյողդողդ վստահութեամբ։

Ո՞րն է անհատի հասարակագիտական—աւելի ճիշտ՝ պատմահասարակական որակումը. ի՞նչ է նրա դերը պատմական պրոցէսի մէջ։ Լավրով այս հարցն է ուղում վերլուծել, որովհետև այդ իսկ պատմական պրոցէսը հասկանալու համար անհրաժեշտ է նախ իրեն անհատին հասկանալ հասարակութեան մէջ,— անհատին՝ որ „միակ իրական կրողն է" այդ պրոցէսի։

Բայց կայ ծանօթ դժուարութիւնը. հին, տանջող վէճը դետերմինիզմի (կանխաւորոշման տեսակէտի) և կամքի ազատութեան (հակառակ տեսակէտի) միջև. մի վէճ՝ որին պատմափիլիսոփայական մտքի մակընթացութիւնը իր յաղթական հոսանքի մէջ յաճախ է ճակատով զարնուել, որպէս մի կուռ ապառաժի, կրկին կծկուել, յետ քաշուել,

նոյնքան ևս մի վարանում տեղատուութեան փոխելով այդ շարժումը, որի մասով անկարելի է անցնել, առանց նրան լրջօրէն հաշուի առնելու, վաղ թէ ուշ նրան վերադառնալու կարիքն զգալու։ Պատմափիլիսոփայական մտքի նոր մակընթացութեան ալիքները անհատին հասցնելու համար՝ հարկաւոր է նախ այդ ապառաժը նշաձել, նրան մէջտեղից դուրս բերել. այդտեղ է, որ անհատի ազատութեան մեծ խնդիրն է կարծրացած. այդ նշաձումով է միայն, որ պատմափիլիսոփայութիւնը իր անորոշ վիճակից կարող է դուրս գալ և դառնալ գիտութիւն։

Արդարև։ եթէ ամեն ինչ նախորոշուած է անհատի առաջ, եթէ անհատը իր գործողութիւնների և մտածումների մէջ սոսկ ի կատար է ածում այն, ինչ որ մեքենօրէն թելադրում է նրան մեքանիկական մի կազմակերպութիւն, որ իր էութիւնն է. կամ թէ նման մեքանիքական մի ուժից, որ դուրսն է գտնուում, ապա պարզ է, այդ պարագայում որևէ պատմափիլիսոփայութիւն ոչ իմաստ կունենար, ոչ էլ գոյութեան իրաւունք։ Այն ժամանակ անհնարին կը լինէր պատմական բովանդակ պրոցէսը ընդգրկել մի հատիկ ընդհանրացնող ֆօրմուլով (ձևակերպում), անհնարին կը լինէր խտացնել պատմութեան ամբողջ պարունակութիւնը մի պարզ, ամփոփ մեկնաբանութեան մէջ։

Եւ ընդհակառակը։ եթէ մարդ-անհատի սանձարձակ կամքն է իշխում ամեն տեղ և ամեն դէպքում. եթէ այդ կամքն է գերագոյն օրէնստուն ամեն մի մեծ կամ փոքր պրոցէսի և ժամանակաշրջանի մէջ. եթէ անհատը միայն մղիչ է և ոչ նաև մղուող. եթէ նա սոսկ հրամայող է և ոչ միաժամանակ հրամայուող. տուող և ոչ նաև ստացող. եթէ նա միշտ պատճառ է և երբէք հետևանք, ապա դրանով իսկ խախտուած են հիմքերը մի գիտութեան, որ պատմական պրոցէսի որոշ կանոնաչափութիւնները, տենդենցները կամ „օրէնքները“ կոչուած է փաստելու։ Այն ժամանակ պատմական ամբողջ պրոցէսը կամ անհասկանալի է և անլուծելի և կամ ամենապարզ կերպով սկզբից և եթ հասկացուած և լուծուած է։ Քմահաճո՞յք։ Պատահականութի՞ւն։ Ինքնիշխան կա՞մք—և կամ ինչ կուզէք—ահա՛ դրանք կը լինէին այն ժամանակ պատմական ըմբռնողութեան ամենախոր „սկզբունքը“, իմաստը, գաղտնիքը. եթէ միայն այդ դէպքում դեռ կայ պատմութիւն, կայ պատմական իմաստ, կայ գաղտնիք։ Այն ժամանակ ամբողջ պատմութիւնը կը լինէր կամ „մարիոնետների խաղ“—ինչպէս կ'արտայայտուէր Գէորգ Զիմմել—և կամ բացարձակ ուժերի ու էակների յայտնագործութեանց կամակատար, ինչպէս կամենում են թէօլոգ-պատմաբանները և անուղղելի գաղափարամոլները։

Պատմափիլիսոփայական գիտական ըմբռնողութեան համար լուրջ նկատումի արժանի մի վէճ է դա, անշուշտ, այն էլ մեկից աւելի տեսակէտներով։ Եւ իզուր չէ, որ „քաղաքակրթութեան պատմութեան“ աշխարհահռչակ հեղինակ՝ Բօկլ իր գլուխ գործոցի մէջ ամենից առաջ կամքի ազատութեան խնդրով է զբաղուում։

Լավրովի համար ևս փիլիսոփայական այդ վէճի մէջ խիստ որոշակի դիրք բռնելը, այդ վէճին իր օրինական սահմանելը ցոյց տալը պատմափիլիսոփայական ամեն մի ամբողջական մտաշէնքի նախապայմաններից է։ Եւ նա մտնում է վէճին՝ խնդրի լրջութեանը միանգամայն գիտակ, պատրաստակամութեամբ և կորովով։

II. Որպէս պոզիտիվիստ, դրապաշտ մտքի ամուր հողի վրայ կանգնած մտածող, նա ծանրանում է նախ „պատմութեան նախապատրաստելու“ վրայ։

Երկրաբանական, ֆիզիկական և քիմիական պրոցէսների միջոցով, հարիւրաւոր, գուցէ և հարիւր հազարաւոր դարերի ընթացքում կազմակերպուել է տիեզերական միջավայրը, որը պատմութեան հնարաւորութիւնն է ստեղծել, նրա հիմքերը դրել։ Ե՞րբ է արդեօք տիեզերական բնաշրջումը օրգանական (գործարանաւոր) կեանքի սկիզբը դրել։ Ե՞րբ և ինչպէ՞ս է տիեզերական և օրգանական էւոլիւցիան մարդկային գանգի, նրա գիտակցութեան մէջ հոսել. չգիտենք, անյայտ է մեզ. և կը մնայ միշտ, հաւանօրէն։ *Ignoramus et ignorabimus*։

Որպէս իրողութիւն, մենք ընդունում ենք, որ մեր մոլորակը իր գոյութեան մի որոշ վայրկեանում, մի շարք բարդ պրոցէսների միջոցով երևան է բերել այն, ինչ որ մենք անուանում ենք կ ե ա ն ք ի սկզբնաւորութիւն։ Մենք գիտենք միայն—գիտական մի ճանաչողութիւնը և կաուզալ, պատճառաւորական մտածողութիւնը թոյլ է տալիս այդ—որ տրուած այդ սկզբնաւորումը քմահաճ ոչինչ չէ ունեցել իր մէջ։ Մենք գիտենք նոյնպէս, որ կեանքի սկզբնաւորումից յետոյ, ձիգ դարերի անհատնում էւոլիւցիայի ընթացքում, օրգանիզմների մէջ երբ և իցէ ծայր են տուել և զարգացել գ ի տ ա կ ց ու թ ե ա ն տարբեր ձևերը։ Գիտենք, վերջապէս, որ այդ գիտակցութիւնը, իբրև հոգեկան և հոգեբանական մի երևոյթ, անկարելի է վերածել մարդկային անխառն, պարզ օրէնքների։ Կայ մի բան, որ մնում է անվերածելի. մի բան՝ որ իզուր բացատրել են ձգնում աստուածաբանները, մետաֆիզիկները, խորհրդապաշտ միստիկները։

Մեր գիտական մտածողութիւնը հարկադրում է մեզ ընդունել, որ տիեզերական և օրգանական միջավայրը ստեղծուել է մի անխուսափելի, ճակատագրական նախորոշումով։

Այդ նոյն բացարձակ դետերմինիզմը (պատճառաւորականութիւնը), որ ծնունդ է միայն տիեզերական օրէնքների, մարդու նախահօր հորիզոնական մէջքը ուղղ՛ից դէպի վեր, դարձրեց ուղղահայեաց, դարձնելով նրան միաժամանակ գերազանցը, բարձրագոյնը օրգանական աշխարհի բոլոր էակների մէջ։ Բայց նոյն այդ դետեր-

մինիզմը մտածողութեան կենտրոնական օրգանով օժտուած մարդ-կենդանու գիտակցութեան մէջ յարոյց նպատակներ դնելու և դրանց իրագործման համար շրջապատի տարրերը շահագործելու անհրաժեշտութիւնը։ Այդ անհրաժեշտութիւնը դարձաւ այլ ևս մարդկային բնոյթի անհրաժեշտութիւն։ Մարդկային գիտակցութիւնը միանգամ կոյր, ճակատագրական կանխորոշումով առաջացած, նպատակների և միջոցների միջավայրում իր էվոլիւցիայի մէջ ստացաւ „միայն իրեն յատուկ" յատկանիշներ, որոշ սահմանագիծներ։ Տիեզերական բովանդակ էվոլիւցիայի ծոցում կազմաւորուած սուբ'եկտիվ աշխարհը զգացողութիւնների, պատկերացումների, հասկացողութիւնների, կրքերի և կամային մղումների ուրոյն աշխարհը նոյնպիսի անվիճելի իրողութիւն է դարձել այժմ, ինչպէս մարմինների ձգողական ուժը կամ լուսային երևոյթների փոփոխութիւնները։

Կենդանական աշխարհի զարգացման պրոցէսը ստեղծագործել է մարդկային անձնաւորութիւններ, որոնք ընդունակ են իրենց համար ըմբռնողութեան և գիտութեան հարցեր դնելու և դրանց լուծմանը ձգտելու։ Այդ գիտական հարցերը նոյնպիսի անխուսափելիութեամբ տրուել են օբ'եկտիվ աշխարհի համար, ուր տիրապետողը պատճառների և հետևանքների սիստեմն է՝ դետերմինիզմի հողի վրայ — որպիսի անհրաժեշտութեամբ տրուել են նաև սուբ'եկտիվ աշխարհի իրողութիւնների համար, ուր հիմնական երևոյթները կամային գործողութիւններն են՝ մտային և յուզումնային (աֆֆեկտիվ) պրոցէսների միջոցով մշակուած։ Դա նպատակների և միջոցների աշխարհն է, որը նման բոլոր մեացած սուբ'եկտիվ երևոյթներին, գիտականօրէն պիտի հետազօտի ոչ միայն որպէս մեքանիկական, քիմիական և կենսաբանական պրոցէսների անհրաժեշտ հետևանք՝ ենթակայ մի անպայման դետերմինիզմի, այլ և որպէս սուբ'եկտիվ ազդումների ենթակայ առանձնայատկութիւնների մի հիւսուածք։

Ինչ աղբիւրներ էլ ունենալու լինին նպատակների և միջոցների մասին ունեցած մեր պատկերացումները, մենք չենք կարող չ'ընդունել այդ բոլորը, որպէս մեր սուբ'եկտիվ աշխարհի փաստեր։ Եթէ անգամ այդ կատեգորիաները նոյնպիսի ենթակայական պատրանքներ լինէին, ինչպէս արեգակի ինքնուրոյն շարժումը հորիզոնի վրայ, ներդաշնակութեան կամ աններդաշնակութեան տպաւորութիւնը այնտեղ, որտեղ միայն օդի բազմապիսի տատանումները տեղի ունին, մենք ստիպուած ենք այդ կատեգորիաները ուսումնասիրելու օգտի, հրապոյրի և պարտաւորութիւնների տեսակէտներից։

Առաջ բերած այս մտաշարքերից ակնյայտ է, որ Լավրովի համար պատմափիլիսոփայական շրջանում, այսինքն նպատակների և միջոցների աշխարհում հարցը բնաւ դետերմինիզմի և ինդետերմինիզմի (կամքի ազատութեան) ընդունման կամ մերժումի մասին չէ. նա չի մերժում տիեզերական երևոյթների դետերմինիզմը, ոչ էլ մեր կամային գործողութիւնների նախնական դետերմինիզմը (կանխորոշումը, պատճառականութիւնը)։ Եւ նա որոշակի շեշտելով այս հանգամանքը, յայտարարում է սակայն, որ „մենք գտնուում ենք այն շրջանում, որտեղ երևոյթների գիտական հետազօտութեան համար ոչ մի օգտաշահ հետևանքի չենք կարող հասնել, եթէ այդ ընդհանուր փիլիսոփայական հասկացողութիւնը կիրարկենք։ Դետերմինիզմի միջոցով մենք անկարող ենք ճանաչել այն տարբերութիւնը, որ կայ մեր գիտակցութեան մէջ՝ օգտաւէտ և վնասակար, բարձր և ցածր նպատակի միջև. նպատակայարմար և անմիտ միջոցների միջև։ Մարդ-անհատի մէջ կայ նպատակների և միջոցների համեմատ գործելու մղում։ Նա գործում է, նպատակներ է դնում և միջոցներ ընտրում անկախ նրանից, թէ արդեօք դրսում՝ օբ'եկտիվ աշխարհի մէջ, մեքանիկական դետերմինիզմ գոյութիւն ունի՞, թէ ոչ։ Նա գործում է որպէս մտածողութեամբ և կամքով օժտուած էակ։ Բացարձակ ազատութեան մասին, ի հարկէ, խօսք լինել չի կարող. մի այդպիսի ազատութիւն գոյութիւն ունենալ չի կարող հէնց այն պատճառով, որ ամեն անգամ, երբ հարցը մարդկային անձնաւորութեան մասին է, անհրաժեշտօրէն պէտք է տարբերել սուբ'եկտիվ աշխարհը օբ'եկտիվ աշխարհից։ Վերջինս արտաքուստ արդէն չափ է դնում այդ ազատութեան։

ՍՆԱՐ

(Կը շարունակի)

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

III

ՏԻՐԱՊԵՏՈՂ ՑԵՂԸ

Բնակուռ նակատագիր.—Սեպը եւ հորդան.—Խաշնարած եւ երկրագործ ժողովուրդներ.—Բարբարոսութիւն եւ մաղմակրթութիւն. — Աշխարհակալող կարաւանը եւ իր պեսը. — Ցեղի առանձնայատկութիւններ. — Զուն դէպի Հայաստան եւ Փոքր Ասիա.—Պեսութիւնը՝ ցեղի հայելին.— Զինուորական տարրը գերիշխող. — «Զուս բռնապետութեան» տիպարը. — Սօցիալական թոյլ շերտաւորումն. — Ազնուականութեան բացակայութիւնը եւ հեսեւանքը —Պարագիտիզմ եւ ամուլութիւն.—

—

Կենտրոնական Ասիայի լայնածաւալ ստեպերում է, որ պիտի փնտրել կորիզը, նախանիւթը այն ուշագրաւ սօցիալական տիպարի — օսմանեան զանգուածի — որ դարեր առաջ աշխարհակուլ հեղեղի պէս յորձանք տուեց դէպի Հայաստան ու Փոքր Ասիա, այնտեղից յաղթականօրէն սլացաւ դէպի Արևմուտք, դո-

ղացրեց մի վայրկեան ամբողջ Եւրոպան, Քրիստոնէութիւնը, ապա վերստին գահավիժուեց իր ահարկու մեծութեան զէնիթից, յետ նահանջեց դէպի Բոսֆոր ու Անատոլիա, հաստատուեց աշխարհագրական մի էքնաղ, առանձնաշնորհեալ միջավայրում, ուր չնայեած դարաւոր շփումներին աւելի բարձր, քաղաքակիրթ ցեղերի հետ, չնայեած շարունակական, խառն, բռնի ամուսնութիւններին՝ մնաց միշտ նոյն յետադէմ տիպարը, նոյն յաւիտեան անչափահասը քաղաքական և կուլտուրական տեսակէտից, ըմբոստ հանդէպ արդիւնաբերող, արգասաւոր աշխատանքի, ծոյլ ու ինքերտ համաշխարհային պրոգրէսի ճանապարհին, վարժուած միայն հրամայելու և հարստահարելու, բայց անվարժ՝ արտադրելու, ստեղծագործելու և մանաւանդ կառավարելու...

Այնտեղ, Ալտայի հողմակոծ բարձունքներում՝ որ կազմել են նրա առաջին ասպատակող կարաւանները. այնտեղ, իր նախնական որբանի մէջ է, որ նա ստացել է իր գրական և բացասական գծերը. այնտեղից, այն հեռաւոր և լայնարձակ հորիզոններից է, որ սահել են մարդկային ամենամեծ հեղեղները—հոների, մոնղոլների, թաթարների, սելջիւկների—որ անցել են հրով ու սրով հսկայական տարածութիւններ, կտակելով սերունդներին զարհուրանքի անլուր էջեր։

Որքա՜ն մեծ է բնական, ֆիզիկական ազդակների դերը, որքա՜ն ուժեղ և վճռական է այն վաղեմի ժամանակներում՝ աշխարհագրական միջավայրի ազդեցութիւնը մարդկային համախմբումների վրայ...

Բնութիւնն ինքն է կռել ու դարբնել ցեղի յատուկ նկարագիրը, կարելի է ասել՝ ճակատագիրը։

Խաշնարած, թափառական հորդաներ էին։ Միջավայրը այդպէս էր հրամայում։ Ստեպը բռնակալօրէն դնում էր իր կնիքը իր հիւրընկալած մարդկութեան սոցիալական կենցաղի վրայ։ Ստեպը, խոտի անեզր տարածութիւններով, որոշում էր բնակիչների անհրաժեշտ պարապմունքը, բնաւորութիւնը, խառնուածքը։ Ստեպը ի վերջոյ խլացրեց նրանց մէջ դժուարին, ճիգառատ աշխատանքի տենչը և զարգացրեց աւարելու, յափշտակելու, ուրիշների վաստակով ապրելու ցանկութիւնը, խթանեց ռազմական, աշխարհակալող բնազդը...

Անծայրածիր ու խոտաւէտ լեռնադաշտ՝ ձիերի, ոչխարների անհաշիւ հօտերով։ Եւ նրանց հետ՝ ցիր ու ցան մարդկային նախիրներ՝ կիսավայրենի, նահապետական կենցաղով։ Խոտը—մշանջենաւոր և անսպառ ճարակ հօտերի համար։ Ձին—սնունդի նոյնքան առատ մի աղբիւր մարդկանց համար՝ իր արտադրած կաթով, կումիսով։ Ձին — մանաւանդ, հաղորդակցութեան ու շարժման մի գերազանց գործիք, մի սքանչելի լոկոմոտիվ։

Պէտք չկար՝ ոչ գետինը հերկելու, ոչ անտառներ կտրելու, ոչ ճահիճներ մաքրելու, ոչ ճամբաներ հարթելու և շտկելու։ Ամեն բան պատրաստ էր մայրբնութեան ծոցում, պատրաստ էին և ճամբաները։ Ստեպը — ամենուրեք հարթ ու հաւասար, ամենուրեք ճանապարհ ու արօտավայր։

Հորդան աճում է,—աճում է և խաշինքը։ Պէտք են նոր արօտատեղեր, նոր սնունդ ու հարստութիւն։ Եւ կարաւանը շարժւում է միշտ դէպի առաջ, շարժւում է մի խիզախ առաջնորդութեամբ դէպի հեռու և անծանօթ հորիզոններ... Նա մշտական շարժման մէջ է՝ նոր հողեր գրաւելու, նոր արկածներ փնտրելու մտահոգութեամբ։ Ցնտեսական կարիքը միակ շարժիչ-պատճառը չէ։ Որքա՜ն ուժեղ է դեռ այն հեռաւոր շրջաններում մարդկանց հրամանատար-անհատների մէջ՝ ներքին, հոգեբանական մղումը, իշխելու, տիրապետելու տենչը... Ինչե՞ր չ՝արին այդ մի քանի մոնղոլատիպ հերոսները — մի Ատտիլա, մի Չինգիզ խան, մի Լանկ-Թամուր — իրենց անյագ և փառատենչ ախորժակներով, իրենց ահեղ, աշխարհասասան կամքի ուժով...

Ցորձանքը առնում է իր յարաճուն ալիքների մէջ նստակեաց, խաղաղ, երկրագործ ժողովուրդներին, որոնք մարզւած խաղաղասէր առաքինութիւնների մէջ՝ անկարող են ցոյց տալ երկարատև դիմադրութիւն։ Եւ խաշնարած, թափառական ցեղերը նոր հողերի ու շարժական գոյքերի հետ՝ նւաճում են նաև մարդկանց, հպատակեցնում, ստրկացնում... Եւ կարաւանը նորէն շարժւում է։

Երկու տարր—ասպատակող հորդայի մէջ։ Մինը ազատ, միւսը ստրուկ։ Մինը՝ պատերազմող և հրամայող, միւսը նւաստ ծառայող, բոլոր սև ու չարքաշ աշխատանքների կատարող։ Տիրապետող, պատերազմիկ տարրը իսկզբանէ խորշում էր այդ չարքաշ և ճիգոտ աշխատանքից, արդիւնաւոր արհեստներից, հողերի, մարգերի, այգիների մշակումից, ապա և աւելի ուշ՝ առևտրից ու արդիւնաբերութիւնից։ Նա խորշում էր ոչ միայն այն պատճառով, որ անընդունակ էր յարատև, արդիւնագործ ճիգերի, այլ և որովհետև համարում էր այն՝ անպատիւ գործ, ստրկի գործ... Ռազմիկ ցեղը վաղուց ի վեր սովորեց արհամարհել դժուարին, ստեղծագործող աշխատանքը—իբրև մի բան, որ ստոր էր իր, ռազմիկի, արժանապատուութիւնից—և ստանձնեց սոսկ առաջնորդի, հրամանատարի դերը, ուղղեց իր ճիգերը դէպի բոլորովին այլ տեսակի մարզանքներ, դէպի կռիւ ու նւաճում, յափշտակութիւն և կեղեքում...

Այդպէս ահա առաջացաւ այն հաւաքական պարազիտիզմը—հացկատակային տրամադրութիւնը—որի մասին ակնարկեցինք մեր առաջին գլխի մէջ։

Այդ աղէտաւոր տրամադրութեամբ էր, որ թիւրքերը եկան հաստատուեցին Հայաստանում։

Այդ նոյն աւերիչ հակումներով է՝ որ անյիշատակ ժամանակից ի վեր հաստատուել է նոյն աշխարհագրական միջավայրում մի այլ նոմադ, խաշնարած հորդա—քիւրդը։

Եթէ հայկական դարաւոր ողբերգութիւնը մեր նախընթաց յօդուածների մէջ բնորոշեցինք մասամբ իբրև արդիւնք կրօնական, իսլամական անհաշտ թշնամութեան, ապա միւս կողմից պիտի ասենք, որ նա մասամբ էլ արդիւնք է, մէկը բիւրաւոր արդիւնքներից այն հսկայ և համատարած անտագոնիզմի, որ եղել է տասնեակ դարերից ի վեր մարդկութեան երկու մեծ տնտեսական-սոցիալական տիպարների միջև—նստակեաց հողագործների և թափառական խաշնարածների, — մի անտագոնիզմ՝ որ իր յարուցած բաղխումներով ու պատերազմներով լցրել է ամբողջ հին աշխարհը, Ատլանտեանից մինչև Խաղաղ Ովկիանոսը։ Դա պայքարն է՝ քաղաքակրթութեան և բարբարոսութեան։ Ժողովուրդները փոփոխում են միջավայրը, անցնում են դէպի աւելի նպաստաւոր հորիզոններ, բայց նախնական ցեղային յատկանիշները—նրանք, որոնք մշակել են ցեղի հաւաքական կեանքի արշալոյսին, գոյութեան կռուի յորձանքներում, բնական միջավայրի բոլոր խճողուած գործօնների ազդեցութեան տակ—այդ յատկանիշները յարատևում են դարեր ու դարեր, նրանք շա՞տ դանդաղ և շատ սակաւ են ենթարկւում նոր, մեղմարար, քաղաքակրթիչ ազդեցութիւններին, երբեմն ասես տրամադիր են յաւերժանալու, որպէս անէջք, ճակատագիր... Քիւրդը դարեր շարունակ զանգուածօրէն յամառեց նոյն նախնական, գրեթէ բնականվիճակի մէջ (état de nature). Թիւրքը մի յայտնի չափով փոխեց իր նոր աշխարհագրական միջավայրում, յարմարեց նստակեաց պարապմունքներին, այնուամենայնիւ նրա մէջ ևս ընդհանրապէս յարատևեցին — և այսօր տակաւին շեշտուած են—հին բարքերն ու առանձնայատկութիւնները, ասիական ստեպների մէջ վաստակած հակումները. նա դեռ մնում է էապէս նոյն պատերազմիկ, հրամայող ու հարստահարող տարրը իր այլացեղ, խայտաբղետ միջավայրում, նոյն բնազդական հակառակորդը շինարար, քաղաքակրթիչ աշխատանքի, դժուարին և յարատև ճիգ պահանջող մարզանքների։

Ի՞նչ էր նա իր պատմութեան արշալոյսին։

Ամենապերճախօս վկայութիւնը տալիս են ցեղի լեգենդները, առասպելները։ Նրանցից մէկի համաձայն՝ Թիւրքերի

„Նահապետ Օխուզը չի տուել իր զաւակներին ոչ գութան և ոչ գիրք, այլ միայն նետ և աղեղ"... Դրանով իսկ նահապետը որոշադրել է իր սերունդների ապագան։

Նոյն լեգենդան ներկայացնում է Թիւրքերին, „որպէս ռազմիկ, աւերիչ և թալանչի մի ժողովուրդ... Երեք առանձնայատուկ գծեր, որ գտնում ենք և յետնորդների մէջ և որ հաղիւ թէ մեղմացած են կատարեալ առաջադիմութեամբ" *)։

Մարզուած ձիարշաւի և ռազմական արուեստի մէջ, վարժուած դեռ մանուկ հասակից սրի, նետի և աղեղի գործածութեան, ծարաւ առնական թռիչքների և արկածների, ասպատակութեան ու աւարառութեան, անվախ և քաջասիրտ, արհամարհող կեանքի, պատուի ու սեփականութեան, արհամարհող անգամ իր սեփական գոյութեան, սակաւապէտ, ժուժկալ և ուժեղ ֆիզիկապէս, զինուած, մի խօսքով, աշխարհակալող ցեղերի բոլոր անհրաժեշտ առաքինութիւններով՝ Թիւրքական նախկին կորիզը թաւալել է Ասիայի անծայր դաշտավայրերում, Ստեպի մերթ ժպտուն, կանաչազարդ, մերթ դաժան և բքաշունչ անհունութեան մէջ, թաւալել է՝ աստիճանաբար աճելով ու զօրանալով, նոր հողեր գրաւելով ու աւերելով, նոր ցեղեր ստորադրելով և իրեն հետ քարշ տալով, հասել է ի վերջոյ հսկայական չափերի, գրոհ է տուել—խոտի, արօտների ճանապարհով—միշտ հեռու, դէպի արևմուտք, անցել է գահավիժող մրրկի պէս, առանց որևէ հետք, յուշարձան թողնելու իր ետքից, առանց հիմնել կարողանալու այդ ահագին ճանապարհի վրայ մի տևական պետութիւն, մի շատ թէ քիչ հաստատուն քաղաքական կազմակերպութիւն։

Եւ, սակայն, նա չէր բնաւ ներկայացնում անկարգ, անիշխան, քաոսային մի խաժամուժ... Եղել են, անտարակոյս, այդ ճարակող հորդայի մէջ քաղաքական կազմակերպութեան սաղմեր։ Ո՞վ էր ցեղի առաջնորդը...

Սոցիոլոգիան մի՛ ընդհանուր և որոշ պատասխան ունի բոլոր նման խաշնարած ու պատերազմիկ ցեղերի հանդէպ։ Շատ վաղաժամ, զանգուածներից առաջ է գալիս մի նշանաւոր անհատ, օժտուած արտակարգ յատկութիւններով, մի կախարդ, աւելի յաճախ մի հերոս, մի տարիքոտ, փորձուած, հեղինակաւոր կտրիճ, մի յանդուգն, արիասիրտ ռազմիկ, որ գիւրութեամբ ենթարկում է մարդկային երամը իր հմայքին ու կամքին... Աշխարհակալող ցեղի շէֆը — աշխարհակալող կարաւանի առաջնորդն է, հրամանատարը։ Ամենից կտրիճը և ամենից շրջահայեացը։ Միանգամայն ուղեցոյց, „վալադ" և զինուորական հրամանատար։

Նա կը մեծանայ և կը զօրանայ յաղթութիւնների և նուաճումների հետ։ Նա կը խմբէ ժամանակով իր շուրջը բազմաթիւ օգնականներ, ենթաշէֆեր, մի ամբողջ զինուորական մարմին, դասակարգ, որից և կը բղխէ հետզհետէ մի տեսակ կառավարութիւն, պետութիւն։ Նա կը յենուի այդ սպայակոյտ-դասակարգի վրայ (ապագայի ենիչերիների)՝ մշտնջենապէս հլու հնազանդ պահելու համար զանգուածները, նուաճելու համար նորանոր պատերազմներ և նուաճումներ։ Նա կը կենտրոնացնէ հետզհետէ իր անձի մէջ կառավարելու, դատելու և պատժելու պաշտօնները։ Նա կը դառնայ ապագայում բոլոր գրաւած հողերի և ցեղերի միահեծան սեփականատէր և միլիոնաւոր հորդայի ճակատագրի տնօրինող...

Միահեծան մի զօրավար, բացարձակ լիազօրութիւններով սպառազինուած մի շէֆ, որի հանդէպ զանգուածները պարտաւոր են ցոյց տալու կոյր, անպայման, ան-

*) Բառացի մի Թիւրք գրողից. H. Ganem, „Les Sultans Ottomans", էջ 8—9։

մուռնչ հնազանդութիւն... Ապագայ սուլթանն է դա և ապագայ սուլթանական բռնապետութեան սաղմն է, որ դրուում է արշաւանքների մեծ ճամբու վրայ, նախքան հասնելը փոքր Ասիային և Բոսֆորին...

Եւ յայտնի է, հասարակական գիտութիւնը վկայում է, որ գոյութեան պայքարի մէջ այդ բացարձակ, աբսոլիւտ բռնապետութիւնը եղել է աջողութեան, յաղթանակի ամենագլխաւոր պայմաններից մին։ „Հասարակութիւնների գոյութեան կռուում—ասում է Սպենսեր — հաւասար պայմանների մէջ յաղթանակող եղել են նրանք, որ ենթարկուել են ամենախիստ, ամենազօրաւոր հպատակութեան՝ իրենց շէֆերին, թագաւորներին... Քանի աւելի ուժեղ է եղել զուտ մեքենական դիսցիպլինը, կարգապահութիւնը, այնքան աւելի ուժեղ է եղել — այն հեռաւոր ժամանակներում — և յաղթելու շանսը։

Աւելին կայ։ Բացարձակ բռնապետութիւնը եղել է ոչ միայն սոցիալական անհրաժեշտութիւն, այլ և մի քայլ դէպի առաջ, պրոգրէսի, առաջադիմութեան մի հանգրուան. և նոյնիսկ, իբրև ժամանակաւոր մի հաստատութիւն, նա որոշ չափով խթանել է քաղաքակրթութիւնը։ Այդպէս է եղել ընդհանրապէս պատմութեան մէջ։ Մասնաւորապէս Թիւրքիոյ մասին—ինչպէս կը պարզենք—հարկ է խօսել փոքր ինչ վերապահութեամբ...

Պատերազմը դառնալով մշտնջենական՝ առաջնորդն ևս, որ սկզբներում ընտրելի էր և փոփոխելի համայնքի կողմից, դառնում է հեռզհետէ մշտագոյ, անփոփոխելի։ Նրա իշխանութիւնը ի վերջոյ դառնում է ժառանգական։ Այդ հանգամանքին զօրաւորապէս նպաստում է կրօնը, նախնական հաւատալիքները, հերոսական մեռելների, նախնիքների պաշտամունքը։

Նրա զօրութեամբ՝ իշխող առաջնորդը—իբրև յաջորդ մի հզօր ու պաշտած հրամանատարի—հռչակւում է, որպէս հաղորդակից հօր աստուածային բնութեան և դրանով իսկ ստանում է անսահման լիազօրութիւններ... Սկզբներում ցեղի հրամանատարը հիմնում էր իր ազդեցութիւնը սոսկ իր անձնական արժանաւորութիւնների վրայ — արիութեան, հմտութեան, փորձառութեան, մաւոր կամ ֆիզիկական կարողութիւնների վրայ։ Այժմ նա աւելացնում է այդ բնական առանձնայատկութիւնների՝ գերբնական յատկանիշներ։

Կրօնական հաւատալիքներն, այո՛, աւելի ևս ամրապնդեցին այդ անմռունչ հնազանդութիւնը շէֆերի հանդէպ։ Եւ դա անցաւ ժառանգաբար, սերնդէ սերունդ, դարձաւ սովորոյթ, աւանդութիւն։ Բոլոր նախնական համայնքների մէջ ահագին է սովորոյթի ուժը, նուիրագործուած սրբազան հաւատալիքներով, մեռելաստուածների կամքով։ Սովորոյթը, աւանդը անգիր օրէնքն է այդ նախնական ցեղերի մէջ. ինքը ընդհանուր հրամանատարը—աւելի ուշ՝ թագաւորը—նոյն սովորոյթի և աւանդութեան օրգանն է, նրանց հաւատարիմ կամակատարը. և եթէ խիզախէ դէմ գնալ նրանց՝ գահազուրկ կը լինի։

Այդպիսով իրօք մեռելներն են իշխողը և կառավարողը... Այդ տեսակ ներշնչումներով և այդ ոգով կրթուեց ու դաստիարակուեց անյիշատակ դարերից ի վեր մեզ տիրապետող ցեղը։ Ոչ մի ուժ յետագայում, ոչ մի թարմարար, բարեխառնող հոսանք չ'նկաւ մեղմելու, փափկացնելու սովորոյթների այդ գրանիտիայ ապառաժը։ Իսլամը աւելի ևս քաջալերեց մահաշունչ ռուտինը, աւելի ևս ուժ տուեց աւանդապաշտութեան այդ հսկայ ու այլասեռող պատուհասին, որի առթիւ խօսել ենք արդէն։

Այժմ հետևենք ցեղի արշաւին։ Մեծ կարաւանը ուղղւում է Թուրքեստանի և Իրանի վրայով դէպի Հայաստան և Փոքր Ասիա։ Թարմ, կորովի և ռազմական ուժերի առջև, մին միւսի ետևից խոնարհւում են այդ հիւծուած և ուժասպառ երկիրները։ Ընկնում է արաբական խալիֆութիւնը, ընկնում է նուաստացած, առաջադէմ Պարսկաստանը, շառաչումով խորտակւում է և «լևոր Բիւզանդը, ներքուստ մշակուած անվերջ երկպառակութիւններով, տարրալուծուած, ապականուած... Անվեհեր ձիաւորները ամեն ինչ ոտնակոխ են անում իրենց յաղթական առաջխաղացութեան մէջ, և... առաջին քայլերից իսկ մատնում են իրենց բնութեան ճակատագրական արատը. նրանք իշխում են իրենց նուաճած ցեղերի վրայ, առանց կարենալ կառավարելու. ստորադրում են իրենցից բարձր, քաղաքակրթուած պարսիկներին, բայց ստիպուած են նրանց աջակցութեանը դիմելու՝ երկրի մէջ կարգ ու կանոն սահմանելու համար։ Այդ գիծը յարատևեց նրանց ամբողջ պատմութեան ընթացքում, երբէք նրանք չկարողացան կառավարել հպատակներին, սերտ կապեր հաստատել նրանց հետ, այլ մնացին միշտ օտարներ, միշտ հիւրեր իրենց գրաւած երկիրների մէջ...

Երիտասարդ բանակը, յաղթանակներով քաջալերուած, առաջ գնաց—միշտ դէպի Արևմուտք—կոյր, տարերային մղումով, առանց նպատակի պարզ գիտակցութեան։

Մի նոր ուժ եկաւ արտակարգ թափ ու սլացք հաղորդելու գահավիժուող հօրդաներին։ Այնտեղ, արաբների և պարսիկների միջավայրում, մահմեդականութեան հռչակաւոր որբանի մէջ, ասիական խաժամուժը —մատնելով հանդերձ իր կատարեալ անկարողութիւնը շինարար, կազմակերպիչ աշխատանքի ասպարէզում—վաստակեց մի նոր խթան, որդեգրեց մի մեծ, հզօր գաղափար... Ն՝ գրկեց Իսլամը։

Եւ... մի նոր աշխարհ ծնունդ առաւ երկու կարող ազդակների—ցեղի և կրօնի, Թիւրքի և Իսլամի —ամուսնութեամբ, դաշնակցութեամբ։ L'alliance des

turcs avec l'Islam enfanta un monde *) — ճիշտ է ասում Լավիս։ Այն ժամանակւայ ասիական և եւրոպական քաոսի ու համատարած անիշխանութեան մէջ՝ դա մի ահեղ ու պատկառելի ուժ էր, որ բարձրանում էր հորիզոնում։

Երկու ուժերն էլ—ցեղ և կրօն—համանման տրամադրութիւններով օժտուած։ Երկուսն էլ վառուած յարձակողական ախորժակներով, նւաճելու, իշխելու, յեղրելու անդիմադրելի տենչով։ Եւ միսը միւսին օժանդակեց, ուժեղացրեց։ Իսլամը տագնապի մէջ էր և գրեթէ արդէն մարելու վրայ. քաղաքականապէս սպառւել էին նրան կրող ցեղերը, սպառւել էին ամենից առաջ՝ արաբները։ Նոր ցեղը թարմացրեց հին կրօնը, կեանք ու ոգի ներշնչեց և դարձրեց այն մի հզօր ու ծաւալուն պետութեան պաշտօնական հաւատամք։

Իր հերթին, Իսլամը աւելի ևս բորբոքեց նւաճողական տենդը թիւրքերի մէջ. նա ունեցաւ մի նոր, ահարկու և վրէժխնդիր ռահվիրա, յանձին Օսմանի... այսօրւայ թիւրքական արքայատոհմի և կայսրութեան հիմնադրի։

Մի արիւնոտ ռահվիրայ և մի արիւնոտ, աշխարհադղորդ վրիժառութիւն, ուրվա՞նշ։ Այդ անւան հետ կապւեց այնուհետև ասիական ստեպներից դուրս վիժած հրաբխային հեղեղը, որ գնում էր պատժելու քրիստոնէութիւնը, քաւել տալու այն բոլոր նւաստացումներն ու արհաւիրքները, որ քրիստոնեայ մարդկութիւնը պատճառել էր Իսլամին՝ խաչակրաց արշաւանքների ժամանակ։

Ցեղը արդէն եռում էր աշխարհակալութեան տենդով — կրօնը եկաւ հրահրելու այդ տենդը, վառելու, հիպնոզելու մոլեգնոտ զանգւածները վրէժխնդրութեան երկնային պատգամներով։ Նա եկաւ ազդարարելու այդ խռպան, նահապետական զանգւածներին, որ հաւատի համար կուող ու նահատակողները կարժանանան Մահմեդի երանաւէտ դրախտին, որ այդ գալոց հրապուրիչ դրախտի հանդէպ՝ ներկայ կեանքը երկրորդական, արհամարհելի արժէք ունի, որ „ՋՀԱԴԸ", սրբազան պատերազմը յանուն կրօնի՝ գերագոյնն է փառքերից ու պարտքերից։

Եւ սկսւեց մի նոր, աւելի շքեղ ու շառաչուն դիւցազնամարտի դարաշրջան։ Օսմանը — մի անվեհեր ռազմիկ-հրամանատար, մի յանդուգն ու խելացի կարաւանապետ։ Քայլ առ քայլ նա առաջացաւ իր հազարաւոր ձիաւորներով, առանց ուժեղ դիմադրութեան հանդիպելու նւաճեց Բիւզանդի հսկայ և փխրուն մարմնի բեկորները (XIII դարի վերջերում), հասաւ մինչև Բրուսսա։ Յետնորդները շարունակեցին արշաւանքը, միշտ նոյն աջող, բարբարոսական հանգամանքներում, գրեթէ առանց դիմադրութեան հանդիպելու... մինչև հասան, Մահմեդ II-ի օրով, Կ. Պոլիս (1453 թ.)։ Ապա մի թռիչք դէպի Բալկանները—և ամբողջ արևելեան քրիստոնէութիւնը անցաւ Մահիկին։ Վերջապէս, նոյն ռազմական, անօրինակ խանդավառութեամբ, Ալլա՞հ ու Ջհա՞դ աղաղակելով՝ նրանք հասան Վիեննայի դուռը... ուսկից, սակայն, հոսանքը մի յետադարձ ծփանքով նահանջեց վերստին դէպի Բալկանները։

Եւ հաստատւեց օսմանեան թագաւորութիւնը իր երկու կողերի վրայ, մի ճակատն ուղղած դէպի Ասիա, միւսը դէպի Եւրոպա։

Տիպար-պետութիւն։ Նա եղաւ ցեղի հարազատ պատկերը, նրա ճշմարիտ հայելին, նրա ժառանգութեան ու տրամադրութեան թարգմանը, արտայայտիչը։ Նա թերևս ասիական բռնապետութեան ամենամաքուր ձևն էր, ամենաանաղարտ տիպը։ Գուցէ ոչ մի տեղ վեհապետի անձնիշխանութիւնը չէր հասել այնքան ահարկու չափերի, այն աստիճան սանձարձակութեան։

Մենք արդէն տուինք այդ տիպարի հիմնական առանձնայատկութիւնները և նրա ծագման պարագաները՝ վերը բերած ընկերաբանական մեր ընդհանուր խորհրդածութիւնների մէջ։

Զէնքի ուժով կազմակերպւած պետութիւնը ծայրէ ի ծայր զինւորական դրոշմ էր կրում։ Կրօն, մորալ, բարոյագիտական սկզբունքներ—ամեն բան սպասաւորում է այդ զինւորական պետութեան. ամեն ինչ յարմարեցւած է նրա գերագոյն պահանջներին։ Ուրիշ օրէնք էլ չեն ճանաչում, բացի զինւորական, դաշտային դատ ու օրէնքից, որ գործադրել են դարեր շարունակ, իրենց մրրկոտ, պատերազմական գոյութեան ընթացքում։ Սուլթանը—նախկին զօրավարը—օժտւած է բացարձակ, անսահման իշխանութեամբ, թէ աշխարհիկ և թէ հոգևոր։ Միահեծան բռնապետութիւնը հասնում է կռապաշտութեան։ Վեհապետը մի երկրաւոր աստւած է, „Ամենաբարձրեալի ստւերն է", Արեգակի և Լուսնի եղբայրը, բոլոր թագերի բաշխողը երկրի վրայ։ Նա բարձր է ամեն օրէնքից, նա կարող է յօրինել, ուղղել, ոչնչացնել օրէնքները։ Նա կարող է կոտորել, թալանել, աւերել միլիոնաւոր հպատակներին, նա տէր է բոլոր հողերի և կեանքերի։ Կոյր, բացարձակ հնազանդութիւնը այդ տիրոջ վերաբերմամբ՝ կրօնական դօգմ է, հաւատոյ հանգանակ։

"Ասիոյ սրտապարար դաշտերը, Յունաստանի, Թրակիայի էքնաղ հովիտները, Նեղոսի արգասաբեր աւազանը, Արաբիայի անոյշ համեմանքները, Պարսկաստանի, Վրաստանի, Ունգարիայի մեծագոյն մասի հարստութիւնները, ամբողջ Հայաստանը, Մոլդավիան, Բուլգարիան, Սերբիան, — նրանք բոլորը միանում են այսօր՝ որպէս զի գոհացումն տան մէկ հատիկ էակի—Սուլթանի- ցանկութիւններին"... Այս հակիրճ տողերով վարպետօրէն բնորոշում է հինաւուրց ճանապարհորդ Ռիկաֆա օսմանեան բռնապետութեան տարամերժ

*) Թիւրքերի դաշնակցութիւնը Իսլամի հետ մի նոր աշխարհ ծնեց։

էութիւնը, մեզ արդէն ծանօթ աշխատութեան մէջ *)։

Ռիկաֆաի „այսօրը“ 17-րդ դարու մէջ է։ Սակայն նոյն կացութիւնը յարատևեց և նոյն բնորոշումը մնաց իր լիակատար ուժի մէջ մինչև 1908 թ. յուլիս ամիսը։ Բռնաւորի քահանայքը գերագոյն օրէնքն էր—*lex suprema*. „Եթէ անգամ—գրում է նոյն 17-րդ դարու ճանապարհորդ-հետազօտողը—եթէ անգամ նա հրամայէ ամբողջ բանակների՝ ցած նետուիլ ժայռերից, կամուրջ շինել իրենց մարմիններից, մի գետ անցնելու համար, կամ թէ իրար կոտորել՝ ցիրոյ զարձացնելու համար,—նրանք պէտք է հնազանդուին... Եւ այս ժողովուրդները միանգամայն բնական են համարում միահեծան բռնակալութիւնը“...

Ազնուականութիւն չկար։ Սուլթանական միահեծանութեան գլխաւոր կուռանը—զինուորականութիւնն էր։ Եղե՞լ է արդեօք Թիւրքիոյ մէջ ֆէօդալական ազնուականութիւն։ Թւում է թէ այո։ Բայց յամենայն դէպս, ոչ արևմտեան կաղապարով։

„Հէնց որ ապահովուեց երկրի նուաճումը—ասում է նոյն Ռիկաֆաը—սուլթանը (*le Grand Seigneur*) սկսեց բաժանել հողերը զինուորականների մէջ (*entre les gens de guerre*), իբրև հատուցումն նրանց արժանիքի և կատարած աշխատանքի։ Այդ հողաբաժինները կոչւում են թիւրքերի մօտ „Թիմար“։ Զինուորականները պարտաւորւում էին իրենց տրամադրութեան տակ պահպանելու որոշ թիւով մարդիկ ու ձիեր, որպէս զի պատերազմի երթան ամեն անգամ, երբ սուլթանը կը հրամայէ... Այդպիսով, երկիրը գտնւում էր զինուորների ձեռքում։ Այդ թիմարը շատ նման է Անգլիոյ մէջ մեր ունեցած հողերին, որոնք դրւում են մէկ պայմանով՝ աջակցել վեհապետին պատերազմի ժամանակ. միայն թէ — աւելացնում է Ռիկաֆա — Անգլիոյ մէջ այդ հողային շնորհումները հաստատուած են օրէնքով, մինչդեռ թիւրքերը օգտւում են իրենց շնորհուած հողերից ոչ իբրև սեփականատէր, այլ իբրև սոսկ արդիւնաբեր (*usufruitier*, արդիւնքը վայելող“)։

Այդպիսով, սիւզէրէնը, վեհապետը Թիւրքիոյ մէջ այն չէր, ինչ որ Եւրոպայում։ Թիւրքական ֆէօդալիզմը (աւատապետական կարգուսարքը) շատ տարբեր էր արևմտեանից։ Արևմուտքում դա մի ահագին, լայնածաւալ դաշնակցութիւն էր մանր ու խոշոր բռնակալների, որոնցից իւրաքանչիւրը կատարելապէս անկախ էր իր սահմանների մէջ, ուներ բացարձակ իշխանութիւն իր հպատակների վրայ։ Այդ է ճշմարիտ ֆէօդալականութեան ամենաէական և ամենագարշելի, անհանդուրժելի կողմը։ Դա ամենավատթար բռնակալութիւնն է, ասում է Գիզօ։ Բռնակալը, գաւառի տէրը, կարելի է ասել, ամեն վայրկեան կանգնած է քաղաքացու դրան առջև, հսկում է և դիտում նրա ամեն մի շարժուածքը։ Ամեն վայրկեան նա հաշւում է իր հպատակներին, տեսնում է իր գահից սեփական թագաւորութեան սահմանները... Մարդկային կամքի քահանայքները այդ տեսակ պայմանների մէջ ծաւալւում են իրենց ողբալի տարօրինականութեամբ, և պայմանների, կացութիւնների անհաւասարութիւնը նմանօրինակ պայմաններում աւելի խիստ է, զգալի է... Մի կողմից փառաշուք դղեակներ, հսկայական հարստութիւններ, ուժ, պերճանք, անկախութիւն (իշխող աւատատէրերի մէջ), միւս կողմից՝ սոսկալի թշուառութիւն, տկարութիւն ու ստրկութիւն (ժողովրդային զանգուածների մէջ)։ բնակիչները՝ շարունակ զոհ էին, բուութեան նոխազ աւատատէր իշխանների յաւիտենական վէճերի ու ընդհարումների և կեանքը յուսահատական էր, մշտապէս խանգարուած ու խռովուած... *)։

Ըստ Գիզօի, „զուտ, անխառն բռնապետութիւնը“ (*monarchie pure, absolue*) ունի որոշ առաւելութիւններ՝ ֆէօդալական այդ հարիւրաւոր մանրանկար բռնակալութիւնների հանդէպ։ Այնտեղ միահեծան բռնաւորը սարեր ու ձորերով բաժանուած է իր հպատակներից, ուստի և վերջինները աւելի հանգիստ են, — ամենքն էլ հաւասար միևնոյն ստրկական լծի տակ. կեանքը, հետևապէս, աւելի տանելի է։ Բռնակալութիւնը, այսպէս ասած, մեղմանում է տարածութեամբ, հեռաւորութեամբ...

Այդպիսի „զուտ բռնապետութիւն“ էր օսմանեանը։ Այդտեղ չկային բազմաթիւ անկախ իշխաններ, աւատատէրեր՝ իրենց յաւիտենական ու արիւնոտ մրցումներով. կար միայն մէկ ընդհանուր Արև-Արքայ, նախնի հզօր կարաւանապետը, նրա ժառանգը, աստուածային յատկանիշներով սպառազինուած սուլթանը, որ պահում էր ամբողջ ազգաբնակութիւնը իր տիրական հմայքի, իր փառաշուք, անտեսանելի և անմատչելի գահոյքի և ապարանքի թովչութեան տակ։

Գիզօի ձևակերպութիւնը ընդհանուր առմամբ գուցէ ճիշտ է։ Գուցէ, յիրաւի, տարածութիւնը, հեռաւորութիւնը փոքր ինչ մեղմել է բռնակալութեան պատուհասները Ասիոյ մէջ։ Եղել են, հարկաւ, այնտեղ ևս մանր-մունր տեղական բռնակալներ—ամբողջ վոհմակը փաշաների, վալիների, գայմագամների... Բայց նրանց բռնակալութիւնը սահմանափակ էր, նրանք ֆէօդալ-իշխաններ չէին։

Սակայն միւս կողմից՝ ո՞րպիսի տարբերութիւն։ Արևմուտքը, այնուամենայնիւ, իր ֆէօդալական քաօսով ու ընդհանուր անապահովութեամբ՝ շատ աւելի բարձր է, գերադասելի է մեր ասիական բթացուցիչ, անասնացնող բռնապետութիւնից։ Այդպէս է եզրակացնում և Գիզօ։

Այնտեղ, Արևմուտքում, տարածութիւնը փոքրիկ լինելով վեհապետի և իր սատրապրեալ վասալների (ճորտատէրերի) միջև՝ վերջիններս չունէին ստրկական հպատակութեան ու հնազանդութեան զգացումներ դէպի վեհապետը։ Զարգանում էր նրանց մէջ—այդ աւատական, ազնուական դասակարգի մէջ—անկախութեան, անհատականութեան, մարդկային արժանապատուութեան

*) *Histoire de l'état présent de l'Empire Ottoman*. 1670 թ.։

*) *Guizot, Histoire de la France, I v.*

զգացումը, որ այնպէս յատուկ է արևմտեան ասպետական միջնադարին և որը ժամանակով, ի շարս այլ գործօնների, պիտի բանար դռները ժողովրդական ազատութեան։

Փնտրեցէ՛ք այդ անկախութեան ու արժանապատուութեան զգացումը Արևելքում, Թիւրքիայում։ Սադրազամից մինչև յետին գիւղացին—ամենքը, բոլոր հպատակները անմռունչ, գեանատարած ստրուկներն են վեհապետի, անդադար քծնում են, շողոքորթում, երկրպագում։

„Այս կայսրութեան մէջ ստրուկներ միայն կան—ասում է նոյն Ռիկաֆտ—և հրաշք կը լինէր, եթէ գտնուէր որևէ մէկը՝ ազատութեան սէր ունեցող“...

Հեգելի խօսքը արդարանում է մասամբ — այդտեղ, արևելեան բռնապետութեան մէջ՝ միայն „մէկն է ազատ“—միահեծան թագաւորը։ Նրա ազատութիւնն էլ, սակայն, յարաբերական է... ենթակայ պալատական մշտնջենաւոր դաւերի ու ցնցումների, պարբերական մահափորձերի...

Ըմբոստացումներ լինում էին նաև Թիւրքիայում — մանաւանդ հեռաւոր նահանգների մէջ. այդպէս է վկայում Ռիկաֆտ. բայց նրանք շուտով խեղդւում էին արեան հեղեղներում, և սուլթանական ջախջախիչ գերիշխանութիւնը անփոփոխ կերպով յարատևում էր դարերի խոր ու միապաղաղ գիշերի մէջ... Շրջապատած փոքրաթիւ կամարիլլայով, յենուած զինուորական նոյնպէս փոքրաթիւ լեգէօնի վրայ, նա կարողացաւ երկար դարեր կանգուն պահել ասիական „ջինջ բռնապետութեան“ պաշտամունքը տասնեակ միլիօնաւոր ազգաբնակութեան մէջ։

Ապստամբութիւնը, զանգուածային ըմբոստացումը դիւրին բան էլ չէր։ Մենք արդէն խօսեցինք այդ մարդկային նախիրների բարացած, աւանդապաշտ բարքերի ու սովորոյթների մասին։ Զուտ ցեղային-հոգեբանական պատճառներին աւելանում էր և տնտեսական պատճառը։ Սարսափելի տուրքերը, որ դնում են մարդկանց աշխատանքի վրայ, հասցնելով նրանց ծայրագոյն աղքատութեան, անընդունակ են դարձնում այդ մարդկանց՝ ըմբոստանալու, որքան էլ շատ տանջւին նրանք.— ճիշտ է նկատում Բակօն իր „Փորձ“երից մէկի մէջ... „Անհնարին է, որ հարկերի ծանրութեան տակ տնքացող մի ժողովուրդ քաջ լինի, արիասիրտ. մի ազգ չի կարող միանգամայն լինել առիւծ և բեռի տակ հեծող էշ“...

Հռչակաւոր անգլիացու այդ իմաստուն խորհրդածութիւնը ճիշտ է մասնաւորապէս թիւրքահայ ժողովրդի կացութեան ու հոգեբանութեան նկատմամբ՝ մինչև 1890 թուականը, մեր շարժման արշալոյսը...

Աւատականութիւնը դեռ չփթթուած՝ մարեց. նա յարատևեց, կիսատ-պռատ, միայն Հայաստանում ու Քիւրդիստանում—բրդական դերբեյութեան ձևով—և մի քանի այլ գաւառներում։ Ռիկաֆտի վկայութիւնը այդ մասին ևս պարզորոշ է.

„Պէտք է նկատել, որ Քիւրդիստանը (la Curdie) նաճելուց յետոյ՝ ամբողջ երկիրը բաժանուեց սանջակների, այն տարբերութեամբ, որ այդ սանջակների հողերը փոխանցւում էին ընտանիքներին ժառանգական իրաւունքով. զաւակները յաջորդում էին ծնողներին... մինչդեռ ուրիշ սանջակների մէջ աւատական հողատէրերը վճարում են որոշ տուրք թագաւորին և պահում ու մշակում են իրենց հողերը այն պայմանով միայն, որ ծառայեն այդ թագաւորին և ի հարկին հետևեն նրանց՝ պատերազմների ժամանակ“... Քրդերը, ասում է Ռիկաֆտ, բացարձակ տէրեր են իրենց հողերի ու գոյքերի։

Ինչո՞ւ մարեց ֆէօդալական սիստեմը, ինչո՞ւ չզարգացաւ ազնուականութիւնը՝ թէ տիրապետող և թէ գրեթէ բոլոր հպատակ ցեղերի մէջ... և այդպիսով դասակարգային շերտաւորումը իր անդրանիկ և էական շրջանի մէջ առանձնայատուկ ուղղութիւն առաւ, միանգամայն տարբեր արևմտեան էւոլիւսիօնի ընթացքից և օրէնքից...

Դա մի ուշագրաւ երևոյթ է և դժուարալոյծ մի կնճիռ։ Մի երևոյթ՝ որ, անտարակոյս, ունեցել է անդրադարձումներ թիւրք կայսրութեան, ապա ուրեմն և հպատակ ժողովուրդների ճակատագրի վրայ։ „Ջինջ“, բացարձակ միապետութիւնը կանգուն մնաց, իբրև միակ տէր հրապարակի, առանց մրցակից և հակառակորդ դասակարգերի... Զինուորականութիւնն անգամ ի վերջոյ նրա ձեռքով իսկ խորտակուեց... զուտ արևելեան մեթոդով... կոտորածով։ Ինչպէ՞ս բացատրել այդ տարամերժ, ըստ երևոյթին աննօրմալ կացութիւնը, կամ— ուրիշ խօսքով—ինչպէ՞ս խափանուեց նորմալ, բնականոն էւոլիւսիօնը։

Եթէ կամենանք համառօտակի բանաձևել, պիտի ասենք, որ մօտաւոր պատճառները տնտեսական են, իսկ հեռաւորը՝ ցեղային-հոգեբանական։

Ազնուականութիւնը զարգանում է տնտեսական խարիսխների վրայ, իսկ նրանք վաղաժամ զարնուեցին և ոչնչացան նոյն միահեծան դեսպոտի ձեռքով։ Նա միակ սեփականատէրն էր կայսրութեան մէջ և չէր հանդուրժում որևէ ուրիշին։ Նա իրաւական և իրական տէրն էր երկրի անհուն գանձերի—և բոլոր հպատակները վայելում էին միայն նրա շնորհները, կարող էին ստանալ որևէ գոյք, սեփականութիւն միմիայն նրա վեհանձն առատաձեռնութեամբ։ Նա չէր թոյլ տալիս անգամ զօրաւոր, իշխանազն ստորադրեալներին՝ կտակելու իրենց վայելած հողերն ու հարստութիւնները իրենց ժառանգներին։ Բռնակալի կամքը միջամտում էր ամեն պարագայում և մեռնողի գոյքերը յաճախ պարզապէս գրաււում էին։ Առանց ճանաչելու Մակեավելլիին, սուլթանները հարազատութեամբ կիրառել են նրա նշանաւոր հրահանգը։

Անհատների և խմբումների ամբարտաւանութիւնն ու

ըմբոստացումները զսպելու համար, ամենաապահով և անաղմուկ միջոցն է՝ փակել ճամբան, որով նրանք կարող են ուժ ձեռք բերել և հասնել իշխանութեան...

Հարստութիւնը ուժի և իշխանութեան աղբիւրն է. հարկ էր, ուրեմն, ցամաքեցնել այն։ Եւ սուլթանը չէր տոկում, որ իրենից զատ՝ որևէ մէկը ժառանգաբար տէր դառնայ հարստութեան։

Դիմենք դարձեալ Ռիկաֆտին.

Համարելով ինքզինքը փաշաների աւագ եղբայր, սուլթանը գրաւում էր այդ փաշաների ամբողջ գոյքը նրանց մահից յետոյ. իր քէֆի համաձայն բաժին էր հանում մեռածի զաւակներին, մնացածը իւրացնում էր... Այդ միջոցով աւերւում էին մեծ դերդաստանները... Այդպէս լուծուեց ժողովների ազնւականութիւնը. բազմաթիւ մեծ ընտանիքներ զրկուեցին, քայքայուեցին... Սուլթանը կործանեց հին ազնւականութիւնը։

Թերևս չափազանցութիւն չէ Ռիկաֆտի վերջին ֆրազը։

Եթէ Արևմուտքում հզօր, ազդեցիկ բռնակալները երբեմն—իրենց ահեղ անհատականութեան ու հեղինակութեան ուժով—կարողացել են խորտակել ժամանակաւորապէս, անդամալուծել ամբողջ դասակարգերի բնականոն զարգացումը, ապա զարմանալի չէ, որ ստրուկ ու տիրապաշտ Արևելքի մէջ նոյն դահճային պաշտօնը աւելի ևս յաջողութեամբ կատարել են սուլթանները... Եւ նրանք կատարել են յենուած այն կոյր, բնազդային պաշտամունքի, այն հլու, անասնական հնազանդութեան վրայ, որ տածում են մահմեդական Արևելքի զանգուածները դէպի Խալիֆն ու Հրամանատարը... Մի հնազանդութիւն, որ գալիս է նոյն ասիական ստեպներից, նոյն թափառական ու պատերազմիկ համակենցաղի օրերից... Մի սոսկալի, մահաշունչ կրաւորականութիւն, որ դարձել է ցեղի հոգեբանութեան տիրապետող յատկանիշը...

Բռնաւորը ամեն ինչ էր... անգամ տէր, հրամանատար տնտեսական գործօնների։ Եւ նա մնաց այդպիսին ոչ միայն այն հեռաւոր դարաշրջանում, այլ և նոր ժամանակներում, 19-րդ դարի վերջում, երբ նորագոյն արդիւնաբերութեան և քաղաքակրթութեան Արևը սկսել էր ճառագայթել դէպի բոլոր, անգամ հեռուասիական հորիզոնները։ Մենք տեսանք, թէ ինչպէս մի Աբդիւլ Համիդ կարողացաւ իր դիւային, կործանարար հանճարով իր կամքին ու քմահաճոյքին ենթարկել, հպատակեցնել կայսրութեան ամբողջ կեանքի մեքանիզմը, կարողացաւ խափանել, խեղաթիւրել, այլանդակել տնտեսական գործօնները, բովանդակ զարգացումն ու առաջադիմութիւնը...

Փաշաները, ասում է Ռիկաֆտ, կրթւում էին և դաստիարակւում յայտնի ոգով, արքայական պալատի մէջ, դառնում էին մի մի հլու սպասաւոր և ապա ղրկւում էին այլ և այլ ծայրեր կառավարելու։ Ամեն միջոց ի գործ էր դրւում, որպէս զի նրանք չափից աւելի բարձրանային և մանաւանդ հարստութիւն չ'ամբարէին։

Ուշագրաւ են են 17-րդ դարի անգլիացի ուղևորի „տնտեսական - մատերիալիստական“ մեկնութիւնները Թիւրքիոյ կացութեան ծանրակշիռ իրողութիւնների վերաբերմամբ։ Նա բացատրում է արուեստի և արդիւնաշահ աշխատանքների բացակայութիւնն ևս զուտ տնտեսական պատճառներով։

Եւ ինչո՞ւ Թիւրքերը չեն զարգացնում արուեստ, վաճառականութիւն, երկրագործութիւն, ինչո՞ւ նրանք չեն շինում լաւ տներ... Որովհետև գիտեն, որ իրենց չի պատկանում գոյքը, չունին ապահով ժառանգներ։

Այդ „պատճառը“, տարաբախտաբար, երկրորդական է։ Նա վերացաւ յետագայում և այնուամենայնիւ տիրապետող ցեղը անզօր եղաւ—մինչև օրս էլ անզօր է—զարգացնելու արուեստ, ճարտարապետութիւն, վաճառականութիւն և այլն։ Աւելի խոր պատճառները կան, թագնուած ցեղային-ժառանգական խորարմատ բնազդների մէջ, որոնց համար լուսաբանող իրողութիւններ դեռ պիտի բերենք։ „Թիւրքերը արհամարհում են արուեստները, գիտութիւնը և նոյնիսկ առևտուրը, նրանց մօտ յարգի է միմիայն զինուորական պետութիւնը“, ասում է նոյն Ռիկաֆտը։

Սակայն, „զինուորական համայնքը“ չմնաց, հարկաւ, միանգամայն հօմօժեն, միապաղաղ։ Աշխատանքի բաժանում և դասային շերտաւորումներ յայտնի չափով առաջ եկան և այդտեղ։ Տարաբախտաբար, այդ շերտաւորումները չ'առաջադիմեցին ոչ խորութեամբ և ոչ լայնութեամբ։ Նրանք մնացին թեթև, մակերեսային։ Մասնաւորապէս վաճառականութիւնը, որ առաջին խոշոր փուլն է քաղաքակրթութեան էւոլիւսիոնի, որ ապրանքների փոխանակութեան հետ առաջ է բերում ժողովուրդների մէջ նաև մտքերի փոխանակութիւն ու շփում—վաճառականութիւնը միշտ մի տեսակ խորթ ու օտար զբաղմունք մնաց Թիւրք իշխող ցեղի համար. նա մինչև օրս էլ տակաւին իր խակ, նահապետական վիճակի մէջ է...

Դասակարգային շերտաւորումի ու խտրութիւնների դէմ-յանդիման կանգնած էր, վերջապէս, մի այլ ճնշող, կաշկանդիչ ուժ—կրօնը։ Արդէն տեսանք մեր նախընթաց յօդուածների մէջ, թէ ինչպէս Ղուրանը ինքզինքը թշնամի էր յայտարարում դասակարգային տարբերումների և քարոզում էր հաւասարութիւն հաւատացեալների մեծ գերդաստանում։ Իսլամը այդպիսով մի առանձին հակառակութիւն պիտի ցոյց տար ազնւականութեան։ Եւ, անշուշտ, նա իր որոշ դերն ունեցաւ այդ ազնւական դասակարգի վաղաժամ անդամալուծման մէջ։ Նրա վրայ էր յենւում մասամբ բռնապետը, նրա տառի և հրահանգի համաձայն էր վարւում, երբ խորտակում էր այդ դասակարգի գոյութեան խարիսխները։

Շատերին է ուրախացնում երևոյթը։ Մասնաւորապէս, Թիւրք իդէօլոգները, իրենց կրօնի „համբերողութեան“ փաստի հետ՝ սիրում են յիշատակել և դրատել

ազնվականության չգոյությունը թիւրք ցեղի մէջ։ Լա՞ւ էր, թէ վատ՝ այդ չգոյութիւնը։ Բարեբա՞խտ, թէ չարաբախտ հանգամանք՝ երկրի ընդհանուր, քաղաքական և սոցիալական զարգացման համար։ Ահա կնճիռ։ Բակօնն ասում է. „ամեն մի պետութիւն, ուր չկայ ազնվական դասակարգ, մի զուտ բռնակալութիւն է—ինչպէս թիւրքերինը—որովհետև ազնվականութիւնը չափաւորում է, բարեխառնում ինքնակալութիւնը“։

Բակօն լիովին իրաւացի է, եթէ ի նկատի ունի իր սեփական հայրենիքը։ Անգլիական ազնվականութիւնը, յիրաւի, շատ վաղաժամ, դեռ XIII դարի մէջ, կարողացաւ սանձ դնել միահեծան բռնապետութեանը, խլեց նրանից մի յայտնի սահմանադրութիւն ու ազատութիւն, որ չուկէան եղաւ հեռաւոր և բախտաւոր սահմանադրական զարգացումի։

Նոյնը, սակայն, դժուար է ասել ռուսական, սպանիական, գերմանական, աւստրիական, ունգարական և մի շարք ուրիշ երկիրների ազնվականութեան մասին, ուր նա (այդ ազնվականութիւնը) ամուր պատուարն է միապետական գահի ու ռէժիմի։

Ազնվականութիւնը գրեթէ ամենուրեք հանդիսացել է և այսօր էլ դեռ հանդիսանում է էապէս ճնշող ու վնասաբոյծ տարր։ Սակայն մի հանգամանք կայ։ Այդ դասակարգի մի խոշոր, պատմական ծառայութիւնը կայ, որ անկարելի է ժխտել։ Գրեթէ ամեն տեղ նա զօրաւոր խթան է եղել մտաւոր գործունէութեան, գրագիտութեան և գիտութեան, գեղարուեստի և փիլիսոփայութեան։ Մտաւոր մարզանքները շատ թէ քիչ բարգաւաճել են միմիայն այն երկիրների ու հասարակութիւնների մէջ, ուր եղել է բարեկեցիկ մի դասակարգ, ազատ առօրեայ նիւթական կեանքի մտահոգութիւններից։ Եւ այդ դասակարգը եղել է ազնվականութիւնը (նոյն պաշտօնը կատարել է մասամբ կղերը)։

Դժուար է պնդել, ի հարկէ, որ թիւրքական ազնվականութիւնն ևս—եթէ նա ճաղոպրէր սուլթանների անձնիշխանութեան ճիրաններից և կանգուն մնար արևմտեանի պէս, իբրև անկախ ու բարեկեցիկ դասակարգ — դժուար է ասել, թէ նա կը նուիրէր իր ազատ ժամանակն ու միջոցները մտաւոր, գեղարուեստական, կուլտուրական մարզանքների, կըստեղծէր թիւրք իմացական քաղաքակրթութիւն, կը չափաւորէր նաև միահեծան իշխանութիւնը... Դժուար է ենթադրել այդ բոլորը, քանի որ այնքա՞ն ձախորդ, աննպաստ են ցեղի զարգացման ու առաջադիմութեան ընդհանուր պայմանները։ Կորով, տոկունութիւն, յարատևութիւն աշխատանքի մէջ,—ահա թէ որոնք են քաղաքակրթութեան ու առաջադիմութեան մեծագոյն խթանները։ Միջավայրը զօրաւոր է և ազդեցիկ, անտարակոյս, և ոչ մի ազգ չի քաղաքակրթուել ինքնիրեն, իր սոսկական ուժերով, առանց մղումն ստանալու շրջապատող միջավայրից։ Սակայն, մարդկային գիտակցական, նպատակաւոր ճիգն է, մարդկային ստեղծագործ ու յեղափոխիչ ուժն է, որ յարաճուն կոհակներով առաջ է մղում պատմութեան անիւը, փոփոխում է միջավայրը, հակազդում է բնութեան կոյր ուժերի դէմ, շահագործում նիւթն ու ուժը, հում բերքերը, զարգացնում է գիտութիւնը և դրանով իսկ յաղթահարում տարերքները, աճեցնում, բազմապատկում նիւթական և իմացական գանձերը... Մինչդեռ բնական, տարերային ազդակները մնում են ընդհանրապէս անփոփոխ, միօրինակ։ Առանց այդ գիտակցական հակազդեցութեան, չկայ մշակոյթ, քաղաքակրթութիւն. իսկ այդ արգասաւոր հակազդեցութիւնը, այդ համբերատար և կանոնաւոր աշխատանքը, այդ տոկուն ու յարատև ճիգը, եռանդը չեն մտնում տիրապետող ռազմիկ-ցեղի հիմնական առաքինութիւնների մէջ, չեն հաշուում այդ ցեղի իշխողական, հրամայողական խառնուածքի հետ։ Ահա թէ ինչու, դժուար թէ նա շատ թէ քիչ զգալի ոստիւններ անէր կուլտուրական արժէքների ասպարէզում—գրականութեան, փիլիսոփայութեան, արուեստի, ճարտարապետութեան և այլն—եթէ անգամ զարգանար թիւրքական արիստոկրատիա, „բարեկեցիկ ազատների“ դասակարգ։ Խիստ տեղին ու բնորոշ է թուում Ռիկաֆտի վերոյիշեալ յայտարարութիւնը. „Թիւրքերը արհամարհում են արուեստները, գիտութիւնը և նոյնիսկ առևտուրը. նրանց մօտ յարգի է միայն զինուորական պետութիւնը“...

Յամենայն դէպս, կարելի է ապահովաբար ասել այն՝ որ ազնվականութեան կաշկանդումը, ինչպէս նաև առհասարակ դասակարգային շերտաւորման թոյլ ու դանդաղ բնոյթը եղել են միշտ պերճախօս յայտարար, որոշ չափով նոյնիսկ պատճառ (աւելի ճիշտ՝ պայման) իշխող ցեղի անշարժութեան, նրա մտաւոր, քաղաքակրթական անօրինակ յետամնացութեան։ Առանց այն էլ՝ ցեղը ամուլ էր թէ նիւթական և թէ իմացական արժէքների տեսակէտից. պետութիւնը և կրօնը եկան աւելի ուժ տալու այդ ամլութեան։

Ասացինք—„անօրինակ“։ Եւ դա հազիւ թէ չափազանցութիւն է։ Բնութիւնը, ինչպէս տեսանք իր բազմապիսի, խայտաբղէտ միջավայրով և մանաւանդ բերրի, մշակելի հողերով ուժգին խթան է եղել իր մէջ ապրող ժողովուրդների քաղաքակրթական առաջադիմութեան։ Ցայտնի է նաև, որ նոյն քաղաքակրթութեան առաջխաղաց հոսանքին մեծապէս նպաստում է բաւաների, ցեղերի խառնուրդը։ Թիւրքերը առատօրէն պարգևատրուած էին միջավայրի այդ անհրաժեշտ բարիքներով, երկար դարեր նրանք ապրեցին աշխարհագրական խիստ նպաստաւոր դիրքերի մէջ. երկար դարեր նրանք խառնուեցին իրենց հպատակ ցեղերի հետ և նրանց նախնի բա-

սային-մարդաբանական տիպարը ահագին փոփոխութիւն կրեց... Այդքան բարելաջող պայմաններում նրանց այսօրուան յետամնացութիւնը յիրաւի ապշեցուցիչ է, անօրինակ։

Ցեղական - ժառանգական դետերմինիզմ... Անդիմադրելի *fatalité*, ճակատագրականութիւն... Ընդունե՞լ արդեօք Վայսմանի հետ, որ ցեղի առաջին կորիզը, այն նախնական սաղմանիւթը, որ կազմել է անդրագոյն, անյիշատակ դարերի մէջ, գոյամարտի յորձանուտ ալիքներում—ընդունե՞լ արդեօք՝ որ, յիրաւի, այդ խորհրդաւոր սաղմանիւթը մի ցեղի մէջ յաւերժօրէն փոխանցւում է սերնդէ-սերունդ, առանց կրելու էական, շօշափելի փոփոխութիւններ ժամանակի անծայրածիր հոսանքում, առանց մատնելու ցեղի սկզբնական և հիմնական բնոյթը, նկարագիրը նոր կացութեանց ու պայմանների խեղաթիւրիչ ազդեցութեան...

Ընդունե՞լ արդեօք Լետուրնօի և մի շարք ուրիշ սոցիօլօգ-մարդաբանների հետ՝ որ ցեղային հավախմբումները խորապէս անհաւասար են, որ կայ ցեղերի ե ր ա ր խ ի ա (*hierarchie*), ոմանք օժտուած աւելի, ուրիշները նուազ չափով, ոմանք կոչուած բարձրանալու քաղաքակրթութեան սանդուխի ամենավերին աստիճանները, ուրիշները դատապարտուած դեգերելու յետամնաց վիճակի մէջ, պիրամիդի ստորոտներում, առանց ուրոյն ստեղծագործող աշխատանք ցուցադրելու, առանց իսկ կարողանալու ընդօրինակել, մարսել աւելի բարձր ազգերի առաջադիմութեան արգասիքները...

Պատասխանել վճռականօրէն—անհնարին է։ Այսպէս թէ այնպէս, սոցիօլօգիայի, ընկերաբանութեան ամենաուշագրաւ նիւթերից մինն է այդ եզակի երևոյթը, թիւրքերի ու թաթարների այդ վիթխարի զանգուածները, որ հազարաւոր տարիների իրենց գոյութեան ու արշաւների ընթացքում ոչ մի անգամ, ոչ մի տեղ չկարողացան խարիսխ ձգել ճշմարիտ քաղաքակրթութեան, ընդհակառակը՝ ձիերի սմբակների տակ բնաջինջ արին քաղաքակրթական ամբողջ սիստեմներ, ցամաքեցրին ստեղծագործող աշխատանքի անհամար աղբիւրներ...

Եւ թւում է, թէ այսօր, օսմանեան սահմանադրութեան քառամեայ փորձից յետոյ, ընկերաբանական այդ կնճիռը աւելի ևս սուր ու ցաւոտ այժմէութիւն է ստանում... Հանդէպ այն յոռի, բացասական մտայնութեան, հանդէպ այն անդարմանելիօրէն անձուկ ոգու և իներտ ու ապիկար ընթացքի՝ որ մատնում է տիրապետող ցեղի տիրապետող կուսակցութիւնը,—մի մարմին, որ ներկայացնում է ցեղի ամբողջ, գրեթէ ամբողջ գաղափարական ու առաջադիմական հիւթը, որ եկել էր զարմացնելու աշխարհը արևմտեան գաղափարների մեծաշուքնդ ցուցադրութեամբ, և որ սակայն... միշտ աւելի և աւելի խորացնում է անդունդը իր և այդ գաղափարների միջև, միշտ աւելի սուզւում է նոյն գորշ, յետամնաց, ասիական ռուտինի մէջ, որ իր ծնող զանգուածի դարաւոր, անփառունակ սեփականութիւնն է...

Ազգերը քաղաքակրթւում են՝ ինքնուրոյնաբար ը ս տ ե ղ ծ ա գ ո ր ծ ե լ ո վ կամ թէ այլոց մտքի արդիւնքներն ը ն դ օ ր ի ն ա կ ե լ ո վ, մարսելով։ Այստեղ—ոչ մէկը և ոչ միւսը։ Մինը իսպառ բացակայում է, միւսը կաղում է չարաչար։ Դիմենք դարձեալ հեղինակաւոր և օտար վկայութեանց։

„Գրեթէ բոլոր արուեստները մանկութեան մէջ են նրանց մօտ, կամ միանգամայն անծանօթ են“,—ասում է մի նշանաւոր ֆրանսիացի տուրիստ Օ լ ի վ ի է, որ ճանապարհորդել է եւրոպական Թիւրքիոյ մէջ, XIX դարի սկզբում։

Վաղուց ի վեր եւրոպացիք և մանաւանդ ֆրանսիացիք փորձել են սովորեցնել նրանց (թիւրքերին) մի քանի օգտակար արուեստներ. բայց արդիւնքը քիչ բան է եղել, վասն զի ազգային գոռոզութիւնը, տգիտութիւնն ու մոլեռանդութիւնը արգելք են լինում։ Ֆրանսիացիք են սովորեցրել նրանց՝ նաւեր, հրացաններ ու սիններ շինել, երկաթ մշակել և սապոն պատրաստել *)։

Նպաստաւոր կարծիք չունի թիւրքերի ստեղծագործական եռանդի մասին նաև գերմանացի հռչակաւոր արևելագէտը, Ֆ օ ն Հ ա մ մ ե ր, որ 30 տարի ուսումնասիրել է Թիւրքիան և որի անաչառ աշխատութիւնը դեռ այսօր ևս ամենահեղինակաւոր աղբիւրն է այդ նիւթի նկատմամբ։

Թաթարական ծագում ունենալով, նրանք (օսմանցիք) դեռ պահպանել են ստեպների կեանքի հետքերը, որ հինգ դարու քաղաքակրթութիւնը չկարողացաւ ջնջել։ Բնութիւնը օժտել է նրանց խելքով և սրտով, բայց մերժել է տալ ճաշակ և ընդունակութիւն արուեստի համար։ Մինչև իսկ արաբ ու պարսիկ բանաստեղծների լաւագոյն երկերը, ընկնելով թիւրքերի ձեռքը, խոշնում են կամ տալիս են օտարօտի վիժմունքներ։ Թիւրքերը պարզ են, ուղղամիտ, չափաւոր, հաւատարիմ, երախտագէտ, բայց բիրտ են, տգէտ, շահասէր և ծոյլ։ Նրանց մէջ նօսմադի լաւ յատկութիւնները միացած են կիսաքաղաքակրթութեան կասկածելի արդիւնքների հետ։ Ընդհանրապէս, նրանք բարի են. վատ են միայն պաշտօնական շրջաններին պատկանող անձինք, որոնց փճացնում է կառավարութիւնը։

Ահա մի այլ հինաւուրց հեղինակութիւն—անգլիացի Համիլտոն — որ նոյնպէս երկար տարիներ պտտել և ուսումնասիրել է Արևելքը.

Ես կրկնում նրանց (թիւրքերի) լաւ յատկութիւններից։ Հիւրասէր են բառի ճշգրիտ իմաստով. առհասարակ կարեկցոտ են և յաճախ վեհանձն։ Ստորին դասը ընդհանրապէս ազնիւ է և ես այդ համարում եմ նրա մեծագոյն արժանիքը։ Բայց այդ առաքինութիւնը յատուկ չէ բարձր դասակարգին... Միւս կողմից նրանք բոլորը տգէտ են, կասկածոտ, ցուցամոլ և կեղծաւոր, հպարտ և առանց պատուի զգացման, շողոքորթող, առանց համեստութեան... Պետական ու վարչական գործերում՝ բռնակալ են, կրօնի մէջ դոգմապաշտ և անհամբերող։ Իրենց սեփական պատմութեանը նոյնքան անծանօթ են, որքան և ուրիշ ազգերի պատմութեանը. այդ հանգամանքը նկատելի է անգամ լաւագոյն կրթու-

*) *Olivier, Voyage dans l'Empire Ottoman*, 1801—1807 թ. I հատ. էջ. 26—27։

թեան տէր անհատների մօտ։ Նրանց առաքինութիւնները— վայրենիի առաքինութիւններ են *)...

Երկու անաչառ և իրազեկ գնահատողների շեշտած պակասութիւնները մեծ մասամբ դիտելի են նաև քրիստոնեայ ու այլ ցեղերի մէջ. մենք կուզէինք այդ հեղինակաւոր բնորոշումների մէջ վեր հանել միայն մի քանի կէտեր, որ խոշոր չափով յատուկ են Թիւրքերին. „ծոյլ, անհոգ, անհամբերող, զինուած լոկ վայրենութեան առաքինութիւններով“. ահա թէ ինչ է ասում լաւատեղեակ, շիտակ, անկողմնապահ պատմագիրը. և նոյնը կրկնում են բազմաթիւ այլ հեղինակաւոր բերաններ, սկսած այն օրից, երբ „Հիւանդ մարդը“ դարձել է արիւնոտ կուսախնծոր միջազգային ախորժակների և մրցութիւնների կրկէսում..

Շափազանց յատկանշական են Օլիվիէի հետևեալ տողերը.

Նրանք վայելում են ամենուրեք տնկեցների, վարձակալների անփութութեամբ (ils jouissent partout avec l'insouciance des locataires). քանդում են ամէն ինչ և երբէք չեն շտկում։

„Քանդում են—չեն շտկում“... Այդպէս է վկայում և գերմանական մեծահամբաւ զօրավարը—Մ օ լ տ կ է, իր „Թիւրքական նամակներ“-ում (1835—1839 թ.)։

Վարձակալի հոգեբանութիւնը երևան է գալիս և ք ա ղ ա ք ն ե ր ո ւ մ, որոնք ի տեղի շէնցնելու և բարգաւաճելու՝ ամայանում են ու խորասուզւում աւերակների փոշու մէջ... Գեներալ Մօլտկէն գրում է կ օ ն ի ա յ ի մէջ իր արած պտոյտի առթիւ.

Թիւրքական քաղաքները առհասարակ ամայութեան կերպարանք ունին, բայց ոչ մէկը այնքան ամայի չէ, ինչպէս Կոնիա։ Աւերումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որքան մարդկային ձեռքը... Մահմեդականները վերածել են եկեղեցիները մզկիթների և հէնց այդ մզկիթները այսօր ընկած են աւերակների մէջ։ Մի բարձր ու լայնարձակ պարիսպ հարիւրաւոր աշտարակներով ընդգրկում է ամայի մի դաշտ, ուր թափուած են մի քանի փլատակներ... Թիւրքական մի խոշոր արձանագրութիւն իւրաքանչիւր աշտարակի վրայ վկայում է այցելուին, թէ ովքեր են այդ աւերածը նիւթող բարբարոսները **)...

Աւելի փայլուն և նախանձելի վիճակի մէջ չէ և մայրաքաղաք—Պոլիսը՝ XX դարում։ Բաւական է մի փոքրիկ պտոյտ, մի թեթև ակնարկ՝ տեսնելու համար աւերածի և անշարժութեան այդ աւանդական ոգին...

Ահա թէ ինչպէս է նկարագրում Օլիվիէ՝ իշխող ցեղի աւերիչ աշխատանքը՝ կ ր ե տ է ի մէջ, անցեալ դարու սկզբներում.

Նրանց (քրիստոնեաների) հունձքը շարունակ յափշտակում է աղան (թիւրք կառավարիչը), սեփականութիւնը գրաւում է փաշան, մինչդեռ ենիչերիները մշտապէս անարգում են ու ծեծում դաղանակով... Եւ այդ բոլորը շարունակ տեսնելով ու ապրելով՝ յոյն երկրագործները բնականաբար չունին եռանդ, ցանկութիւն՝ զարկ տալու արդիւնագործութեան, հողը մշակելու... քանի որ արդիւնքը պիտի անցնէ իրենց ատելի տարրի ձեռքը... Նրանց դաշտերը աւերւում են օրէցօր, ձիթէնին փճանում է, խաղողը կործանւում... Ցոյները վհատած, չեն էլ աշխատում շտկել, բարւոքել։

Ճարտարարուեստը գրեթէ զերօ է աղաների հսկողութեանը ենթակայ յոյն գիւղերի մէջ։ Դողալով, նրանք հազիւ կարողանում են գործել մի քանի կոշտ պաստառներ... Երբ կանայք նոր զգեստ են հագնում, սովորաբար խույս են տալիս վառ գոյներից, վախենալով, թէ ոստիկանապետը կամ մի այլ թիւրք կը խլէ և նոյնիսկ կ'անարգէ կնոջ։

Թիւրք գիւղերի մէջ... մշակողները ապահով են, երկիւղ չունին, տուրքերն էլ աւելի թեթև են... Եւ այնուամենայնիւ, ոչ երկրագործութիւնը, ոչ էլ ճարտարարուեստը չեն զարգանում նրանց (թիւրք շինականների) մօտ։

Կարծես թէ ծոյլ ու տնշուշտ ձիապիծակների պէս, նրանք եկել հաստատուել են օտար հողի վրայ, որպէս զի միայն ուտեն, ապառեն—ուտանց ճիգի և հոգսի—այն բարիքները, որ ուրիշներ իրենց աշխատանքով վաստակում են հողից կամ թէ իրենց ճարտարարուեստով ստանում են դրսից։

Այդ օտարականների (թիւրքերի) բնաւորութիւնը այն աստիճան շեշտած է, որ նրանք նոյնն են կայսրութեան բոլոր կողմերում... Սակայն Պոլսի և ծովեզերեայ գլխաւոր քաղաքների մէջ՝ նրանք ընդհանրապէս փոքր ինչ աւելի մեղմ են, փոքր ինչ աւելի կրթուած, քան ներքին նահանգներում։

Վերին աստիճանի աննպաստ կարծիքներ։ Եթէ այդպէս էր կացութիւնը եւրոպական Թիւրքիոյ մէջ, ուր իշխող տարրի բարքերը համեմատաբար մեղմ էին, ապա կարելի է մօտաւորապէս երևակայել Անատոլուի, Հայաստանի վիճակը...

Եւ այդ մռայլ, յոռետես կարծիքների արձագանքն էր Գ ր ի գ ո ր Ա ր ծ ր ո ւ ն ի ն, երբ նա Թիֆլիսի իր նշանաւոր հրապարակային դասախօսութեան մէջ (1879 թ.) յայտարարում էր, փոքր ինչ աւելի խտացնելով գոյները.

„Թիւրքը մի պարապ, անհոգ և անօգուտ կերպով սպառող էակ է... Նա ապրում է հայերի հաշիւին“... „Հայը — այդ ասիաբնակ եւրոպացին—չի փճացնում բնական հարստութիւնները, ի ն չ պ է ս ա ն ո ւ մ է ն մ ի ւ ս ա ս ի ա ց ի ք (թիւրքը, քիւրդը), այլ նորոգում է բնութեան ուժերը“ *)...

Այդ նոյն կարծիքն է (թիւրքերի տնտեսական յետամնացութեան և աւերիչ հակումների մասին), որ այսօր խտացել է մի ընդհանուր ու ծանօթ բառի մէջ — „Paschawirtschaft“ (փաշայական տնտեսութիւն) — մի անարգական բառ, որով արևմտեան ժամանակակից տնտեսագիտութիւնը բնորոշում է քաղաքական և սոցիալական ամէն մի սիստեմ, որ հիմնուած է կամայականութեան, թալանի և աւերածի վրայ...

Այդ աղէտաւոր սիստեմն է, որ միացած կրօնական խորունկ անհամբերողութեան և բարոյական սոսկալի հարուածների ու անարգանքների հետ՝ ծնունդ տուեց XIX դարի ընթացքում թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերի մէջ ապստամբական շարժումների երկայնաձիգ և արիւնոտ շարանը...

*) Քաղ. Լ ի տ տ լ-Բ օ յ ի ռուսերէն աշխատութիւնից. „Ուղևորութիւն եւրոպական և ասիական Թիւրքիոյ մէջ“, 1878 թ. էջ 323—324։

**) *Moltke, Briefe aus der Türkei*, 7-րդ հրատ., էջ 336։

*) Քաղում ենք գերմ. թարգմանութիւնից. „*Die ökonomische Lage der Armenier in Türkei*“։

ՄԱՄՈՒԼԸ ԵՓՐԵՄԻ ՄԱՍԻՆ

„*Times*“ երկարօրէն կանգ է առնում Եփրեմի անձնաւորութեան վրայ, համարում է նրան Պարսկաստանի անցեալ „լաւագոյն յոյսը“։

Այլ և այլ ժամանակներ—ասում է լոնդոնեան մեծ օրգանի թղթակիցը—ես հանդիպել եմ Բ։րիս Սարաֆովին, Սանդանակիին, Սաթթար խանին և ուրիշ ռազմավարների։ Եփրեմը բոլորի մէջ ամենաքաջն է և ամենահրապուրիչը, իր պարզութեամբ և անկեղծութեամբ։

Մի տխուր թիւրիմացութեամբ՝ լրագիրը Եփրեմի մահուան պատճառ է համարում հանգուցեալի ընկերներին։ Ցիշատակում է „Դաշնակցութիւնը“ և նրա ծընէվեան Կոմիտէն։ Նոյն թիւրիմացութիւնը և նոյն անունները կրկնում է Ֆրանկֆուրտի մեծ լրագիրը։ Այդ առթիւ խմբագրութիւնս անմիջապէս մանրամասն հերքում ղրկեց վերոյիշեալ թերթերին *)։ Վերջապէս, ինքը հեռագրական գործակալութիւնը եկաւ հերքելու այդ ակամայ և անհեթեթ մեղադրանքը, հաղորդելով ռազմիկի մահուան ճշմարիտ պարագաները։

„*Frankfurter Zeitung*“, 21 մայիս.

Այն բոլոր դժբախտութիւններին, որոնց վերջին տարիներս ենթարկուեց Պարսկաստանը, մէկն ևս աւելացաւ։ Եփրեմը, ամենագործօն, ամենաձեռնհաս անձնաւորութիւնը, որ նեցուկն էր պարսից կառավարութեան, սպանուեց. Սալար Դովլէի յաղթական արշաւի դէմ իբրև վերջին միջոց՝ ղրկեցին Եփրեմին, որը անցեալ ամառը մի քանի անգամ ջարդել էր և յետ մղել Թեհրան դիմող նախկին շահին։ Եւ նա արդարացրեց իրեն վրայ դրուած յոյսերը, սակայն մարդասպանի ձեռքը ղրկեց Պարսկաստանը այդ վերջին ռազմիկից ևս, որը—նշանակալի հանգամանք է այդ — պարսիկ չէր, այլ քրիստոնեայ հայ.. Իբրև ստրատեգ՝ նա կարողացաւ մեծ կորովով կարգ ու անդորրութիւն սահմանել Թեհրանում։ Երբ նրան կոչում՝ էին պատերազմի դաշտ, նա միշտ պատրաստում էր հապշտապ, արագօրէն։ Ինտելիգենտ և շրջահայեաց առաջնորդ էր, որ օժտել էր իր գնդերը նորագոյն զինաւորութեամբ ու կարգապահութեամբ։ Պարսից կառավարութիւնը չունի իր տրամադրութեան տակ մի ուրիշ սուր, որ կարողանայ իր հմտութեամբ ու հաւատարմութեամբ չափել Եփրեմի հետ... Նրա մահը Պարսկաստանի համար անփոխարինելի կորուստ է։ Դժուար թէ այլ ևս գտնուի մի ուրիշը, որ կարողանայ թուրմը գնել Սալար Դովլէի յառաջխաղաց արշաւի առջև։ Եփրեմի մահով ոչնչացաւ Պարսկաստանի համար և վերջին հնարաւորութիւնը՝ նորէն վերակազմելու և դեթ ժամանակաւորապէս դիմադրելու Ռուսաստանի արշաւանքին։

„*Vossische Zeitung*“, 25 մայիս.

Ամբողջ պարսից ժողովուրդը սուգ է հագել իր հերոսի մահուան առթիւ, որ անգնահատելի ծառայութիւններ է մատուցել Ազատութեան և Սահմանադրութեան։ Պարսիկները պատուաւոր տեղ կը տան նրան՝ իրենց մեծ մարդկանց շարքում։ Նրա անունը յաւէտ կ'ապրի Պարսկաստանի պատմութեան մէջ։

„*Le Siècle*“, 23 մայիս. Ժան Հերբետ, թերթի խմբագրապետը, որ իր արևելեան պտոյտի միջոցին տեսնուել է Եփրեմի հետ, մեծ ոգևորութեամբ է խօսում նրա զինուորական կարողութիւնների մասին.

Ով որ անձամբ ճանաչել է Եփրեմին, ով որ տեսել է, թէ որպիսի տեղ է գրաւել նա նորագոյն Պարսկաստանում, կը հասկանայ անմիջապէս այն անշտկելի կորուստը, որ նրա մահով կրում է խաղաղութեան դատը պարսկական արևելքում։ Մօտ 45 տարեկան, իր կորովի գլխով և յաղթ իրանով նման մեր Օվերնի լեռնականներին, օժտուած առապելական քաջութեամբ և մի հոգեկով, որ կրկնապատկում է այդ քաջութեան արդիւնքը, Եփրեմը իրականացրել է մի հրաշք—նա դարձել է ազգային հերոս իսլամական Պարսկաստանում, մինչդեռ ինքը ոչ պարսիկ է և ոչ իսկ մահմեդական, այլ հայ է, քրիստոնեայ։

Ապա գծելով Եփրեմեան յաղթանակների շարանը՝ Հերբետ ասում է.

Լուրջ և շարունակ աշխատանքի վրայ, չնայեած անողոք հիւանդութեան, նա կենդանի ապացոյց էր, թէ ինչ կարող է անել մի հատիկ մարդ՝ փոխելու համար մէկ ազգի ճակատագիրը։ Եթէ իր հայկական ծագումը չդադարեցրեր իրեն բեղերվի, վերապահ դիրքի և եթէ անգլո-ռուսական քաղաքականութիւնը չ'անդամալուծեր երկիրը վերածնող ուժերը, Եփրեմ կը դառնար իր տեսակի մի կրօմվել կամ մի Բօնապարտ։ Ով որ տեսել է մի քանի տարի առաջ Եփրեմին, Ռուսիայից արտաքսուած, վարպետ-քարտաշի արհեստով Էնզէլիում, իր օրական պարէնը հազիւ հազիւ վաստակելիս—դժուար կը հաւատար իր աչքերին։

Նա այլ ևս չի վերադառնայ Թեհրան յաղթական կամարների տակից և չի գտնի իր քաջարի ամուսնուն, որ այնքան հպարտ էր նրանով...

Նման ներբողներ՝ բազմաթիւ ուրիշ թերթերում, մասնաւորապէս ռուս մամուլի մէջ։

[redacted]

Խորին վշտով իմացանք մեր ընկեր Տիրան Մինասեանի մահը, որ տեղի է ունեցել Փիլիպպէի մէջ։ Կենսագրականը—յաջորդով։

[redacted]

ԼՈՒՐԵՐ

Իտալական և տեղական սոցիալիստ կազմակերպութիւնների նախաձեռնութեամբ՝ դումարուեց Ժընէվի մէջ բազմամարդ միտինգ, բողոքելու համար ափրիկեան պատերազմի դէմ։ Հրաւիրուած էր մասնակցելու և Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Իտալացի հռետորներն էին՝ Դէ Ամբրի և Դէ Ֆալկո։ Ունկնդիրները մեծ մասամբ իտալացիներ էին. նաև բազմաթիւ տեղացի, ռուս, բուլղար, հայ, վրացի, թիւրք ու այլ ուսանողներ։ Խօսք տրուեց ամենից առաջ „Դրօշակ“ի խմբագրութեան ներկայացուցչին, որ ֆրանսերէն և ապա իտալերէն բացատրեց ներկայ պատերազմի ծագումն ու էութիւնը, իտալական բուրժուազիայի ընչաքաղց ախորժակները, օսմանեան կառավարութեան յոռի վարչութիւնը, ծանրացաւ Թիւրքիոյ արդի կացութեան վրայ և մեղակից յայտարարեց Երիտասարդ-Թիւրքիայի իշխող կուսակցութիւնը, որը միահեծան բռնապետութեան շէնքը կործանելուց յետոյ, բացարձակապէս անընդունակ է յայտնուում վերաշինութեան գործի մէջ և ազգերին մշանջենապէս գրգռելով իր տարամերժ, պանթիւրքական քաղաքականութեամբ, յարուցանում է շարունակական դժգոհութիւն ու խռովութիւններ երկրի մէջ և տեղի տալիս արտաքին միջամտութիւնների։

Վերստին յիշեցնում ենք, որ «Դրօշակ»ը պիտի ղրկուի այսուհետև միմիայն կանոնաւոր բաժանորդներին։

Ներկայ համարի ուշացում, խմբագրատան տեղափոխութեան պատճառով։

---

*) „*Times*“-ի խմբագրապետը վերջին պահուն, մի նամակով, ուղղուած մեր խմբագրութեան, բացատրում է, որ այդ ակամայ սխալին տեղիք է տուել Թեհրանի իր թղթակիցը։